Գիրքը հրատարակվել է ԵՀԽ հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամի հովանավորությամբ

ՀՀ դատավորների միությունը շնորհակալություն է հայտնում ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտին, ՀՀ իրավաբանների միությանը, Զարգացման հայկական ինստիտուտին իրենց առաջարկություններով ու դիտողություններով ընտանեկան հանրամատչելի իրավաբանական գրադարանի ստեղծմանն աջակցելու համար

Ընտանեկան հանրամատչելի գրադարանի շարքի մյուս հրատարակություններին կարող եք ծանոթանալ՝ այցելելով ՀՀ դատավորների միության ինտերնետային կայքէջ հետևյալ հասցեներով՝

www.datavor.am
www.judge.am

ASSOCIATION OF JUDGES
OF THE REPUBLIC OF ARMENIA

VAHE YENGIBARYAN
ARTUR CHAKHOYAN

BASICS OF CONFESSION LAW

FAMILY LAW MANUAL

Edited by: **DEACON Artur SARGSYAN**

Lingvo-stylistic editor: **Armine NAZARYAN**

Yerevan
«Antares»
2011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՎԱՀԵ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ
ԱՐԹՈՒՐ ՉԱԽՈՅԱՆ

ՀՈԳԵՎՈՐ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Խմբագիր՝ **Արթուր սարկավագ ՍԱՐԳՍՅԱՆ**

Լեզվաոճական խմբագիր՝ **Արմինե ՆԱԶԱՐՅԱՆ**

Երևան
«Անտարես»
2011

ՀՏԴ 341.231.14
ԳՄԴ 67.91
Ե 472

Տպագրվում է
ՀՀ դատավորների միության խորհրդի որոշմամբ

Ենգիբարյան Վահե, Չախոյան Արթուր
Ե 472 Հոգևոր իրավունքի հիմունքներ/ Վահե Ենգիբարյան, Արթուր Չախոյան; ՀՀ դատավորների միություն; Խմբ.՝ Արթուր սարկավագ ՍԱՐԳՍՅԱՆ .- Եր.: Անտարես, 2011.- 144 էջ:

Ձեռնարկում համակարգված և հանրամատչելի եղանակով ներկայացված են անձի հոգևոր իրավունքներին վերաբերող հիմնահարցերը, ինչպես նաև այս բնագավառում ՀՀ օրենսդրությունը:

ՀՏԴ 341.231.14
ԳՄԴ 67.91

ISBN 978–9939–51–352–2

© ՀՀ դատավորների միություն, 2011
© Արթուր սարկավագ Սարգսյան, 2011
© Ենգիբարյան Վահե, 2011
© Չախոյան Արթուր, 2011

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 10

Գլուխ
Ընդհանուր դրույթներ

§ 1. Կրոնի էությունն ու նշանակությունը 12
§2. Քրիստոնեական դավանանքի էությունը և կառուցվածքը 12
§3. «Քրիստոնեություն» եզրույթի էությունն ու նշանակությունը 15
§4. Եկեղեցական իրավունքի էությունը 17
§5. Թեմը որպես հոգևոր իշխանության վարչատարածքային միավոր 18
§6. Կանոնական գրքեր 21
§7. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին որպես աշխարհի հնագույն քրիստոնեական համայնք 22
§8. Տիեզերական ժողովները և դրանց կողմից ընդունվող որոշումների նշանակությունը 24

Գլուխ
Հայ առաքելական եկեղեցին Քրիստոսի ծննդից մինչև միջնադար

§1. Հայ առաքելական եկեղեցի 28
§2. Հայ առաքելական եկեղեցու հիմնադրումը 29
§3. Հայ առաքելական եկեղեցու ձևավորումը 1–3-րդ դարերում 29

Գլուխ
Հայ առաքելական եկեղեցին միջնադարյան Հայաստանում

§1. Քրիստոնեությունը Հայաստանում որպես պետական կրոն 31
§2. Հայոց եկեղեցին մինչև 7-րդ դարը 32
§3. Հայոց եկեղեցին 7–9-րդ դարերում 34

§4. Հայոց եկեղեցին 9–12-րդ դարերում 35
§5. Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը Կիլիկիայում 36
§6. Ունիթորական շարժումը Հայոց եկեղեցում 37
§7. Հայոց եկեղեցու հոգևոր-մշակութային կյանքը Կիլիկյան թագավորության ժամանակաշրջանում 39
§8. Կաթողիկոսական Աթոռի վերահաստատումն էջմիածնում 40

Գլուխ
Հայ առաքելական եկեղեցին 19-րդ դարից մինչև մեր օրերը

§1. Հայոց եկեղեցին 19-րդ դարում 42
§2. Հայոց եկեղեցին 20-րդ դարում 44
§3. Հայոց եկեղեցին խորհրդային հասարակարգի տարիներին 45
§4. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին մեր օրերում 47

Գլուխ
Հոգևոր իրավունքը Հայաստանի երկրորդ Հանրապետությունում

§ 1. ՀԽՍՀ օրենսդրությունը և եկեղեցի-պետություն փոխհարաբերությունները Հայաստանի երկրորդ Հանրապետությունում 49
§2. Կրոնական միավորումների և հոգևորականների գործունեության սահմանափակումները Հայաստանի երկրորդ Հանրապետությունում 50
§3. «Խղճի ազատության մասին» ՀԽՍՀ օրենքը և այն խախտելու համար նախատեսված պատասխանատվությունը Հայաստանի երկրորդ Հանրապետությունում 50
§4. Կրոնական միավորումների բյուջեի գոյացումը Հայաստանի երկրորդ Հանրապետությունում 53
§5. Ընտանիքում երեխաների կրոնական դաստիարակությունը Հայաստանի երկրորդ Հանրապետությունում 55

Գլուխ
Հոգևոր իրավունքը Հայաստանի երրորդ Հանրապետությունում

§1. ՀՀ օրենսդրությունը և եկեղեցի-պետություն փոխհարաբերությունները Հայաստանի երրորդ Հանրապետությունում 56
§2. «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի դերը հոգևոր իրավունքում 57
§3. «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքի դերը հոգևոր իրավունքում 59
§4. Եկեղեցական գործունեություն 61

Գլուխ
Հայաստանի երրորդ Հանրապետության օրենսդրությունը որպես հոգևոր իրավունքի երաշխիք

§1. ՀՀ Սահմանադրությունը որպես մտքի, խղճի և կրոնի ազատության երաշխիք 63
§2. «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը որպես մտքի, խղճի և կրոնի ազատության երաշխիք 65
§3. «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքը որպես մտքի, խղճի և կրոնի ազատության երաշխիք 69
§4. Կրոնական կազմակերպությունների և պետության հարաբերությունները 72

Գլուխ
Միջազգային օրենսդրությունը որպես հոգևոր իրավունքի երաշխիք

§1. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը որպես հոգևոր իրավունքի երաշխիք 75
§2. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան որպես հոգևոր իրավունքի երաշխիք 77
§3. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը որպես հոգևոր իրավունքի ազատության երաշխիք 78
§4. Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների ապահովման մասին կոնվենցիան որպես հոգևոր իրավունքի երաշխիք 79
§5. Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին Ժնևի կոնվենցիան հոգևոր իրավունքի երաշխիք 82
§6. Ռազմագերիների հետ վարվելակերպի մասին Ժնևի կոնվենցիան որպես հոգևոր իրավունքի երաշխիք 87
§7. Գործող բանակներում վիրավորների և հիվանդների վիճակի բարելավման մասին Ժնևի կոնվենցիան որպես հոգևոր իրավունքի երաշխիք 90

Գլուխ
էկումենիկ շարժում
(էկումենիզմ)

§1. էկումենիզմի հասկացությունը և էկումենիկ շարժման նպատակը..... 93
§2. էկումենիկ շարժման սկզբնավորումն ու զարգացումը Հայաստանում..... 94
§3.Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կազմավորումը..... 96

§4. Եկեղեցիների համաշխարհային խորհրդի դերն ու սկզբունքները 99
§5. Հայ առաքելական եկեղեցու անդամակցումը ԵՀԽ-ին..... 100
§6. Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամի (ԿՍՀ) ստեղծումն ու գործունեության հիմնական ոլորտները 103
§7. ԿՍՀ դերը քաղաքացիական հասարակության և էկումենիկ շարժման մեջ..... 106

Գլուխ
Աղանդավորական շարժում

§1. Աղանդավորական շարժման անցյալն ու ներկան..... 109
§2. Աղանդավորական խմբի էությունը և նպատակները 111
§3. Հակաաղանդավորական պայքարն Արևմուտքում 114
§4. Աղանդավորական շարժումների պատմությունը Հայաստանում և աշխարհում 116

Գլուխ
Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներ, ենթաօրենսդրական ակտեր

§1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշում 119
§2. ՀՀ սահմանադրական դատարանի որոշում 135
§3. Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշում..... 139

ՆԱԽԱԲԱՆ

Մարդկային քաղաքակրթության յուրաքանչյուր դարաշրջան բնորոշվում է յուրահատուկ մի հատկանիշով, որն էլ սովորաբար կիրառվում է հետագայի սերունդների ու մարդկության պատմությունն արձանագրող և ուսումնասիրող մասնագետների կողմից իբրև բնորոշիչ տվյալ ժամանակաշրջանի համար: Ներկայիս դարաշրջանը կարելի է անվանել մադկային իրավունքների ու ազատությունների դարաշրջան, քանզի սկսած դեռևս 20-րդ դարի կեսերից մինչև այսօր մարդու ազատությունը դիտարկվում է որպես հիմնարար սկզբունք, ասել է թե իրավունք, որը մարդուն հատուկ է ի բնե, առանց որի նա չի կարող գոյություն ունենալ որպես մարդկային էակ: Դեռևս երբեք մարդն այսքան ազատ և իրավական իմաստով պաշտպանված չի եղել, քան այսօր՝ ներկայիս քաղաքակիրթ աշխարհում: Սակայն և սրանով հանդերձ երբեք մարդն այսքան մարտահրավերների առաջ կանգնած չի եղել, որքան այսօր, մարտահրավերներ, որոնք ոչ միայն բնական են կամ տեխնածին, այլ նաև հոգեբանական, իրավական, սոցիալական ու կրոնական:

Աստվածաշունչ մատյանը, որ քրիստոնեական արժեհամակարգի, բարոյականության և դավանանքի հիմնական աղբյուրն է, դասվում է աշխարհի հնագույն այն գրքերի շարքում, որոնք իրենց մեջ պարփակում են մարդկության պատմության ընթացքում ձևավորված և զարգացում առած իրավունքի ամբողջական կամ սաղմնային բազմաթիվ դրույթներ: Ավելին, այսօր էլ աշխարհի մի շարք երկրներում օրենքի ուժ ստացած բազում դրույթներ ուղղակի արտահայտողն են Աստվածաշնչյան ճշմարտությունների, ճշմարտություններ, որոնք ի սկզբանե աստվածադիր են, քրիստոնեական: Թվում է, թե միայն «Գիրք գրոց» Աստվածաշունչը երեկ և այսօր բավարար պետք է լինի կարգավորելու քրիստոնյա մարդու կյանքի օրենսդրական սահմաններն ու իրավունքները, սակայն մեր ժամանակներում պատմաքաղաքական իրադարձությունների գերարագ հերթափոխը, ժամանակակից տեխնոլոգիաների սրընթաց զարգացումը և մարդու հարկադիր ադապտացումը այս ամենին հանգեցնում են քրիստոնյա հասարակության հոգևոր-բարոյական խոր ճգնաժամին, ինչը, անխոս, կարող է հանգեցնել մարդու իրավունքների ոտնահարման և կրոնի, դավանանքի ու հավատքի թյուր ըմբռնման ու սխալ կիրառման: Ինչպես ասում է Սուրբ Պողոս առաքյալը՝ «Օրենքը լսողները չեն, որ արդար են Աստծու առաջ, այլ օրենքը կատարողնե՛րը պիտի արդարացվեն» (Հռոմ. 2:13): Արդյունքում, անհրաժեշտություն է առաջ գալիս

պետության ու ժողովուրդների օրենսդրական դաշտում առաջ քաշել մարդու հոգևոր իրավունքը սահմանող, կարգավորող և կյանքի կոչող մի շարք օրենքներ: Այդ օրենքների հանրագումարն այսօր ընդհանուր առմամբ վերնագրվում է որպես «Խղճի և դավանանքի ազատության վերաբերյալ օրենք»:

ՀՀ Դատավորների միության խորհրդի նախաձեռնությամբ հրատարակված սույն աշխատությունը նպատակաուղղված է նախագծելու հայ հասարակության համար դեռևս մշուշոտ և իրավագիտության ասպարեզում քիչ ուսումնասիրված իրավական մի ոլորտի՝ հոգևոր իրավունքի հիմնական սկզբունքերը: Ներկայացնելով հոգևոր իրավունքի հիմունքների ծագման պատմական զարգացման ողջ ընթացքը՝ հեղինակները մատչելի և համակարգված կերպով այն հասցնում են մինչև մեր օրերը, միևնույն ժամանակ հնարավորություն ստեղծելով Հայոց Եկեղեցու անդաստանում գործածված և նաև այսօր կիրառելի կանոնական սկզբունքները համեմատել արդի աշխարհի իրավական փորձառության հետ, դիտարկել դրա թույլ և ուժեղ կողմերը: Այս կերպ «Հոգևոր իրավունքի հիմունքներ» գիրքը արժանորեն կարող է իր տեղը զբաղեցնել ընտանեկան հանրամատչելի գրականության շարքում՝ դառնալով նաև ՀՀ քաղաքացի քրիստոնյայի հոգևոր սպառազինության կարևոր բաղկացուցիչը:

Այս մտածումներով Մեր գնահատանքն ենք բերում գրքի հեղինակներ պարոնայք Վահե Ենգիբարյանին և Արթուր Չախոյանին, ինչպես նաև Արթուր սարկավագ Սարգսյանին՝ խմբագրական աշխատանքները կատարելու համար: Թող Արդարության և Իմաստության Տերը օրհնի Իր զավակներին՝ պարգևելով հարանոր հաջողություններ արդարադատության ոլորտում և աստվածահաճո նմանօրինակ ձեռնարկներում:

ԱՐՇԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Դիվանապետ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի

Գլուխ
Ընդհանուր դրույթներ

§ 1. Կրոնի էությունն ու նշանակությունը

Հայերենում, ըստ Հ. Աճառյանի «Արմատական բառարանի»՝ «կրոն» բառն առաջացել է կիր (կրել) արմատից ու ոն (օն) մասնիկից և ստուգաբանվում է որպես կարգ, կանոն, վարք, օրենք, սովորություն, վարդապետություն, հավատք: Իսկ ըստ «Հայկազյան բառարանի»՝ այն նշանակում է կրել և պահել կամ կրելի օրենք: Ղ. Ալիշանի բացատրությամբ կրոն բառն առաջացել է կիրք բառից՝ իբրև «ներքին զգացում»:

Կրոնը ծագել է մարդու հետ՝ նախնադարյան շրջանում:

Կրոնը կարելի է բնութագրել որպես աշխարհի ճանաչողության հատուկ ձև, որը բնորոշվում է հավատով, այն կարող է ներառել բարոյական նորմերի, վարքի կանոնների և երկրպագության ծեսերի առանձին տարրեր կամ համակարգ: Կրոնը մարդկային հասարակության կազմակերպող և կազմակերպված հավատ է, որպես կազմակերպված երկրպագում բարձրագույն ուժերին: Կրոնը գերբնականը, աստվածությունը ներկայացնող համակարգ է, մարդու և Աստծո միջև հոգևոր հարաբերություն (լատիներենում religon բառի reli արմատը, հենց նշանակում է կապ, հարաբերություն), որն իր արտահայտությունն է գտնում հավատի միջոցով, իսկ այդ հարաբերությունը տեղի է ունենում աստվածապաշտության, ծեսի ընթացքում:

§ 2. Քրիստոնեական դավանանքի էությունը և կառուցվածքը

Դավանանքը բնութագրվում է որպես աստվածային հայտնությամբ տրված և եկեղեցու կողմից սահմանված կրոնական ճշմարտությունների ամբողջություն: Հայերենում դավանանք եզրը որոշ իմաստով համապատասխանում է հունարեն «դոգմա» բառի հոգնակի ձևին, որն սկզբնապես գործածվել է որպես այն, ինչ ճիշտ է թվում: Հայերեն եզրը, ի տարբերություն հունարենի, գործածվում է միայն հավաքական իմաստով: Դավանանքի խնդիրներին առնչվող աստվածաբանության ոլորտը կոչվում է դավանական աստվածաբանություն:

Դավանանքի աղբյուրը եկեղեցու սրբազան ավանդությունն է, որի հեղինակը Աստծո Սուրբ Հոգին է: Աստված ինքն է հայտնել իրեն՝ իր Հո-

գու կենդանի ներգործությամբ, և այդ հայտնությունն արտահայտված է Աստվածաշունչ գրքերով, առաքելական ավանդությամբ, սրբազան ծեսով, եկեղեցու հայրերի և վարդապետների գրվածքներով, Տիեզերական ժողովների սահմանումներով: Այդ հայտնությունը շարունակական է և ոչ թե մեկ անգամ կատարված իրողություն, որի մեջ մուտք գործելու համար անհրաժեշտ է Սուրբ Հոգու հետ կենդանի և գոյաբանական հաղորդակցություն, որի նախահիմքն ուղղափառ դավանությունն է:

Համաձայն Տիրոջ խոսքի՝ ուղղափառ դավանանքն այն ամուր հիմքն է, որի վրա կառուցված է եկեղեցին: Տեսական և գործնական հավատքի ճիշտ համադրությունը, ըստ եկեղեցու հայրերի, հոգևոր կյանքի և փրկության անհրաժեշտ նախապայմանն է:

Դավանաբանության մեջ բարձրագույն հեղինակությունը վերապահված է Տիեզերական ժողովներին, որոնք Սուրբ Հոգու բացառիկ ներգործությամբ սահմանել են Քրիստոսի եկեղեցու ուղղափառ հավատքը: Տիեզերական ժողովների կողմից ընդունվել են, այսպես կոչված, Հավատո հանգանակներ կամ նշանակներ, որոնք Դավանաքի հակիրճ ձևակերպումներ են: Հավատո հանգանակը կոչվում է նաև Հավատամք կամ Խոստովանություն հավատո կամ Դավանություն հավատո: Այս իմաստով դավանանքն ուղղափառ հավատքի խոստովանությունն է, իսկ դավանել նշանակում է ընդունել, խոստովանել և վկայել որպես ճշմարտություն:

Պայքարելով զանազան աղանդավորական շարժումների դեմ՝ եկեղեցին մշտապես կարիք է ունեցել հաստատել հավատացյալ գիտակցությունը: Եկեղեցու հայրերը և վարդապետներն ավանդել են դավանանքի մեծածավալ ժառանգություն՝ ուղղափառ հավատքն ուսուցանելու, բացատրելու, լուսաբանելու և մեկնելու համար: Այդ ժառանգությունը Սուրբ Հոգով տրված սրբազան ավանդության անբաժանելի մասն է:

Հայ եկեղեցու դավանաբանության կարևորագույն աղբյուրներից են եկեղեցու սուրբ հայրերի՝ Դիոնիսիոս Արիոպագացու, Աթանաս Ալեքսանդրացու, Եփրեմ Ասորու, Կյուրեղ Երուսաղեմցու, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նազիանզացու, Գրիգոր Նյուսացու, Եպիփան Կիպրացու, Հովհան Ոսկեբերանի, Կյուրեղ Ալեքսանդրացու դավանանքի երկերը, որոնց ավանդների հիման վրա զարգացել և ձևավորվել է հայ դավանանքի միտքը:

Կարևոր աղբյուր է նաև Տիմոթեոս Կուզի «Հակաճառութիւն...» երկը, որն զգալի ազդեցություն է թողել հայ դավանանքի մտքի ձևավորման վրա: Նշանավոր են «Կնիք հավատո» և «Գիրք թղթոց» ժողովածուները:

Հայ եկեղեցու դավանության համակարգը վերջնականապես բյուրեղացել է Հովհաննես Գ Օձնեցու, Խոսրովիկ Թարգմանչի, Ստեփանոս Սյունեցու, Գրիգոր Նարեկացու, Անանիա Սանահնեցու, Պողոս Տարոնացու, Հովհաննես Սարկավագի, Ներսես Շնորհալու, Մխիթար Գոշի, Վարդան Արևելցու, Մխիթար Սասնեցու, Կիրակոս Երզնկացու, Ստեփանոս Օրբելյանի, Եսայի Նչեցու, Հովհան Որոտնեցու, Գրիգոր Տաթևացու աշխատությունների շնորհիվ:

Հայ դավանաբանական մտքի զարգացման պատմության մեջ առանձնահատուկ դեր է ունեցել 726թ. Մանազկերտի եկեղեցական ժողովը, որի ընդունած նզովքներն ուղղափառ հավատքի սահմանումներ են ընդհակառակից:

Հայ եկեղեցում ծիսական կիրառություն ունի երեք Հանգանակ, որոնք հակիրճ ներկայացնում են հայ հավատքի կարևորագույն սկզբունքները: Առաջինը կոչվում է Նիկիական, սակայն իրենից ներկայացնում է Նիկիա Կ. Պոլսյան մի խմբագրություն: Երկրորդը Գրիգոր Տաթևացու խմբագրած հավատքի խոստովանությունն է: Երրորդը Մկրտության ծեսի մեջ գործածվող համառոտ տարբերակն է:

Դավանության աղերսներով լի են նաև Հայ եկեղեցու ծիսամատյանները՝ Շարակնոցը, Ժամագիրքը, Մաշտոցը և Խորհրդատետր-Պատարագամատույցը:

Հայ եկեղեցու դավանությունն ունի հետևյալ կառույցը.

1. Աստված,
2. Արարչագործություն,
3. Փրկագործություն:

Փրկագործությունն իր հերթին բաժանվում է երեք հիմնական մասերի.

1. քրիստոսաբանություն,
2. Սուրբ Հոգու տնօրինություն և եկեղեցի,
3. վախճանաբանություն:

Դավանության բուն առարկան մեկ և միակ Աստվածն է. «Հավատում եմ մեկ Աստծո...» արտահայտությամբ է սկսվում Հավատո հանգանակը, որը դավանության առաջին և հիմնարար պնդումն է: Աստծո հետ փոխհարաբերության մեջ մտնելու և նրան ճանաչելու ուղին հավատքն է: Ըստ եկեղեցու վարդապետների՝ հավատքն Աստծու պարգևած շնորհ է, որը զորացնում է հոգին՝ օժտելով բարձրագույն ճանաչողության կարողությամբ, հաղորդակից դարձնելով արարչական սահմաններից դուրս գտնվող աստվածային ոլորտին:

Աստծո գոյությունը, էությունը և ստորոգելիներն անդրանցական են արարչության նկատմամբ և, ըստ Դիոնիսիոս Արեոպագացու՝ «գերագույն լույսի պատճառով ծածկված են թաքնախորհուրդ լռության մեգով: Աստված ինքնագոյ է, այսինքն՝ նրա գոյությունը պայմանավորված չէ այլ մեկով, չունի ժամանակային պատճառականություն և ենթակա չէ փոփոխության»:

§ 3. «Քրիստոնեություն» եզրույթի էությունն ու նշանակությունը

«Քրիստոնեություն» բառն առաջացել է հունարեն «օծյալ» բառից: Այն հուդայականության և իսլամի հետ մտնում է աբրահամական կրոնների խմբի մեջ, իսլամի և բուդդայականության հետ մեկտեղ՝ երեք համաշխարհային կրոնների թվի մեջ:

«Քրիստոնեություն» բառն առաջին անգամ օգտագործվել է Իգնատիոս Անտիոքացու կողմից՝ Մագնեզիայի, Հռոմի և Ֆիլադելֆիայի եկեղեցիներին հղած նամակներում: Քրիստոնեությունը կարելի է բնութագրել որպես՝

- միաստվածություն՝ օրինակարգված Աստվածության միության մեջ դրսևորվող դեմքերի՝ Երրորդության (Հայր Աստված, Որդի Աստված, Սուրբ Հոգի Աստված) վերաբերյալ վարդապետությամբ,
- հասկացություն Աստծո՝ ոչ միայն որպես բացարձակ Հոգու, բացարձակ Բանականության և Ամենազորության, այլև բացարձակ Բարու՝ սիրո մասին,
- վարդապետություն մարդկային անձի՝ իբր Աստծո պատկերով և նմանությամբ արարված անմահ հոգևոր գոյության,
- բոլոր մարդկանց՝ Աստծո առջև հավասար լինելու, ազատ կամքի և աստվածային շնորհի միջոցով Աստծուն միանալու, աստվածային կատարելությանը հասնելու և հավիտենական երանությունը վայելելու վերաբերյալ,
- վարդապետություն նյութի նկատմամբ հոգու լիակատար գերիշխանության մասին: Աստված է նյութական աշխարհի Արարիչը, մարդուն վերապահված է տերը լինել նյութական արարչության:

Քրիստոնեությունը Հայաստան է մուտք գործել I դարում՝ Հիսուս Քրիստոսի առաքյալներ Թադեոսի և Բարդուղիմեոսի քարոզչությամբ, որոնք Հայ առաքելական եկեղեցու կողմից հետագայում հռչակվեցին Հայոց առաջին լուսավորիչներ:

Մեծ Հայքը Թադեոս առաքյալի անունով միջնադարում հաճախ անվանվում էր «Թադեի վիճակ» կամ «Թադեի աթոռ»: Հայաստանում կազմավորվում են քրիստոնեական համայնքներ (եկեղեցիներ), կարգվում նոր հավատի սպասավորներ, եպիսկոպոսներ, որոնք կապեր են հաստատում հարևան երկրների, հատկապես Միջագետքի, Ասորիքի, Կապադովկիայի հավատակիցների, Ալեքսանդրիայի, Սամոսատի, Եդեսիայի, Անտիոքի, Կեսարիայի աթոռների և համայնքների հետ: Պատմական աղբյուրները հիշատակում են Ծոփքի Մեհրուժան եպիսկոպոսի անունը, ով III դարի կեսին նամակագրական կապ է ունեցել Ալեքսանդրիայի Դիոնիսիոս պատրիարքի հետ: II–IV դդ. Հայաստանում նոր հավատի բազմաթիվ հետևորդներ՝ Ոսկյանք, Սուքիասյանք, Սանդուխտ արքայադուստր, Գայանյան կույսեր, Հռիփսիմյան կույսեր և այլն, հալածանքի զոհ են դարձել՝ հռչակվելով Հայ եկեղեցու առաջին սրբեր ու նահատակներ: 301 թվականին՝ հայոց Տրդատ III Մեծ թագավորի օրոք, քրիստոնեությունը պաշտոնապես հռչակվել է Մեծ Հայքի թագավորության պետական կրոն և սկսել բռնի կերպով տարածվել ամբողջ Մեծ Հայքի տարածքում: Քրիստոնեության քարոզումն ընթանում էր դաժան բռնություններով, նախկին հավատքի հետևորդների դաժան սպանություններով ու մշակութային արժեքների կործանմամբ: Գրիգոր Լուսավորիչը, դառնալով առաջին քահանայապետ, շարունակել է Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների գործը և ապահովել Հայոց առաքելահաստատ Աթոռի ժառանգականությունն ու հարատևությունը: Հայաստանը դարձել է կենտրոնատեղի՝ խթանելով քրիստոնեության տարածումը Վրաստանում, Աղվանքում, Հյուսիսային Կովկասում:

Քրիստոնեությունը, նախկին մշակութային արժեքների հիման վրա, նպաստել է հայ հոգևոր մշակույթի վերելքին ու հետագա զարգացմանը, մայրենի լեզվի և գրականության պահպանմանն ու ծաղկմանը, ազգային ինքնագիտակցության զարթոնքին, համամարդկային մշակույթին և քաղաքակրթությանը հայ ժողովրդի բերած ավանդին, ինչպես նաև երկար դարեր համախմբել է ժողովրդին, եկեղեցու շնորհիվ միմյանց հետ կապել ազգի տրոհված հատվածները:

§ 4. Եկեղեցական իրավունքի էությունը

Որպես «եկեղեցական իրավունք» հասկացության հոմանիշ կիրառվում են նաև «կանոնական իրավունք», «եկեղեցական օրենսգիտություն» բառակապակցությունները:

Եկեղեցական կամ կանոնական իրավունքը բնութագրվում է որպես եկեղեցու անդամների՝ միմյանց և եկեղեցու հետ ունեցած կանոնական հարաբերությունների և նորմերի, իրավունքների ու պարտավորությունների համակցություն, եկեղեցու կարգուկանոնի, վարչական, կազմակերպչական, բարոյակրթական և ուղղիչ միջոցների ամբողջություն:

Արտաեկեղեցական իմաստով եկեղեցական իրավունքն այն օրենքների և սահմանումների ամբողջությունն է, որով որոշվում է եկեղեցու հարաբերությունն այլ մարմինների հետ (պետություն, այլ եկեղեցիներ, կազմակերպություններ և այլն):

Եկեղեցական իրավունքով են կարգավորվել նաև քաղաքացիական-իրավական, մասնավորապես՝ ամուսնաընտանեկան հարաբերությունները:

Եկեղեցու սահմանած ոչ բոլոր պարտականություններն են իրավական բնույթի: Աղոթելու, ապաշխարելու, մարդու վրա խորհուրդների ներգործությունը և ներանձնական այլ պարտավորություններ կրոնաբարոյական են և իրավաբանական սահմանումներով չեն որոշվում:

Սակայն խորհուրդների գործադրությունը կատարվում է արտաքին երևույթներով և ծիսակատարությամբ, որոնք ենթակա են կանոնակարգման: Եկեղեցու բարոյական օրենքներն իրենց մեջ ամփոփում են քրիստոնեության ընդհանուր և մնայուն գաղափարները, իսկ եկեղեցական իրավունքը և եկեղեցական կանոնները շոշափելիորեն արտահայտում են այդ գաղափարները որոշակի արտաքին ձևերով՝ դրանք հարմարեցնելով կյանքի և ժամանակի պայմաններին:

Արևմտյան Եվրոպայում կանոնական իրավունքի առաջին համակարգումը ձեռնարկվել է XII դարում՝ Բոլոնիայում, հետագայում, դրա հիման վրա, լրացված և մշակված հրատարակվել է 1582-ին՝ Հռոմում (Corpus juris canonici):

Արևմուտքում կանոնական իրավունքի հասկացությունը չի համապատասխանել հույների ընկալումներին: Corpus juris canonici-ն բովանդակել է հոգևոր իշխանության բոլոր իրավական որոշումները՝ թե՛ եկեղեցական, թե՛ քաղաքացիական: Իսկ հույների մոտ կանոնական իրա-

վունքն ընկալվել է որպես միայն եկեղեցավարչական կարգադրությունների, հրահանգների ամբողջություն, որը չի ներառում եկեղեցու աշխարհական անդամների քաղաքացիական հարաբերությունները:

Հայաստանում եկեղեցական իրավունքն առաջին անգամ համակարգել է Հովհաննես Գ Օձնեցին՝ կազմելով առաջին կանոնագիրքը՝ «Կանոնագիրք Հայոց»-ը:

Հայ իրականության մեջ կանոն բառը վերաբերում է եկեղեցական հրահանգներին և օրենքներին, նաև կաթողիկոսների այն կոնդակներին, որոնք զուտ եկեղեցական հրահանգներ են ամփոփում և պարտադիր նշանակություն ունեն, ինչպես, օրինակ, Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցու 1868-ի «Կանոնական կոնդակը»:

Հայ եկեղեցական իրավունքի աղբյուրները բաժանվում են 2 մեծ խմբի՝ ընդհանուր և մասնավոր կամ ազգային: Ընդհանուր են այն աղբյուրները, որոնք ընդունում են բոլոր եկեղեցիները՝ Սուրբ Գիրք, ավանդություն, առաքելական կանոններ, Տիեզերական ժողովների, եկեղեցու հայրերի կանոններ: Մասնավոր աղբյուրներն ազգային եկեղեցական ժողովների և Հայ եկեղեցու սուրբ հայրերի կանոններն են, կաթողիկոսների կարգադրությունները, կանոնագրքերը: Որոշակի ժամանակաշրջանի համար եկեղեցական իրավունքի աղբյուր կարող են դիտվել նաև պետական օրենքներն ու կանոնադրությունները, որոնք սահմանվել են գերիշխան պետության միջամտությամբ: Հայոց համար այդպիսիք են «Պոլոժենիեն» և Ազգային սահմանադրությունը:

§ 5. Թեմը որպես հոգևոր իշխանության վարչատարածքային միավոր

«Թեմ» նշանակում է վիճակ, եպիսկոպոսություն, առաջնորդություն, Հայաստանյայց առաքելական եկեղեցու հոգևոր վարչատարածքային միավոր:

IV–V դդ. Հայ եկեղեցու հոգևոր-վարչական սահմանները հիմնականում համապատասխանել են Հայաստանի վարչաքաղաքական սահմաններին: Թեմերի առաջին տարատեսակները Հայաստանում ձևավորվել են վաղ քրիստոնեական համայնքների (ծխերի) հիման վրա: IV դ. սկզբին Գրիգոր Ա Լուսավորիչը Հայաստանի գավառներում և նահանգներում հիմնել է առաջին թեմերը՝ որպես եպիսկոպոսություններ, տեսչություններ, հովվություններ և վերակացություններ, դրանց գլուխ կարգել առաջնորդների, որոնք կոչվել են, համապատասխանաբար՝ եպիս-

կոպոս, տեսուչ, հովիվ, վերակացու: «Թեմ» անվանումն առաջացել է VII դարում՝ Բյուզանդական կայսրության արևելյան նահանգների վարչական միավորների՝ թեմերի անունից: Հայ եկեղեցու վարչական միավորների բոլոր տարատեսակները կոչվել են թեմեր:

Թեմերը գլխավորել են Հայոց կաթողիկոսի կոնդակով նշանակված արքեպիսկոպոսները կամ եպիսկոպոսները՝ տեղերում տնօրինելով հոգևոր, կրթական, մշակութային, անգամ հասարակական, իրավաքաղաքական խնդիրներ: X դարում Հայոց կաթողիկոսությանը ենթակա թեմեր գործել են նաև Հայաստանից դուրս:

Խաչիկ Ա Արշարունեցի կաթողիկոսը (973–992) եպիսկոպոսական թեմեր է հաստատել նաև Անտիոք, Տարսոն, Տրայանուպոլիս քաղաքներում: Հայ եկեղեցու վարչական սահմաններն արդեն որոշվել են ոչ թե քաղաքական, այլ դավանական բաժանումով: Անկախ բնակության վայրից՝ Հայ եկեղեցուն են ենթարկվել բոլոր հակաքաղկեդոնական հայերը:

Թեմերը եղել են ավատական կենտրոններ և սոցիալ-քաղաքական մեծ ուժ են ներկայացրել: Թեմը կրել է այն երկրամասի կամ բնակավայրի անունը, որտեղ գտնվել է թեմակալ առաջնորդի աթոռանիստը: Բացի Սյունյաց թեմից, որը ճանաչվել է որպես մետրոպոլիտություն, Հայոց բոլոր թեմերը եպիսկոպոսություններ են եղել: Ուշ միջնադարում պատմաքաղաքական հանգամանքների բերումով որոշ թեմեր վերացել են, մյուսների տրոհմամբ կամ միավորմամբ ստեղծվել են նորերը: Մեծ թեմերը տրոհվել են, աստիճանաբար նոր տարածք և ազդեցություն ձեռք բերել և վերածվել ինքնուրույն եկեղեցավարչական միավորների: Ըստ այդմ՝ Հայ եկեղեցում առաջացել են թեմերի նոր տարատեսակներ՝ եպիսկոպոսական, տեսչական և վանական, եպիսկոպոսական թեմական տեսչություններ, եպիսկոպոսական վիճակ, վիճակ և տեսչական վիճակ, առաջնորդություն, պատվիրակ-առաջնորդություն, առաջնորդական փոխանորդություն, տեսչություն, վիճակային և վանական տեսչություն, փոխանորդություն, վիճակավոր հովվություն և հովվություն:

XIXդ. կեսին արդեն սրանց մեծ մասն ստացել է «առաջնորդություն» ընդհանուր անվանումը, որը նախկինում հատուկ էր միայն վանահայրերին՝ վանքերի առաջնորդներին:

XIXդ. 2-րդ կեսից թեմերի այս տարատեսակներից առավել խոշորներում ստեղծվել են հոգևոր և աշխարհիկ անդամներից կազմված թեմական և հոգևոր խորհուրդներ՝ առաջնորդի գլխավորությամբ: Թեմերի կազմավորումն ընթացել է 1860 թվականի Ազգային սահմանադրության սկզբունքներով: Թեմի կառավարումը կենտրոնացած է առաջնորդի ձեռ-

քում, որին ընտրում է թեմական ներկայացուցչական ժողովը կամ նշանակում Գերագույն հոգևոր իշխանությունը: Թեմի տարածքում առաջնորդն իրավասու է (եթե եպիսկոպոս է) քահանայական ձեռնադրություններ կատարել, տնօրինել եկեղեցու դատական հարցերը, լուծել ամուսնության և ամուսնալուծության խնդիրները, մշակութակրթական գործունեություն ծավալել, թեմական ժողով հրավիրել և այլն: Թեմի կառավարումն իրականացնելու նպատակով առաջնորդը կարող էր օգնական կամ փոխանորդ նշանակել, որոնք հաճախ գավառներում, գյուղերում կատարել են նաև թեմական վերահսկիչի դեր (անցյալում կոչվել են քորեպիսկոպոսներ):

Հայ եկեղեցու թեմական առաջնորդներ կարող են լինել ոչ միայն եպիսկոպոսները, այլև ծայրագույն վարդապետներն ու վարդապետները, որոնք լիակատար իրավասությամբ կրում են առաջնորդի պաշտոնը:

Տարբեր ժամանակաշրջաններում փոխվել են Հայ եկեղեցու թեմերի քանակը, անվանումը, առաջնորդանիստ կենտրոնը: Թեմերն ունեցել են կառավարման անկախ կամ կիսանկախ վիճակ:

Ներկայումս Հայաստանյայց առաքելական եկեղեցին թեմեր ունի ոչ միայն Հայաստանի տարածքում, այլև սփյուռքի համայնքներում: Թեմեր ունի նաև Հայ եկեղեցու Կիլիկիո աթոռը: 1996 թվականի թեմական բաժանմամբ Հայ եկեղեցում ստեղծվել է վարչատարածքային նոր դրություն: Ներկայումս Հայաստանի Հանրապետության տարածքում գործում են. Արարատյան հայրապետական, Շիրակի, Արմավիրի, Գեղարքունիքի, Սյունյաց, Արագածոտնի, Գուգարքի, Կոտայքի, Տավուշի, Վայոց Ձորի թեմերը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում՝ Արցախի թեմը: Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործում են Վրաստանի, Նոր Նախիջևանի և Ռուսաստանի, Հարավային Ռուսաստանի, Ուկրաինայի, Ատրպատականի, Թեհրանի, Սպահանի, Եգիպտոսի (ընդգրկում է Եթովպիայի և Սուդանի հոգևոր հովվությունները, Հարավային Աֆրիկայի ծուխը), ԱՄՆ-ի Արևելյան, ԱՄՆ-ի Արևմտյան, Արգենտինայի, Բրազիլիայի, Ուրուգվայի, Կանադայի, Իրաքի, Ավստրալիայի և Նոր Զելանդիայի, Անգլիայի, Հունաստանի, Ռումինիայի, Բուլղարիայի, Գերմանիայի, Շվեյցարիայի թեմերը, Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակությունը, որն ընդգրկում է Փարիզի, Մարսելի, Լիոնի շրջանները, Հոլանդիայի, Բելգիայի, Իտալիայի հոգևոր հովվությունները, Ալբանիայի համայնքը, Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակությունը, որն ընդգրկում է Ավստրիայի և Շվեդիայի հոգևոր հովվությունները, Նորվեգիայի, Ֆինլանդիայի և Դանիայի հա-

մայնքները, Հնդկաստանի և Ծայրագույն Արևելքի հայրապետական պատվիրակությունը, որն ընդգրկում է Կալկաթայի հոգևոր հովվությունը, Ծայրագույն Արևելքի հայ համայնքները:

§ 6. Կանոնական գրքեր

Կանոնական գրքերը, ի տարբերություն մերժված, անհարազատ, անկանոն գրքերի, Աստվածաշնչի՝ եկեղեցու կողմից ընդունված և վավերացված գրքեր են: Հին և Նոր կտակարանների Կանոնական գրքերը կազմում են Աստվածաշնչի Կանոնը:

Աստվածաշնչի գրքերի մինչմեսրոպյան հայկական կանոնի մասին ստույգ քիչ բան է հայտնի: Կանոնական գրքերի որոշ ցուցակներ Հայ եկեղեցուն ծանոթ են եղել նախքան գրերի գյուտը և Աստվածաշնչի թարգմանությունը: Հայերեն թարգմանության Աստվածաշնչի Կանոնական գրքերի առաջին ցանկը տվել է Կորյունն իր «Վարք Մաշտոցի» երկում:

Նրանից հետո Հին և Նոր կտակարանների Կանոնական գրքերի ցանկերի հանդիպում ենք տարբեր հեղինակների մոտ: Հայ եկեղեցում առաջին պաշտոնական կանոնը սահմանել է 768-ի Պարտավի եկեղեցական ժողովը՝ Սիոն Ա Բավոնեցու ձեռամբ: Ժողովի 23-րդ որոշումը իբրև կանոնական՝ հիշատակում է Հին կտակարանի 37 գիրք: Նոր կտակարանի գրքերը չեն հիշատակվում: Ըստ Մ. Օրմանյանի՝ մեզ է հասել Պարտավի ժողովի որոշման միայն պատառիկը, որը բավարար չէ ճիշտ պատկերացում կազմելու Հայոց մեջ այդ ժամանակ ընդունված Կանոնական գրքերի մասին: Դարերի ընթացքում Կանոնական գրքերի ցուցակը կրել է որոշ փոփոխություններ: Ներկայիս հայկական կանոնն ընդգրկում է 75 գիրք (Հին Կտակարանիէ 48, Նոր Կտակարանի 27 գիրք):

Աստվածաշնչի Յոթանասնից հունարեն թարգմանության բնագիրը, բացի 39 Կանոնական գրքերից, որոնք կազմում են եբրայական կանոնը, ընդգրկել է նաև, այսպես կոչված՝ երկրորդականոն գրքերը: Երկրորդականոն են այն գրքերը, որոնք թեև աստվածաշունչ չեն, սակայն որպես ոչ մերժելի, բարեպաշտական գրություններ հանձնարարելի են ընթերցման և հավատի շինության համար: Հայկական երկրորդականոն գրքերը թվով ինն են. Եզրասի Ա, Հուդիթ, Տոբիթ, Մակաբայեցիներ Ա, Բ, Գ, Իմաստություն Սողոմոնի, Սիրաք, Բարուք, ինչպես նաև Դանիելի և Եսթերի գրքերի այն մի քանի հատվածները, որոնք բացակայում են եբրա-

յական բնագրում: Երկրորդականոն այս գրքերից տարբերելու համար Հին կտակարանի 39 աստվածաշունչ գրքերը կոչվում են նաև նախականոն: Դրանք են՝ Ծննդոց, Ելք, Ղևտական, Թվեր, Երկրորդ օրենք, Հեսու, Դատավորներ, Հռութ, Ա, Բ, Գ, Դ Թագավորություններ, Ա, Բ Մնացորդաց, Բ Եզրաս, Նեեմի, Եսթեր, Սաղմոս, Առակներ, Ժողովող, Երգ երգոց, Հոբ, Եսայի, Օսեե, Ամոս, Միքիա, Հովել, Աբդիու, Հովնան, Նավում, Ամբակում, Սոփոնիա, Անգե, Զաքարիա, Մաղաքիա, Երեմիա, Ողբ, Դանիել, Եզեկիել:

§ 7. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին որպես աշխարհի հնագույն քրիստոնեական համայնք

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին (Հայ առաքելական եկեղեցի, Հայաստանյայց եկեղեցի, Հայ եկեղեցի, Հայոց եկեղեցի) հայ ժողովրդի ազգային եկեղեցին՝ որի կենտրոնը ՀՀ Վաղարշապատ քաղաքի Ս. Էջմիածնի վանքն է (Մայր Աթոռ Ս. Էջմիածին):

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին մեկ ամբողջական միություն է, որի գլուխը, եպիսկոպոսապետն ու բարձրագույն հոգևոր պետը կաթողիկոսն է (Ծայրագույն պատրիարք և կաթողիկոս Ամենայն Հայոց): Եկեղեցու հոգևոր և նվիրապետական գերագույն իշխանությունը Ամենայն հայոց կաթողիկոսությունն է: Հայ եկեղեցին առաքելական է կոչվում, որովհետև այն հիմնադրել են Հիսուս Քրիստոսի առաքյալներ Թադեոսը և Բարդուղիմեոսը, որոնք Հայաստանում առաջինն են քարոզել քրիստոնեությունը և այստեղ էլ նահատակվել: Նրանք կոչվում են «Առաջին Լուսաւորիչք Հայաստանեայց»: Այդ ժամանակ է քրիստոնեությունը Ասորիքից ու Կապադովկիայից մուտք գործել Հայաստան և սկզբնապես տարածվել Մեծ Հայքի թագավորության երկրամասերում ու գավառներում: Քրիստոնեության քարոզչությունը ժողովրդի ամենատարբեր խավերի, այդ թվում՝ արքունական ընտանիքի անդամների շրջանում առաջին նորադարձ քրիստոնյաների (Ոսկյանք, Սուքիասյանք, Սանդուխտ արքայադուստր և այլք) նահատակությունների, քրիստոնեական համայնքների հիմնումը, մատուռների և եկեղեցիների, վկայարանների կառուցումը նպաստավոր պայմաններ են ստեղծել Հայոց առաջին հայրապետ Գրիգոր Ա Լուսավորչի համար՝ երկրում քրիստոնեության արմատավորման, հեթանոսության դեմ պայքարի, առաջին թեմերի հիմնման և Հայ եկեղեցու կազմակերպման գործում: 301 թվականին, Հայոց Տրդատ Գ թագավորի օրոք, քրիստոնեությունը պաշտոնա-

պես հռչակվել է Մեծ Հայքի թագավորության պետական կրոն: Այդ թվականը համարվում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պաշտոնական հիմնադրման տարեթիվ:

Հայաստանում քրիստոնեության տարածումը և որպես պետական կրոն ընդունելը երկիրը քաղաքակրթության նոր մակարդակի է հասցրել. նախ՝ բարեփոխիչ նշանակություն է ունեցել ժողովրդի կյանքում ու կենցաղում, ապա պայմանավորել պետության արտաքին քաղաքացիական հարաբերությունները, ազգային մշակույթի կողմնորոշումը, հայի անհատական և ազգային աշխարհընկալումն ու աշխարհայացքը:

Մինչև 368 թվականը Հայոց կաթողիկոսները ձեռնադրվել են Կեսարիայում: Պապ թագավորի հատուկ կարգադրությամբ Հայոց կաթողիկոսներն սկսել են ձեռնադրվել Հայաստանում:

303 թվականին Վաղարշապատ մայրաքաղաքում կառուցվել է էջմիածնի Մայր տաճարը: Այն դարձել է Հայոց կաթողիկոսների գահանիստը, որը, սակայն, պատմական պայմանների բերումով բազմիցս տեղափոխվել է: 325 թվականին Նիկիայի Ա տիեզերական ժողովին մասնակցել է Գրիգոր Ա Լուսավորչի որդի Արիստակեսը, որը հոր մահից հետո դարձել է կաթողիկոս: Նա իր հետ Հայաստան է բերել և Գրիգոր Ա Լուսավորչին ներկայացրել ժողովի ընդունած դավանաբանական բանաձևը՝ Նիկիական Հավատո հանգանակը և 20 կանոնները: Հայ եկեղեցու դավանանքն ու վարդապետությունը հիմնված են Սուրբ Գրքի, սրբազան ավանդության, Նիկիայի, Կ. Պոլսի, Եփեսոսի տիեզերական ժողովների, Հայ եկեղեցու ժողովների ու վարդապետների, եկեղեցու հայրերի հաստատած կանոնների և ուսուցումների վրա:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի առաջին բարենորոգիչը Ներսես Ա Մեծ կաթողիկոսն էր: 356 թվականին նրա նախաձեռնությամբ գումարվել է Աշտիշատի ժողովը, որտեղ ընդունվել են կազմակերպչական, բարեսիրական աշխատանքներին, ինչպես նաև դավանական և ծիսական հարցերին վերաբերող որոշումներ: Ներսես Ա Մեծը պայքար է ծավալել պարսկական ազդեցության տարածման դեմ, ոչնչացրել զրադաշտական ատրուշաններն ու մոգության դպրոցները, արգելել պարսկերենի ուսուցումը, պայքարել հեթանոսական սովորույթների դեմ, ձեռնամուխ եղել Հայաստանում քրիստոնեության ամրապնդման գործին: Նա բացել է դպրոցներ, որբանոցներ, հիվանդանոցներ, անկելանոցներ, աղքատանոցներ և այլ հաստատություններ, վերակառուցել մի շարք վանքեր ու եկեղեցիներ, կարգավորել Հայ եկեղեցու ժամասացությունը, եկեղեցական տոները:

§ 8. Տիեզերական ժողովները և դրանց կողմից ընդունվող որոշումների նշանակությունը

Տիեզերական ժողովը քրիստոնեական եկեղեցիների բարձրաստիճան հոգևորականության համընդհանուր (տիեզերական, ընդհանրական) եկեղեցական ժողով է, որի ընդունած որոշումները պարտադիր է համարում ողջ Ընդհանրական եկեղեցին: Ի տարբերություն տեղական ժողովների, որոնք գումարվել են արդեն II դարից, տիեզերական ժողովներն սկսել են հրավիրվել քրիստոնեությունը Հռոմեական կայսրության կողմից պաշտոնապես ճանաչվելուց հետո: Հրավիրվել են հռոմեական, ապա՝ բյուզանդական կայսրերի հրամանով, ովքեր հաճախ նախագահել են այդ ժողովները, և նրանց համաձայնությամբ ու հավանությամբ է հաղթանակել այս կամ այն վարդապետությունը: Տիեզերական ժողովներ հրավիրվել են այն ժամանակ, երբ Ընդհանրական եկեղեցու միասնությանը վտանգ է սպառնացել, և կրոնական վեճերը դարձել են սպառնալիք նաև կայսրության ամբողջականության համար:

Տիեզերական ժողովները նվիրված են եղել հիմնականում դավանության, հավատքի մաքրության և ուղղափառության պաշտպանության, աղանդավորների դեմ պայքարի խնդիրներին: Քննարկվել են նաև պաշտամունքի, եկեղեցու բարեկարգությանը վերաբերող հարցեր, որոնք ստացել են կանոնական իրավունք: Տիեզերական ժողովին մասնակցել են ոչ միայն եպիսկոպոսներ, այլև՝ երեցներ, քահանաներ, սարկավագներ, որոնք, սակայն, չեն ունեցել վճռական ձայնի իրավունք, այլ հանդես են եկել որպես եպիսկոպոսների օգնականներ կամ խորհրդականներ:

Տիեզերական ժողովները եկեղեցու նկատմամբ պետության գերիշխանության և եկեղեցու գործերին նրա միջամտության վառ դրսևորումն էին: V դ. եկեղեցական պատմիչ Սոկրատ Սքոլաստիկոսը գրել է. «Այն ժամանակվանից, երբ կայսրերը դարձան քրիստոնյա, եկեղեցու գործերը դարձան նրանցից կախված և նրանց կամքով էին գումարվում մեծ ժողովները»:

Տիեզերական ժողովի որոշումները բարձրացվել են պետական օրենքի աստիճանի: «Դադարիր Աստծո Որդու մասին մտածել այնպես, ինչպես դու ես մտածում», այսինքն՝ Քրիստոսին վերաբերող որոշում կարող էր կայացնել միայն Տիեզերական ժողովը, որը հասցվել էր պաշտոնական դավանանքի աստիճանի և վայելել պետական պաշտպանություն: Այդպես ստեղծվել է դոգման՝ ձևակերպված եկեղեցու պաշտո-

նական բանաձևումներով, և դրանից ամեն մի շեղում հայտարարվել է հերետիկոսություն:

Ժողովների տիեզերական կոչվելու, հրավիրման, եկեղեցիների պարտադիր մասնակցության, որոշումների վավերացման հարցերը կանոնացված էին: Ոչ մի ժողովի տիեզերականություն ի սկզբանե երաշխավորված և որոշված չի եղել, այսինքն՝ հաճախ ժողովները տիեզերական են հռչակվել ոչ թե անմիջապես, այլ ավելի ուշ, ինչպես, օրինակ, Կ. Պոլսի 381 թվականի Բ և 553 թվականի Ե ժողովները: Եվ հակառակը. կան ժողովներ, որոնք նախապես գումարվել են որպես տիեզերական, սակայն չեն արժանացել նման տիտղոսի, օրինակ Հռոմի 341 թվականի, Սարդիկայի 347 թվականի Բ, Եփեսոսի 449 թվականի Բ ժողովները: Պարտադիր չէր, որ Տիեզերական ժողովին մասնակցեին բոլոր եկեղեցիները:

Կ. Պոլսի 381 թվականի ժողովում Հռոմի եկեղեցին և ողջ Արևմուտքը ոչ մի ներկայացուցիչ չեն ունեցել, սակայն այդ ժողովի տիեզերական հեղինակությունը ճանաչել են բոլոր եկեղեցիները: Ժողովի տիեզերական կոչվելու համար վճռական պայման չէր նաև կայսրի կամ Հռոմի պապի կողմից վավերացված լինելը: Այսպես, Եփեսոսի 449 թվականի կամ Կ. Պոլսի 754 թվականի (պատկերամարտության դեմ) ժողովները թեև ժամանակի կայսրերը հռչակել են իբրև տիեզերական ժողով, բայց եկեղեցու հայրերը մերժել են այդ ժողովների նման տիտղոսավորումը: Իսկ Կ. Պոլսի 381 թվականի ժողովը տիեզերական է ճանաչվել առանց Հռոմի պապի վավերացման:

Այնուամենայնիվ, երկու հանգամանքներ կան, նույնպես ոչ կանոնացված, որոնք էական են որևէ ժողով տիեզերական ճանաչելու համար: Դրանք են՝

1. Սուրբ Հոգու ներշնչանքի սկզբունքի հետ կապված լինելը: Դավանաբան-աստվածաբանության տեսակետից Տիեզերական ժողովները եկեղեցում ապրող Ս. Հոգու մասն են: Եկեղեցու հայրերը հավաքվում են Ս. Հոգու թելադրանքով և նրա ոգեկոչումով՝ հավատալով, որ Ս. Հոգին կթողնի իր Աստվածային թագավորությունը հավաքվածների մեջ, և դավանական որոշումները կնդունվեն Ս. Հոգու առաջնորդությամբ:
2. Հետագա ժողովների կողմից ցուցաբերվող վերաբերմունքը տվյալ ժողովի և նրա ընդունած որոշումների հանդեպ: Տիեզերական և այդպիսին անվանված ժողովները մինչև VIII դ. կոչվել են նաև Արևելյան, քանի որ գումարվել են Արևելքի քաղաքներում (Նիկիա,

Կ. Պոլիս, Եփեսոս, Քաղկեդոն), և մասնակից եպիսկոպոսներն էլ ճնշող մեծամասնությամբ կամ բացառապես եղել են Արևելքից և Արևելքի եկեղեցիներն են ներկայացրել: Մյուս ժողովները կոչվել են Արևմտյան, քանի որ միայն Արևմուտքում են գումարվել, և մասնակիցներն էլ բացառապես արմատական կաթոլիկ եկեղեցիների եպիսկոպոսներն են եղել: Ուղղափառ երկաբնակ եկեղեցիները ճանաչում են առաջին յոթ ժողովների տիեզերական հեղինակությունը:

1054 թվականին Լատին և Հույն եկեղեցիների բաժանումից հետո Հռոմի պապերը վերականգնել են կաթոլիկ եկեղեցու բարձրագույն հոգևորականության հավաքները՝ շարունակելով դրանք անվանել Տիեզերական ժողով: Հրավիրվել են պապի հրամանով, իսկ ընդունված որոշումները պապի հաստատելուց հետո պարտադիր են եղել բոլոր կաթոլիկների համար: Հայ եկեղեցու ներկայացուցիչները, ի թիվս այլ եկեղեցիների, որպես դիտորդներ մասնակցել են Կաթոլիկ եկեղեցու XXI (Վատիկանի II) տիեզերական ժողովին:

Հայ եկեղեցին ընդունում է միայն երեք տիեզերական ժողով՝ 325 թվականի Նիկիայի Ա տիեզերական ժողովը, 381 թվականի Կոստանդնուպոլսի Բ տիեզերական ժողովը և 431 թվականի Եփեսոսի Գ Տիեզերական ժողովը, որոնց ընդունած աստվածաբանական-քրիստոսաբանական սկզբունքները կազմում են Հայ եկեղեցու դավանության հիմքը: Այդ երեք տիեզերական ժողովում հաղթանակել է Ալեքսանդրյան դպրոցի աստվածաբանությունը: Այդ ժողովները վճռել են Քրիստոսի Աստվածությունը, այսինքն՝ Հայր Աստծուն համագո և էակից լինելը, Որդու մշտնջենավորությունը, Ս. Հոգու Աստվածությունը, Ս. Երրորդության խորհուրդը, Մարդեղության իսկությունը, որ է Աստվածության և մարդկության միավորությունը, Քրիստոսի բնությունների փոխհարաբերությունների և Անձնավորության, Աստվածամարդու և նրանում Աստվածայինի առաջնայնության հարցը: Երեք ժողովների վճիռներով ամբողջացել են քրիստոնեական կրոնի գլխավոր սկզբունքները, որոնք կազմում են ուղղափառ հավատքի հիմքը, այն է՝ Սուրբ Երրորդություն, Մարդեղություն և Փրկագործություն: Հայ եկեղեցու Հավատո հանգանակը կամ Հավատամքն այդ դավանական վճիռների բյուրեղացումն է: V դ. վերջին կամ VI դ. սկզբին Զենոն կայսրի «Հենոտիկոնի» ընդունումով, որտեղ հիշվում և ուղղափառ են ճանաչվում միայն երեք ժողովները, Հայ եկեղեցին ճանաչել է դրանց տիեզերական հեղինակությունը: Իսկ VI դ. կեսից արդեն հայ դավանաբանության գրվածքներում այդ երեք ժողովնե-

ը հիշվում են միասին՝ որպես սուրբ ժողովներ, իսկ նրանց վճիռները՝ որպես ուղղափառ դավանության սահման և Քրիստոսի Ընդհանրական եկեղեցու հավատքի արտահայտություն:

Բացի վերոնշյալ երեք Տիեզերական ժողովներից «Տիեզերական» են անվանվել նաև.

1. IV դարի Քաղկեդոնի ժողովը (451),
2. V դարի Կ. Պոլսի II ժողովը (553),
3. VI դարի Կ. Պոլսի III ժողովը (680–681),
4. VII դարի Նիկիայի II ժողովը (787),
5. VIII դարի Կ. Պոլսի IV ժողովը (869–870),
6. IX դարի Լատերանի I ժողովը (1123),
7. X դարի Լատերանի II ժողովը (1139),
8. XI դարի Լատերանի III ժողովը (1179),
9. XII դարի Լատերանի IV ժողովը (1215),
10. XIII դարի Լիոնի I ժողովը (1245),
11. XIV դարի Լիոնի II ժողովը (1274),
12. XV դարի Վիեննի ժողովը (1311–12),
13. XVI դարի Կոստանցի ժողովը (1414–18),
14. XVII դարի Բազելի ժողովը (1431–49),
15. XVIII դարի Լատերանի V ժողովը (1512–17),
16. XIX դարի Տրիդենտի (Տրիենտի) ժողովը (1545–1563),
17. XX դարի Վատիկանի I ժողովը (1869–70),
18. XXI դարի Վատիկանի II ժողովը (1962–65):

Երբեմն կաթոլիկ պատմագրությունը տիեզերական է համարում Ֆլորենցիայի ժողովը, իսկ Բազելի ժողովի առաջին 25 նիստերը դիտում է որպես նրա սկիզբ:

Գլուխ
Հայ առաքելական եկեղեցին Քրիստոսի ծննդից մինչև միջնադար

§ 1. Հայ առաքելական եկեղեցի

Հայ առաքելական եկեղեցին (պաշտոնական անունը՝ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցի) աշխարհի հնագույն ազգային եկեղեցիներից է և աշխարհի հնագույն քրիստոնեական համայնքներից մեկը, որ պատկանում է Արևելյան ուղղափառ եկեղեցիների խմբին: Հայ առաքելական եկեղեցու կենտրոնը Հայաստանում է՝ Վաղարշապատ քաղաքում, Սուրբ Էջմիածնի վանքում (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին):

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին մեկ ամբողջական միություն է, որի բարձրագույն հոգևոր պետը Ամենայն Հայոց Կաթողիկոսն է: Իսկ Կաթողիկոսական նստավայրը Սուրբ Էջմիածինն է: Հայ Եկեղեցին ունի նվիրապետական չորս աթոռներ կամ կենտրոններ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսություն, Երուսաղեմի Հայոց Պատրիարքություն, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքություն: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Կաթողիկոսությունը, որ հայտնի է որպես Ամենայն Հայոց Կաթողիկոսություն, գլուխն ու ղեկավարն է ընդհանուր նվիրապետության: Մյուս երեք աթոռների նկատմամբ այն նախամեծար է ու նախաթոռ: Ամենայն Հայոց Կաթողիկոսը նկատվում է որպես հաջորդն ու ժառանգորդը Թադեոս ու Բարդուղիմեոս առաքյալների և Գրիգոր Լուսավորչի:

Բացի նվիրապետական այս չորս աթոռներից, աշխարհի մի շարք երկրներում գործում են եկեղեցական կառույցներ, որոնք կոչվում են թեմեր և ունեն իրենց թեմակալ առաջնորդները: Թեմերի մեծագույն մասը, ինչպես, օրինակ, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Ռումինիայում, Բուլղարիայում, Արգենտինայում, Բրազիլիայում, Ավստրալիայում և այլուր, գործում են Ամենայն Հայոց Կաթողիկոսության հոգևոր իշխանության ներքո: Կիպրոսի, Լիբանանի, Սիրիայի և Իրանի հայկական թեմերը գտնվում են Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության (նստավայրը Անթիլիաս) հովանու ներքո:

§ 2. Հայ առաքելական եկեղեցու հիմնադրումը

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու պատմության վաղ շրջանի մասին պահպանված պատմական սկզբնաղբյուրները փոքրաթիվ են (Ագաթանգեղոս, Մ. Խորենացի, ասորական, հունական որոշ աղբյուրներ), սակայն առկա տեղեկություններն էլ բավարար են պատմական եղելությունների ամբողջական պատկեր ստանալու համար: Ավանդաբար Հայ Եկեղեցին կոչվում է Առաքելական, քանի որ Հայաստանում քրիստոնեության առաջին քարոզիչները եղել են Հիսուս Քրիստոսի 12 աշակերտներից Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալները, ովքեր անվանվում են Հայաստանի առաջին լուսավորիչներ: Ըստ հայկական աղբյուրների Թադեոս առաքյալը Հայաստանում քրիստոնեություն է քարոզել Սանատրուկ թագավորի իշխանության օրոք՝ դարձի բերելով բազմաթիվ հայերի (Ոսկյանք և Սուքիասյանք) և անգամ Սանդուխտ արքայադստերը: Սանատրուկի հրամանով, մոտավորապես 66 թվականին, Արտազ գավառում նահատակվում են Սանդուխտ կույսն ու Թադեոս առաքյալը:

Բարդուղիմեոս առաքյալն ութ պարսիկ հետևորդների հետ Հայաստան է եկել Սանատրուկի թագավորության 29-րդ տարում և ըստ ավանդության Արտաշատում հանդիպում է ունեցել Թադեոս առաքյալի հետ: Քարոզելով նախ Գողթնում, ապա Հայաստանի կենտրոնական շրջաններում՝ Բարդուղիմեոսն Անձևացյաց գավառում հիմնել է Հոգյաց վանքը, որտեղ զետեղել է Աստվածամոր պատկերը: Բարդուղիմեոսի քարոզչությունը ևս ժողովրդի տարբեր խավերին զուգահեռ հասել է նաև արքունիք՝ Քրիստոսի հետևորդ դարձնելով արքայի քրոջը՝ Ոգուհուն և Տերենտիոս հազարապետին, որոնք ևս նահատակվել են Սանատրուկի հրահանգով: 68 թվականին թագավորի հրամանով սպանվում է նաև Բարդուղիմեոս առաքյալը:

§ 3. Հայ առաքելական եկեղեցու ձևավորումը 1–3-րդ դարերում

Առաքելական ժամանակներից մինչև 3-րդ դարի վերջը քրիստոնեությունն աստիճանաբար տարածվել է Հայաստանում: Դրա համար մեծ նպաստող ուժեր էին ոչ միայն Քրիստոսի առաքյալների քարոզչությունը, այլև ստեղծված օգտակար մի շարք գործոնները: Առաջին դարում քրիստոնեությունը լայնորեն տարածված էր Հայաստանի հարևան Կապադովկիայում (սրա մաս էր կազմում Փոքր Հայքը), Օսրոենեում և Ադիաբենեում, որոնց հետ առկա առևտրային և մշակութային կապը հար-

մար պայմաններ էին ստեղծում քրիստոնեության ներթափանցման համար: Նպաստող հանգամանք էր նաև Տիգրանակերտում, Արտաշատում, Վաղարշապատում և Զարեհավանում հրեական համայնքների գոյությունը. քրիստոնեության առաջին քարոզիչներն իրենց գործունեությունն սկսում էին հենց այդ համայնքներից:

197 թվականին Տերտուղիանոսը «Ընդդեմ Հրեաների» գրքում քրիստոնեություն ընդունած ազգերի շարքում նշում է նաև հայերին: Այս տեղեկությունը հաստատում է նաև Օգոստինոս Երանելին «Ընդդեմ մանիքեականների» աշխատության մեջ: Քրիստոնեության արագ տարածումը փաստող վկայություններ են նաև Վաղարշ II (186-196թթ.), Խոսրով I (196-216թթ.) և հաջորդ արքաների հալածանքներն ընդդեմ քրիստոնյաների: Սրանց մասին նկարագրություններ են առկա Կապադովկիայի Փիրմիլիանոս եպիսկոպոսի (230-268թթ.) «Եկեղեցու հալածանքների պատմությունը» գրքում: Եկեղեցական պատմության հայր Եվսեբիոս Կեսարացին հիշատակում է նաև ապաշխարողական մի նամակ՝ «ուղղված Հայաստանի քրիստոնյաներին, որոնց եպիսկոպոսն է Մերուժանը»: Ըստ Եվսեբիոսի՝ այս նամակի հեղինակը 3-րդ դարի Ալեքսանդրիայի եպիսկոպոս Դիոնիսիոսն էր: Համաձայն պատմական մի քանի տեղեկությունների՝ առաքելական քարոզչությունից հետո Հայաստանում հիմնվում են եպիսկոպոսական մի քանի աթոռներ (Գողթն, Արտազ կամ Աշտիշատ), որոնց եպիսկոպոս առաջնորդներն են եղել Զաքարիա հայրապետը (68-72թթ.), Զեմենտոս հայրապետը (72-76թթ.), Ատրներսեհ հայրապետը (77-92թթ.), Մուշէ հայրապետը (93-123թթ.), Շահէն հայրապետը (124-150թթ..), Շավարշ հայրապետը (151-171թթ.), Ղևոնդիոս հայրապետը (172-190թթ.), Մեհրուժան հայրապետը (240-270թթ.):

Գլուխ
Հայ առաքելական եկեղեցին միջնադարյան Հայաստանում

§ 1. Քրիստոնեությունը Հայաստանում որպես պետական կրոն

301 թվականին Հայոց Տրդատ III Մեծ (287-330թթ.) թագավորի օրոք քրիստոնեությունը Հայաստանում հռչակվեց պետական կրոն: Այդ թվականը համարվում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պաշտոնական հիմնադրման տարեթիվը: Քրիստոնեության պետական կրոն հռչակման և հայոց դարձի պատմությունը մեզ փոխանցում են 5-րդ դարի պատմիչներ Ագաթանգեղոսը և մասամբ Մովսես Խորենացին ու Փավստոս Բուզանդը: Համաձայն պատմիչների՝ Սուրեն Պարթևը, որ հետագայում անվանվեց Գրիգոր Լուսավորիչ, որդին էր Տրդատ Մեծի հորը՝ Խոսրով արքային դավադրաբար սպանած Անակ Պարթևի: 287թ., երբ Տրդատը հռոմեական զորքերի ուղեկցությամբ Հայաստան է գալիս հոր գահը վերադարձնելու՝ նրան է միանում նաև երիտասարդ Գրիգորը՝ դառնալով արքայի հավատարիմ զինակիցը: Պարսկաստանի դեմ տարած հաղթանակից հետո, սակայն, Տրդատ արքան Գրիգորին առաջարկում է ընծա մատուցել Անահիտ դիցուհուն:

Գրիգորը, ով Կեսարիայում քրիստոնեական կրթություն էր ստացել, հրաժարվում է կուռքին զոհ մատուցել, ինչի համար արքան հրամայում է ենթարկել նրան 12 տեսակի տանջանքի: Իմանալով նաև, որ Գրիգորը Խոսրով թագավորին սպանած Անակի որդին է, Տրդատը պատվիրում է նրան գցել Արտաշատի զնդանը (խոր վիրապը), ուր Գրիգորը հրաշքով ապրում է 13-ից 14 տարի: Գրիգորին բանտարկելուց հետո Տրդատ Մեծը հրովարտակով կոչ է անում հպատակներին հավատարիմ մնալ հեթանոսական կրոնին և մահապատիժ է սահմանում քրիստոնյաների համար: Դեպքերից մի քանի տարի անց Տրդատ արքան որսի ժամանակ հիվանդանում է խոզակերպ հիվանդությամբ:

Ագաթանգեղոսն այդ կապակցությամբ գրում է. «Տրդատը սկսեց մոլեգնել ու ինքն իրեն ուտել և բաբելացիների Նաբուգոդոնոսոր արքայի նման մարդկային բնությունից դուրս գալով՝ վայրենի խոզերի կերպարանքով, իբրև նրանցից մեկը, գնաց նրանց մեջ բնակվելու»: Տրդատի հիվանդության պատճառը Հռոմի Դիոկղետիանոս կայսեր ձեռքից փախած 33 Հռիփսիմյան կույսերի և հատկապես նրանցից ամենագեղե-

ցիկի՝ Հռիփսիմեի սպանությունն էր: Վերջինս քարկոծվելով սպանվել էր՝ արքայի հետ ամուսնանալու առաջարկը մերժելու համար: Շուտով Տրդատի քույրը՝ Խոսրովիդուխտը, երազ է տեսնում, որ արքային կարող է բուժում պարգևել զնդանում գտնվող Գրիգորը, որին վիրապից հանելով՝ բերում են Վաղարշապատ: Արքունիքը մեծ պատվով է դիմավորում Գրիգորին: Վերջինս նախ հողին է հանձնում նահատակ կույսերի աճյունները, ապա 5-օրյա պահք է սահմանում (Առաջավորաց պահք) և աղոթքով ապաքինում արքային: Այնուհետև Գրիգորը 66 օր արքունիքին ու ժողովրդին քարոզում է Հին ու Նոր կտակարանները և քարոզության վերջին օրը տեսիլքով նրան ցույց է տրվում Սուրբ Էջմիածնի Մայր տաճարի կառուցման վայրը: Ապա Գրիգորը Տրդատի գործակցությամբ շրջում է Հայոց աշխարհում, քրիստոնեություն է քարոզում, քանդում է հեթանոսական հուշարձանները և նոր քրիստոնեականն է կառուցում դրանց տեղերում:

Հետագայում Տրդատ Մեծը ավագանու որոշմամբ Գրիգոր Լուսավորչին ուղարկում է Կեսարիա՝ եպիսկոպոս ձեռնադրվելու: Կեսարիայից վերադառնալուց հետո նորընտիր կաթողիկոսն Արածանի գետում մկրտում է Տրդատ թագավորին և արքունիքին, ապա Տրդատ III Մեծի հետ ձեռնամուխ է լինում Էջմիածնի Մայր տաճարի կառուցմանը: Տրդատ III Մեծի հրովարտակով քրիստոնեությունը հռչակվում է Մեծ Հայքի պետական կրոն:

§ 2. Հայոց եկեղեցին մինչև 7-րդ դարը

Գրիգոր Լուսավորչին կաթողիկոսական պաշտոնում փոխարինեց որդին՝ Արիստակես հայրապետը, ով եպիսկոպոս լինելով՝ 325թ. որպես Հայ Առաքելական Եկեղեցու ներկայացուցիչ մասնակցել էր նաև Նիկիայի Առաջին Տիեզերական ժողովին՝ իր հետ բերելով ժողովի կանոններն ու Հավատո հանգանակը: Հեթանոս իշխանների դեմ պայքարելու արդյունքում՝ Արիստակեսը դավադրաբար սպանվում է: Նույն բախտին են արժանանում նաև նրա եղբայրը՝ հաջորդ հայրապետը՝ Վրթանեսը, և վերջինիս որդին՝ Հուսիկ Ա հայրապետը: Հուսիկ կաթողիկոսի թոռի՝ Ներսես Մեծի կաթողիկոսության շրջանը նշանավորվեց Հայոց եկեղեցու բարեկարգությամբ:

353թ. Աշտիշատում գումարվեց Հայոց եկեղեցու առաջին ազգային եկեղեցական ժողովը, որի ժամանակ ընդունվեցին, ապա կյանքի կոչվեցին դավանաբանական, կազմակերպչական, բարեսիրական ուղղվա-

ծության մի շարք որոշումներ: Այս ժողովի ընթացքում ևս մեկ անգամ մերժվեց ու նզովվեց արիոսականությունը: Հայոց եկեղեցու ոսկեդարը մեկնարկեց 5-րդ դարի սկզբով, երբ Ներսես Մեծի որդու՝ Սահակ I Պարթև կաթողիկոսի, Մեսրոպ Մաշտոց վարդապետի ջանքերով և Վռամշապուհ թագավորի հովանավորությամբ ստեղծվեցին հայոց գրերը: Գրերի գյուտը հզոր զենք դարձավ Հայոց եկեղեցու և պետականության պահպանման համար, ինչպես նաև խթան հանդիսացավ եկեղեցական ծիսական, գրական, մշակութային կյանքի հարստացման ու աշխուժացման: Սահակ կաթողիկոսից հետո վերջնականապես դադարեց կաթողիկոսական գահի՝ Լուսավորչի տոհմին պատկանելը: V դարի երկրորդ կեսին զրադաշտական Սասանյան Պարսկաստանի կրոնական ձուլման քաղաքականության դեմ ժողովրդական ընդվզումը վերաճեց Վարդանանց և Վահանանց պատերազմների, որոնց ժամանակ իր ազգանվեր ծառայությունն է մատուցել նաև Հայ Առաքելական եկեղեցին: Արդյունքում՝ երկու կաթողիկոսներ՝ Հովսեփ Հողոցմեցին և Գյուտ Արահեղացին հալածվեցին Պարսից կառավարության կողմից:

Հարաբերական խաղաղություն հաստատվեց Հովհան Մանդակունի և Բաբկեն I Ոթմեցի կաթողիկոսների օրոք: 506թ. Բաբկեն կաթողիկոսը հրավիրեց Դվինի եկեղեցական ժողովը, որին մասնակցում էին նաև Հայոց եկեղեցու վերագահությունն ընդունող Վրաց և Աղվանից եկեղեցիները:

Դվինի ժողովում առաջին անգամ քննության առնվեց 451թ. գումարված Քաղկեդոնի 4-րդ Տիեզերաժողովը և դրա ընթացքում քննարկված հարցերն ու ընդունված քրիստոսաբանական բանաձևը (Ավարայրի ճակատամարտի և անկայուն քաղաքական դրության պատճառով ժողովին Հայաստանից ներկայացուցիչ չի մասնակցել): Դվինի ժողովը հիմնովին մերժել է Քաղկեդոնի որոշումները՝ դրանք համարելով առաջին երեք Տիեզերական ժողովների որոշումներին հակասող: Քաղկեդոնի ժողովը որպես ներքին նպատակ ուներ նաև մեծացնել Բյուզանդիայի ազդեցությունն Արևելքի քրիստոնյա ժողովուրդների վրա, զրկել նրանց մշակութային և դավանաբանական ինքնուրույնությունից:

554թ. Դվինում գումարվեց 2-րդ ժողովը որը մեկ անգամ ևս բացեիբաց նզովեց Քաղկեդոնի ժողովը և խզեց հարաբերությունը Բյուզանդական եկեղեցու հետ: Պապ թագավորի ժամանակ ձեռք բերված վարչական անկախությունից հետո VI դարում Հայոց եկեղեցին վերջնականապես դավանապես զատվեց Բյուզանդական եկեղեցուց՝ ընդունելով միայն առաջին 3 Տիեզերական ժողովները: Այսուամենայնիվ Բյուզան-

դիան (հատկապես Հայաստանի՝ Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև 2-րդ բաժանումից հետո) չէր դադարում ծուլման քաղաքականություն տանել: Մորիկ կայսեր վարած քաղաքականության արդյունքում 608թ. Վրաց եկեղեցին բաժանվեց Հայաստանից՝ ընդունելով քաղկեդոնականությունը: Հայաստանը քաղկեդոնականացնելու և Հայոց եկեղեցուն մոնոֆիզիտություն պարտադրելուն ուղղված ջանքեր էին ներդնում նաև Հերակլ, ապա Կոստանդ II կայսրերը, սակայն քաղաքական պատեհությամբ պայմանավորված՝ միավորման որոշումներն այդպես էլ կյանքի չեն կոչվում: Դրան մեծ արգելք են հանդիսանում նոր թափ ստացած արաբական արշավանքները:

§ 3. Հայոց եկեղեցին 7–9-րդ դարերում

VII դարի սկիզբը վտանգավոր էր հայ ժողովրդի և եկեղեցու համար ոչ միայն Բյուզանդիայի դավանական ճնշումների, այլ նաև Պարսկաստանի պետության անկման պատճառով: Շուրջ 2 տասնամյակ Հայաստանն արաբա-բյուզանդական պատերազմների թատերաբեմ էր: Միայն Գրիգոր Մամիկոնյանի կառավարման շրջանում էր, որ Հայոց եկեղեցին հնարավորություն ստացավ փոքր-ինչ շունչ քաշել: Սրա վառ ապացույցը եղան մի շարք եկեղեցիների կառուցումները իշխանական տների կողմից: Հայրապետական ակտիվ գործունեությամբ աչքի ընկան Կոմիտաս I Աղցեցի, Ներսես III Տայեցի կաթողիկոսները: VIII դարի սկզբին, սակայն, արաբական արշավանքներն աղետալի իրավիճակ են ստեղծում Հայաստանում՝ առիթ դառնալով Հայոց եկեղեցու մի քանի դար տևած ամլության: Աքսորի է ենթարկվում Սահակ III Ձորոփորցի կաթողիկոսը, հայաստան են ներխուժում պավլիկյան և թոնդրակյան աղանդները: 717թ. Հայ եկեղեցու հովվությունն ստանձնում է Հովհան Օձնեցի հայրապետը, ով ոչ միայն համառ պայքար է մղում աղանդների դեմ, այլ 720թ. գումարելով Դվինի վերջին եկեղեցական ժողովը՝ կյանքի է կոչում կենցաղվարական, ամուսնական, ծիսական-արարողական և այլ հարցերի առնչվող 32 կանոններ: 726թ. Օձնեցու ջանքերով գումարվում է Մանազկերտի ժողովը, որը նպատակ ուներ համագործակցության եզրեր գտնել հակաքաղկեդոնական 2 եկեղեցիների՝ Հայոց եկեղեցու և Ասորի եկեղեցու միջև: Հովհան Օձնեցուց հետո՝ մինչև IX դարի կեսը՝ Բագրատունյաց իշխանության հաստատումը, Հայաստանում, Հայ եկեղեցու պատմության մեջ աչքի ընկնող դեպքեր ու դրվագներ չեն հանդիպում:

§ 4. Հայոց եկեղեցին 9–12-րդ դարերում

IX դարի 2-րդ կեսին՝ Զաքարիա I Ջագեցի (855-876թթ.) և Գևորգ II Գառնեցի (877-897թթ.) կաթողիկոսների օրոք Բագրատունիների գլխավորությամբ թոթափվեց արաբական լուծը՝ վերականգնելով պետության և եկեղեցու անկախությունը: Այսուհանդերձ, արաբական ճնշումները Հայոց եկեղեցու և կաթողիկոսության վրա շարունակվում էին: Գերության մեջ է հայտնվում Գևորգ Գառնեցի կաթողիկոսը, հալածվում և նեղություններ է կրում Հովհաննես Դրասխանակերտցի պատմիչ՝ կաթողիկոսը (898-929թթ.):

Արաբական գերիշխանության աստիճանական անկմանը զուգահեռ դարձյալ մեծանում է Հայոց Եկեղեցին դավանական կախվածության մեջ գցելու՝ Բյուզանդիայի հավակնությունը: Կոստանդնուպոլսի Փոտ պատրիարքն առաջարկում է միավորել 2 եկեղեցիները: Այս առաջարկի առթիվ 862թ. Շիրակավանում ժողով է գումարվում, որը մերժում է քաղկեդոնականների այս առաջարկները: Բյուզանդիան այնուհետև ձեռնամուխ է լինում Հայոց եկեղեցու մեջ պառակտում մտցնելուն և սկսում է հալածել հայ հոգևորականներին: Առաջ են գալիս մի շարք հակաթոռ կաթողիկոսություններ, անընդհատ տեղափոխվում է կաթողիկոսական նստավայրը: Այսքանով հանդերձ, X դարի վերջը և XI դարի սկիզբն Անիի թագավորության համար նշանավորվում են հոգևոր-մշակութային կյանքի վերելքով. հիմնվում են դպրոցներ, մատենադարաններ, մեծաքանակ եկեղեցիներ և վանքեր (Կամրջաձոր, Դպրեվանք, Հոռոմոս, Սանահին, Հաղբատ), ի հայտ են գալիս եկեղեցական ակնառու դեմքեր (Հովհաննես Կոզեռն, Ստեփանոս Ասողիկ, Սարգիս Անեցի, Անանիա Սանահնեցի, Արիստակես Լաստիվերցի, Հովհաննես Սարկավագ Վարդապետ):

1019թ. Հայոց կաթողիկոս է նշանակվում Պետրոս I Գետադարձը (1019-1058թթ.), որի օրոք սկիզբ է առնում Բագրատունյաց պետության ճգնաժամը: Իր ծրագրերը և հույսերը կապելով Բյուզանդիայի հետ՝ կաթողիկոսն անկման է տանում նաև Հայոց եկեղեցին: 1045թ. Բյուզանդիայի վարած քաղաքականության, պետության և եկեղեցու անհեռատես քայլերի արդյունքում Բագրատունյաց թագավորությունը փլուզվում է: Աննախադեպ հալածանքներ են սկսվում Հայ եկեղեցու դեմ, բանտարկվում և տանջանքների է ենթարկվում Պետրոս Գետադարձին հաջորդած Խաչիկ II Անեցի (1058-1065թթ.) կաթողիկոսը, որի մահից հետո Բյուզանդիան միառժամանակ արգելում է Հայ եկեղեցուն կաթողիկոս ընտրել: Ստեղծված ծայրահեղ վիճակում XI դարի վերջին կաթողիկոսական Աթոռը տեղափոխվում է ավելի անվտանգ վայր՝ Կիլիկիա:

§ 5. Ամենայն Հայոց կաթողիկոսությունը Կիլիկիայում

1080թ. նախկին Բագրատունյաց թագավորության վերջին ժառանգ Գագիկի ազգականներից Ռուբենը իր իշխանական տարածքներին միացնելով Դաշտային Կիլիկիան՝ հիմնեց Կիլիկիայի հայկական իշխանությունը: 1198թ. այդ իշխանությունը վերջնականապես հաստատվեց որպես թագավորություն և գոյատևեց մինչև 1375 թվականը: Հայոց քաղաքական կենտրոնը Կիլիկիա տեղափոխելուն զուգահեռ տեղափոխվեց նաև Կաթողիկոսական Աթոռը: Հայոց Եկեղեցին Կիլիկիայի տարածքում գոյատևեց 1062-1441թթ.: Այսուամենայնիվ բուն Հայաստանում ևս չկորսվեց հայ հոգևոր կյանքը: Համախմբվելով Սանահինում, Հաղբատում, Սյունիքում և Խորանաշատում՝ Հայաստանի հոգևորականները ձևավորում են Արևելյան վարդապետների խումբը: Մինչև Հայ Առաքելական Եկեղեցու կաթողիկոսական Աթոռի վերջնական հաստատումը Կիլիկիայում հաստատվել էին երեք հակաթոռ կաթողիկոսություններ՝ Հոնում, Մարաշում և Տարսոնում: Դեռևս Գրիգոր Վկայասերի (1066-1105թթ.) կենդանության օրոք՝ 1081թ. Անիում աթոռակից կաթողիկոս է նշանակվում Բարսեղ Անեցին (1105-1113թթ.): Այս նշանակումը եղել էր Գրիգոր Վկայասերի համաձայնությամբ, քանի որ Վկայասերը երկարատև բացակայում էր Հայաստանից՝ շրջելով և հավաքագրելով սրբերի վարքեր և վկայաբանություններ:

Բարսեղի ջանքերով վերացվում են Կիլիկիայի հակաթոռ կաթողիկոսությունները, իսկ արդեն Վկայասերի մահվանից հետո Բարսեղ Անեցին հաստատվում է Քեսունի Կարմիր վանքում: Բարսեղ Անեցուց հետո Հայոց կաթողիկոս է ձեռնադրվում 20-ամյա Գրիգոր III Պահլավունին (1113-1166թթ.): Երիտասարդ կաթողիկոսի ընտրությունը պատճառ է դառնում հայոց ամենաերկարակյաց հակաթոռ կաթողիկոսության՝ Աղթամարի (1113-1895թթ.) հիմնադրման համար: Գրիգոր կաթողիկոսի դեմ բողոքելով՝ Աղթամարի կաթողիկոս է ինքնահռչակում Աղթամարի Դավիթ եպիսկոպոսը, ում կաթողիկոսությունը միանգամից մերժվում է: Ելնելով քաղաքական իրավիճակից՝ 1116թ. Գրիգոր III Պահլավունի կաթողիկոսը Կարմիր վանքից տեղափոխվում է Ծովք, սակայն այստեղ էլ ապահով չլինելով՝ վերջնականապես հաստատվում է Հռոմկլայում՝ հընթացս մի քանի անգամ անհաջող փորձ անելով աթոռը վերահաստատել Անիում: Հռոմկլայում Հայոց Կաթողիկոսական Աթոռը մնում է մինչև 1292 թվականը: Գրիգոր Պահլավունուց հետո Հայոց եկեղեցու ղեկավարումնստանձնում է նրա եղբայրը՝ Ներսես IV Կլայեցի Պահլավունին (Ներսես Շնորհալի, 1166-1173թթ.), ով Հայ եկեղեցու պատմության ամենաբազմե-

ռախտ հայրապետներից էր: Շնորհալին պատմությանը հայտնի է ոչ միայն իր բեղուն գրչով, որի տակից դուրս են եկել մի շարք աստվածաբանական աշխատություններ և ծիսադավանական հարցերի վերբերող գործեր, այլ նաև քաղաքական ակտիվ գործունեությամբ:

Ի հակակշիռ այդ ժամանակաշրջանում դարձյալ գլուխ բարձրացնող բյուզանդական ձուլման քաղաքականության, Ներսես Հայրապետը նամակագրություն է սկսում Մանուել Կոմնենոս կայսեր հետ՝ ճիգեր գործադրելով ամեն պարագայում պահպանել Հայոց եկեղեցու ամբողջականությունն ու վարդապետական անաղարտությունը: Արդեն հաջորդ կաթողիկոս Գրիգոր Տղայի (1173-1193թթ.) օրոք՝ 1179թ. Հռոմկլայում մեծ եկեղեցական ժողով է գումարվում, որտեղ Արևելյան վարդապետների անզիջում կողմնորոշման շնորհիվ մերժվում են Մանուել կայսեր առաջարկները (սրան նպաստում է նաև 1180թ. կայսեր մահը): Միևնույն ժամանակ Հայոց եկեղեցուն սկսում է այլ վտանգ սպառնալ. Խաչակրաց արշավանքներին զուգահեռ Կիլիկյան Հայաստանում քաղաքական աջակցություն գտնելու համար նախարարական տները հայացքներն ուղղում են դեպի կաթոլիկ եկեղեցին:

§ 6. Ունիթորական շարժումը Հայոց եկեղեցում

12-14-րդ դարերում Հայոց եկեղեցին առաջին անգամ սերտ հարաբերությունների մեջ մտավ Հռոմեական կաթոլիկ եկեղեցու հետ: Այս փոխհարաբերությունը մեծապես կապված էր Կիլիկիայի տարածքում և հարակից շրջաններում Խաչակրաց արշավանքների արդյունքում ձևավորված արևմտյան մի շարք նախարարությունների ձևավորմամբ, Կիլիկյան թագավորության քաղաքական և տնտեսական անկայուն դրությամբ: Ցանկանալով ստանալ Արևմուտքի, հետևաբար՝ նաև Հռոմեական եկեղեցու օժանդակությունը՝ որոշ հայ քաղաքական և հոգևոր գործիչներ՝ պատրաստ էին գնալ զիջումների անգամ հոգևոր-դավանաբանական հարցերում: Այս հաշվի առնելով՝ Կաթոլիկ եկեղեցին այդ դարերի ընթացքում մշտապես առաջ էր քաշում եկեղեցիների ունիայի (միավորման) խնդիրը՝ հիմնականում պնդելով 2 դավանական զիջում՝

1. Հաղորդության գինուն ջուր խառնել,
2. Սուրբ Ծնունդը հունվարի 6-ի փոխարեն նշել դեկտեմբերի 25-ին:

Խաչակիրների 3-րդ արշավանքի ժամանակ Հռոմի Կղեմես III պապի խնդրանքով Կիլիկյան Հայաստանը՝ հանձին Լևոն թագավորի, մեծապես օժանդակեց խաչակիրներին, ինչի համար Լևոնը 1195թ.

Գերմանիայ Սրբազան թագավորության կայսր Հենրիխ 4-րդի կողմից ճանաչվեց Կիլիկիայի թագավոր, իսկ 1196թ. թագ ստացավ Ալեքսեյ 3-րդից: Լևոնը պարտադիր կերպով ձգտում էր թագադրվել Արևմուտքի կողմից, սակայն կաթոլիկ եկեղեցին թագադրման արարողություն չէր ցանկանում իրականացնել այլադավան արքայի վրա, ինչի համար Կիլիկիա է ուղարկվում Պապի պատվիրակ Կոնրադոս կարդինալը՝ առաջարկով միավորել Հայ և Լատին եկեղեցիները: Լևոնը ժողով է գումարում այդ հարցը քննարկելու համար, սակայն ժողովն իսպառ մերժում է կարդինալի առաջարկը՝ զիջման գնալով այլ կետում. 1198թ. հունվարի 6-ին Կոնրադոս կարդինալն իրականացրեց Լևոնի թագադրումը, իսկ Գրիգոր Ապիրատ (1194-1203թթ.) կաթողիկոսը՝ օծման արարողությունը (օծումը կատարվեց հայերեն թարգմանված լատին ծիսակարգի համաձայն): Ունիթորական ձգտումները շարունակվեցին նաև Հեթում արքայի և Կոնստանդին Բարձրաբերդցի կաթողիկոսի օրոք (1221-1267թթ.), երբ Հայ Առաքելական Եկեղեցուն առաջարկվեց ընդունել Ֆիլիոքվեյի վարդապետությունը: Կոնստանդին կաթողիկոսը 1251թ. Սսում ժողով է գումարում հարցը քննարկելու համար, սակայն ժողովականների հետ ընդհանուր հայտարարի չգալով՝ ստիպված է լինում դիմել նաև Արևելյան վարդապետներին: Քանի որ այս վարդապետությունը միանգամայն նոր էր և անծանոթ, դրա պատասխանը երկար ժամանակ հապաղում էր: Լատին եկեղեցին, սակայն, շարունակում էր իր պատվիրակներին ուղարկել Կիլիկիա՝ նպատակ ունենալով Հայոց եկեղեցուն զրկել ինքնուրույնությունից: Այս գործընթացին բավական նպաստում էին նաև կաթոլիկների հանդեպ ընդգծված դրական վերաբերմունք ունեցող Գրիգոր Անավարզեցին (1293-1306թթ.) և Հեթում II թագավորը, որոնց ջանքերով ինչ-ինչ փոփոխություններ և մուծումներ եղան ծեսում: Ընդդիմանալով սրան՝ Արևելյան վարդապետները՝ Սյունյաց մետրոպոլիտության առաջնորդությամբ, զգաստության են կոչում Գրիգոր կաթողիկոսին: Հաշվի առնելով շրջակա մահմեդական երկրների սպառնալից ընթացքը՝ Գրիգոր Անավարզեցին արդարացնում էր իր քայլերը նրանով, որ Հռոմը և Բյուզանդիան քրիստոնյա երկրներ էին, քիչ ավելի վտանգավոր քան մահմեդականները: Կարճ ժամանակ հետո հասկանալով, որ առանց որ ոչ Հռոմը ոչ Բյուզանդիան չեն պատրաստվում օժանդակել Կիլիկյան թագավորությանը, կաթողիկոսը մեկուսացավ գործունեությունից, ապա թագավորի կողմից աքսորի ենթարկվեց՝ Հռոմի հետ միավորման գրությունը չստորագրելու համար: 1307թ. Լևոն արքան Սսում գումարեց 7-րդ ժողովը, որին մասնակից էին 43 եպիսկոպոսներ և Կիլիկիայի մի շարք

իշխաններ: Լևոնը ժողովականներին ներկայացրեց զիջումներով ու դավանական լուրջ փոփոխություններով մի գրություն, որն իբր գրել էր Գրիգոր Անավարզեցին: Զիջումները ժողովականների մեծամասնության որոշմամբ ընդունվեցին՝ ընդդիմության արժանանալով Արևելյան վարդապետների կողմից: Միայն այն ժամանակ, երբ լիովին պարզ դարձավ Կիլիկիային օգնելու Լատին եկեղեցու ոչ պատրաստակամությունը (մանավանդ որ Եգիպտոսի մամլուքներն անխնա ասպատակում էին Կիլիկիան) 1361թ. Մեսրոպ Ա Արտազեցի (1359-1372թթ.) կաթողիկոսը գումարեց Սսի 8-րդ ժողովը և չեղյալ համարեց ամեն տեսակի փոփոխություններն ու մուծումները: 1375թ. մամլուքների արշավանքների արդյունքում ի վերջո դադարեց գոյություն ունենալ Կիլիկիայի Հայոց թագավորությունը: Հասունացավ Կաթողիկոսական աթոռն ավելի ապահով վայր՝ բուն Հայաստան տեղափոխելու գաղափարը:

§ 7. Հայոց եկեղեցու հոգևոր-մշակութային կյանքը Կիլիկյան թագավորության ժամանակաշրջանում

Չնայած քաղաքական դաշտի վայրիվերումներին, միավորման համար այլ եկեղեցիների վարած քաղաքականությանը, հոգևոր-մշակութային կյանքը Կիլիկիայում և Հայ եկեղեցում տվել է իր լավագույն պտուղները՝ որակվելով որպես «արծաթեդար»: Այս շրջանում կառուցվել են բազմաթիվ վանքեր ու եկեղեցիներ, վարդապետարաններ ու համալսարաններ, ընդօրինակվել ձեռագրեր, ստեղծվել արվեստի, գիտության ու մշակույթի անկրկնելի արժեքներ: Թորոս Ռոսինի գլխավորությամբ զարկ է տրվում մանրանկարչական արվեստի կատարելագործմանը: 13-րդ դարի սկզբներին աշխուժանում է կյանքը նաև բուն՝ Հյուսիսային Հայաստանում: Զաքարյան իշխանական տան ջանքերով ազատվելով մահմեդական գերիշխանությունից՝ Հայաստանը հնարավորություն է ստանում մշակութային վերելք ապրելու ինչի արդյունքում կարճ ժամանակ անց հիմնվում են Սանահինի և Հաղբատի վանքերն ու վարդապետարանները, Գլաձորի համալսարանը, Որոտնավանքն ու Տաթևի վանքը և այլն: Այս դարաշրջանում Հայոց եկեղեցում գործունեություն են ծավալում այնպիսի հայտնի գործիչներ, ինչպիսիք են Ներսես Շնորհալին, Հակոբ Կլայեցին, Հովհան Որոտնեցին, Գրիգոր Տաթևացին, Տիրատուր Կիլիկեցին, Եսայի Նչեցին, Մխիթար Գոշը և այլոք:

§ 8. Կաթողիկոսական Աթոռի վերահաստատումն Էջմիածնում

Կիլիկիայում թագավորության անկումից հետո Հայոց եկեղեցու առջև ծառացան մի շարք խնդիրներ. ստեղծված հոգևոր-մշակութային ճգնաժամը, տնտեսական և քաղաքական անելանելի դրությունն անհնարին էին դարձնում եկեղեցու ազատ և նպատակաուղղված գործունեությունը: Հաշվի առնելով այս հանգամանքները՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու գործիչները 13-րդ դարի վերջից սկսած քայլեր են ձեռնարկում Հայրապետական Աթոռն ավելի ապահով ու նպաստավոր վայր տեղափոխելու համար: Արդեն 15-րդ դարի սկզբին երբ բուն Հայաստանում հաստատվեց կարակոյունլու Ջհանշահի իշխանությունը, համեմատաբար խաղաղ ու նպաստավոր իրադրություն ստեղծվեց և հնարավորություն առաջ եկավ կաթողիկոսությունը հաստատել իր նախնական վայրում՝ Սուրբ Էջմիածնում: Այս որոշումը կայացվեց դեռևս Կիլիկիայի Գրիգոր IX Մուսաբեկյանց կաթողիկոսի կենդանության օրոք, նրա համաձայնությամբ: 1441թ. Համբարձման տոնի օրը Թովմա Մեծոփեցու և Հովհան Հերմոնեցու ջանքերով Վաղարշապատում ժողով գումարվեց 700 եպիսկոպոսների մասնակցությամբ, վիճակ գցվեց և Ամենայն Հայոց կաթողիկոսի պաշտոնն ընկավ Կիրակոս Վիրապեցուն (1441-1443թթ.), ով փաստորեն դարձավ գոյություն ունեցող հայկական բոլոր կաթողիկոսությունների, նվիրապետական աթոռների և թեմերի գլուխը: Կարճ ժամանակ անց՝1446-ին, Կիլիկիայում Կարապետ Եվդոկացին կաթողիկոս օծվեց՝ ինքն իրեն Սսի կաթողիկոս հայտարարելով, ինչով վերականգնվեց Սսի Կիլիկյան կաթողիկոսությունը: Կարճ ժամանակ անց՝ 1461 թվականին հիմնվեց նաև Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքությունը:

Վաղարշապատը կրկին դարձավ համայն հայության հոգևոր կենտրոնը, Սուրբ Էջմիածինը՝ պետականությունից զրկված, աշխարհով սփռված հայ ժողովրդի հոգևոր և ազգային-քաղաքական կենտրոնը: Այս վերջին հանգամանքը չափազանց կարևոր էր Պարսկաստանի և Օսմանյան Թուրքիայի հայահալած ու զավթողական նպատակների պայմաններում: Հայոց եկեղեցու կենտրոնը՝ Վաղարշապատը, գտնվում էր Պարսկաստանի իշխանության տակ և ամբողջովին զրկված էր ինքնավարությունից: Արդյունքում՝ 15–16-րդ դարերում Հայոց Եկեղեցին դարձյալ մութ ու լճացած տարիներ է անցկացնում, երբ ներսում ձեռքից ձեռք էր խլվում կաթողիկոսական աթոռը, իսկ արտաքին քաղաքականությամբ Պարսկաստանն ու Թուրքիան պառակտում և թուլացնում էին

Հայոց Եկեղեցին ու Հայաստանը: Միայն 17-րդ դարասկզբին՝ Մովսես III Տաթևացի (1629-1632թթ.), Փիլիպոս Աղբակեցի (1632-1655թթ.), Հակոբ IV Ջուղայեցի (1655-1680թթ.) կաթողիկոսների օրոք Հայ Առաքելական եկեղեցու ներքին կայնքը, նյութական վիճակը, ազգային-եկեղեցական, հոգևոր-մշակութային կյանքն սկսեցին վերելք ապրել: Կարգավորվեցին հարաբերությունները Պարսկական արքունիքի, նվիրապետական աթոռների հետ: Հիմնվեցին մի շարք դպրոցներ ու կրթական հաստատություններ Սյունիքում, Վաղարշապատում, Վանա լճի կղզիներում, Նոր Ջուղայում: Վերազարթոնքը շարունկվեց նաև հաջորդ կաթողիկոսներ Եղիազար Ա Այնթապցու (1691-1705թթ..), Ղազար Ա Ջահկեցու (1737-1751թթ.), Հակոբ Ե Շամախոցու (1795-1763թթ., այս հայրապետն առաջիններից էր, ով սկսեց զբաղվել Հայաստանն օտար լծից ազատելու գործով) օրոք: Դարաշրջանի ամենաբեղուն հայրապետներից էր Սիմոն Ա Երևանցին (1763-1780թթ.), ով աշխատանքներ տարավ հայոց Եկեղեցու կալվածքները վերադարձնելու, հոգևոր կյանքն աշխուժացնելու և ծիսական կյանքի մեջ բարեփոխումներ կատարելու ուղղությամբ:

Գլուխ
Հայ առաքելական եկեղեցին 19-րդ դարից մինչև մեր օրերը

§ 1. Հայոց եկեղեցին 19-րդ դարում

19-րդ դարասկիզբը Հայոց եկեղեցու համար առանձնացավ պետական կյանքում տեղի ունեցած բուռն փոփոխություններով. Հայաստանի մի զգալի մասը՝ Արևելյան Հայաստանը, ազատվելով թուրք-պարսկական լծից, ընկավ Ցարական Ռուսաստանի գերիշխանության տակ: Հայ եկեղեցին և հայ ժողովուրդը, խանդավառված քրիստոնյա Ռուսաստանի կազմի մեջ մտնելով՝ մեծապես օժանդակեց Ռուսաստանին թշնամու դեմ պայքարի հարցում:

Հայ ժողովրդին ներկայանալով որպես հավատակից ազատարար՝ Ռուսաստանը մեծ կարևորություն էր տալիս եկեղեցական խնդիրներին և Հայոց եկեղեցուն՝ գիտակցելով, որ պետականության կորստից հետո հայ ամբողջականության շահերի ու տրամադրությունների արտահայտիչը Հայ Առաքելական Եկեղեցին է: Ըստ այդմ, Ռուսաստանը փորձում էր փոքրացնել Հայ Եկեղեցու քաղաքական դերը երկրի ներսում, օգտագործել Ամենայն Հայոց Կաթողիկոսության հեղինակությունը Ռուսաստանում և դրանից դուրս բնակվող հայերի վրա ազդեցություն տարածելու համար:

Ռուսաստանն իրավունք էր վերապահել իրեն մինչև անգամ վավերացնելու Կաթողիկոսի ընտրությունը: Ավելին՝ 1836թ. Ռուսական կառավարությունը հրապարակեց պետության և Հայոց եկեղեցու հարաբերությունները կանոնակարգող «Պոլոժենիե» փաստաթուղթը, որը ծայրահեղորեն նվազեցնում էր Հայոց եկեղեցու հեղինակությունը, զրկում նրան կալվածքներից, դպրոցներից և ունեցվածքից: Սա առաջ բերեց հայ ժողովրդի և Հայոց եկեղեցու վրդովմունքը, սակայն մինչև 1917թ. «Պոլոժենիեն» չդադարեց գործելուց: Չնայած Հայոց եկեղեցու առջև ծառացած խնդիրներին, Հայոց եկեղեցին շարունակում էր պահպանել իր գոյությունը՝միաժամանակ որոշակի դրական արդյունքներ արձանագրելով հոգևոր-մշակութային կյանքում: Միմյանց հաջորդած Եփրեմ Ա Ջորագեղցի (1809-1830թթ.), Հովհաննես Ը Կարնեցի (1831-1842թթ.) և Ներսես Ե Աշտարակեցի (1843-1857թթ.) կաթողիկոսների շարքում ամենից աչքի ընկնողը եղավ Ներսես Աշտարակեցին, ով ակտիվ գործու-

նեություն էր ծավալել նույնիսկ մինչև կաթողիկոս դառնալը՝ քաջալերողն ու նպաստողը լինելով 1804-1813թթ., 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմների:

Աշտարակեցու ջանքերով հիմնադրվեց Ռուսաստանի Նոր Նախիջևանի, Աստրախանի թեմը, Թիֆլիսում բացվեց հանրահայտ Ներսիսյան դպրոցը (1824թ.): Կաթողիկոս դառնալուց հետո Աշտարակեցին ձեռնամուխ եղավ եկեղեցական կյանքի շենացմանն ու կրթամշակութային աշխատանքների: Արդյունաշատ եղավ նաև Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի (1866-1882թթ.) կաթողիկոսի աթոռակալությունը. էջմիածնում հիմնվեց տարածաշրջանի առաջին բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ Գևորգյան ճեմարանը (1874թ.), բացվեցին Մայր Աթոռի թանգարանը, տպարանը, թղթի արտադրամասը, սկսվեց հրատարակվել Հայոց եկեղեցու առաջին պաշտոնաթերթը՝ «Արարատ» ամսագիրը (1868թ.): Այս շրջանի հայտնի հոգևոր գործիչներից էր նաև Մկրտիչ Ա Խրիմյանը (Խրիմյան Հայրիկ, 1892-1907թթ.), ով մինչև կաթողիկոս դառնալը վարել է ոչ միայն հոգևոր, այլև հասարակական գործունեություն: Ձբաղեցնելով պատասխանատու բարձր պաշտոններ (ընդհուպ Կ.Պոլսի պատրիարքի պաշտոնը)՝ Խրիմյանը միաժամանակ զբաղվում էր հրատարակչական և գրական գործունեությամբ: Որպես հայկական պատվիրակության ղեկավար՝ մասնակցել է 1878թ. Բեռլինի Կոնգրեսին, որտեղ քննարկման էր դրված Հայկական հարցը:

Խրիմյանի կաթողիկոսության օրոք՝ 1903թ. Ցարական կառավարությունը նոր օրենք առաջ քաշեց, որի համաձայն բռնագրավվում էր ողջ եկեղեցական գույքը, փակվում էին հայկական դպրոցները: Խրիմյանն ակտիվորեն հակառակվեց այդ օրենքին՝ նամակով դիմելով ցարին, և պատվիրեց թեմերին չհնազանդվել այդ օրենքին: Շուտով այս օրենքը դադարեց գոյություն ունենալուց: Բարդ էր Հայոց եկեղեցու վիճակը նաև Արևմտյան Հայաստանում: Ռուս-թուրքական պատերազմից (1828-1829թթ.) հետո եվրոպական երկրների ճնշմամբ Օսմանյան Թուրքիայում հիմնվեցին բողոքական և կաթոլիկ համայնքներ, ովքեր սկսեցին ակտիվ և ագրեսիվ գործունեություն ծավալել՝ ջանալով թուլացնել առանց այդ էլ հյուծված Հայոց եկեղեցին: Այսուամենայնիվ, Հայոց պատրիարքը շարունակում էր մնալ իր բարձր դիրքի վրա, իսկ Թուրքական կառավարությունը փորձում էր մշտապես միջամտել նրա ընտրության և գործունեության հարցին:

Առանց պատրիարքի չէին լուծվում ազգային-եկեղեցական և համայնքային խնդիրները, պատրիարքը միջնորդ էր պետության և Սուրբ էջմիածնի միջև: Հարցը կարգավորելու համար 1860թ. կառավարութ-

յունն առաջ քաշեց Ազգային Սահմանադրությունը, որը գոյություն ունեցավ մինչև 1880-ական թվականները: Համաձայն դրա՝ Օսմանյան Կայսրության հայ համայնքի և բնակչության ղեկավարումը կատարվում էր 2 խորհուրդների՝ Հոգևոր խորհրդի (14 եպիսկոպոս՝ կաթողիկոսի գլխավորությամբ) և Աշխարհիկ խորհրդի (20 երեսփոխան՝ ընտրված 400 հոգու կողմից) միջոցով: 1895-1896թթ. սկիզբ առան հայերի զանգվածային ջարդերը, որոնք կանխելու դեմ ջանք չէին խնայում ժամանակի պատրիարքներ Մկրտիչ եպիսկոպոս Խրիմյանը, Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը և այլոք:

§ 2. Հայոց եկեղեցին 20-րդ դարում

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին 20-րդ դար թևակոխեց Խրիմյան Հայրիկի գահակալությամբ, ում հաջորդեց Կ. Պոլսի պատրիարք Մատթեոս Իզմիրլյանը (1908-1910թթ.): Իզմիրլյանի հաջորդ Գևորգ Ե Սուրենյանցը (1911-1930թթ.) իր կաթողիկոսության ընթացքում ականատեսն ու ժամանակակիցը եղավ միանգամից պատմական մի քանի իրադարձությունների՝ Առաջին աշխարհամարտի ու Հայոց Մեծ եղեռնի, Սարդարապատի ճակատամարտի և Հայաստանի առաջին Հանրապետության ստեղծմանը և Հայաստանի խորհրդայնացմանը: Դեռևս 1912թ. Գևորգ կաթողիկոսի ջանքերով էջմիածինը քանիցս բարձրացրել է Հայ դատի խնդիրը՝ փորձելով դրա վրա բևեռել Եվրոպայի ուշադրությունը, սակայն 1914 թվականին սկիզբ առած աշխարհամարտը, ապա 1915 թվականի Հայկական ցեղասպանության Օսմանյան ծրագիրը Հայոց եկեղեցու ջանքերը թողեցին ապարդյուն:

Գիտակցելով Հայոց եկեղեցու և եկեղեցականների կարևորությունն ազգային կյանքում՝ ջարդերի կազմակերպիչները կայսրության տարածքում կոտորեցին թվով ավելի քան 4000 հոգևորականների, ոչնչացրին քրիստոնեական մշակույթի կոթողներն ու հարստությունները, կրակի մատնեցին շուրջ 2000 եկեղեցիներ ու վանքեր: Կոտորածի արդյունքում վտանգի տակ հայտնվեց Սսի կաթողիկոսությունը, որը, Սսում մնալով մինչև 1920 թվականը, բռնեց դեգերման ճամփան և վերջնական հանգրվան գտավ Լիբանանի Անթիլիաս քաղաքում միայն 1930-ականներին: Վերացան Կ.Պոլսի պատրիարքությունն ու Աղթամարի Կաթողիկոսությունը: Հայոց եկեղեցին զրկվեց իր արևմտահայ 1.500.000 հավատացյալներից:

Մեծ եղեռնի և հետագա տարիներին էջմիածինը ձեռնամուխ եղավ աղետյալների և մազապուրծ եղած փախստականների օժանդակությա-

նը. Հայաստանի և արտերկրի տարբեր քաղաքներում ստեղծվեցին Եղբայրական օգնության կոմիտեներ, նամակներ հղեց պետական բարձրագույն ատյաններին՝ բարձրաձայնելով Թուրքիայում կատարվող արյունահեղությունների մասին: Ամբողջովին հայաթափելով Արևմտյան Հայաստանը՝ թուրքերը շարժվեցին դեպի Հայաստանի Արևելյան հատված՝ Երևան և Սուրբ Էջմիածին: 1918թ. մայիսին հայ ժողովուրդը ոտքի կանգնեց և Ղարաքիլիսայի, Բաշ-Ապարանի, Սարդարապատի անհավասար մարտերում հաղթանակ տարավ թշնամու հանդեպ՝ արգելելով նրա մուտքը Մայր երկիր: Պայքարի օրերին չդադարեցին հնչել եկեղեցիների զանգերը, Գևորգ Ե կաթողիկոսը, չնայած սպառնացող վտանգին, չլքեց Մայր Աթոռի տարածքը, ռազմաճակատում հանդես եկան Հայոց եկեղեցու մի շարք սպասավորներ՝ Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը, Զավեն եպիսկոպոս Մահտեսի Բաբայանը, Թադեոս, Եզնիկ վարդապետները, Զաքար քահանա Տեր-Հարությունյանը, Հովհաննես քահանա Տեր-Մովսիսյանը և այլոք:

Փառահեղ հաղթանակին հետևեց 1918թ. մայիսի 28-ին Հայաստանի առաջին Հանրապետության ծնունդը, որը միանշանակ ողջունվեց Հայոց Եկեղեցու կողմից: Չնայած Առաջին հանրապետության կարճատև գոյությանը, Հայոց եկեղեցու և կառավարության միջև սկսվել էին ձևավորվել ջերմ հարաբերություններ, Հայ Առաքելական Եկեղեցու համար ազատ շունչ քաշելու և գործելու հնարավորություն էր ստեղծվել:

§ 3. Հայոց եկեղեցին խորհրդային հասարակարգի տարիներին

Նոր հանրապետության ընձեռած լայն հնարավորությունները երկար չտևեցին: 1920թ. խորհրդային ուժերի ներխուժումը Հայաստան նոր փորձությունների սկիզբ դարձավ Հայոց եկեղեցու համար, ինչը ձգվեց ավելի քան 70 տարի: Խորհրդային իշխանությունն աստվածամերժությունը պաշտոնապես հռչակելով որպես գաղափարախոսություն՝ սկսեցին ճնշվել կրոնն ու եկեղեցին:

1920թ. դպրոցը վերջնականապես անջատվեց եկեղեցուց, քիչ ավելի ուշ առգրավվեց եկեղեցական ողջ ունեցվածքը՝ ծիսական սպասքը, թանգարանային նմուշները, ձեռագիր հարստությունը, հողակմասերը, քանդվեցին կամ պահստների ու ախոռների վերածվեցին հարյուրավոր եկեղե-

ցիներ (մնացել էր ընդամենը 4 եկեղեցի, իսկ 800-ը փակվել էր հիմնականում վարչական եղանակով), ստեղծվեցին եկեղեցու ոչնչացմանը միտված մի քանի կազմակերպություններ: Նման ծանր պայմաններում անգամ Գևորգ Ե կաթողիկոսին հաջողվեց փոփոխել եկեղեցական տոմարը, հիմնել Գերագույն հոգևոր խորհուրդը, հաստատել ազգային-եկեղեցական ժողովի կանոնադրությունը: Ի թիվս 30-ական թվականներին մահվան դատապարտված և աքսորված բազմաթիվ հոգևորականների (ավելի քան 200 հոգի), Խորհրդային ռեպրեսիաների զոհ դարձավ նաև Խորեն Ա Մուրադբեկյան կաթողիկոսը (1932-1938թթ.), ով սպանվեց իր առանձնասենյակում՝ խորհրդային գործակալների ձեռքով:

1941թ. սկված Հայրենական մեծ պատերազմի տարիներին Հայոց եկեղեցին, իր փոքր հնարավորություններով հանդերձ կանգնեց պետության կողքին՝ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանի նախաձեռնությամբ հանգանակություններ և ռազմական ուժ («Սասունցի Դավիթ» և «Գեներալ Բաղրամյան» տանկային շարասյուներ) ուղարկելով ռազմաճակատ: Այս փաստը փոքր-ինչ փոխեց Խորհրդային կառավարության մոտեցումը Հայոց եկեղեցու նկատմամբ, ինչի արդյունքում 1945 թվականին թույլատրվեց կաթողիկոսական ընտրություններ անցկացնել (ընտրվեց Գևորգ Զ Չորեքչյանը, 1945-1954թթ.), հրատարակել «Էջմիածին» պաշտոնական ամսագիրը, բացվեց Հոգևոր ճեմարանը:

Գևորգ կաթողիկոսով սկսվեց վերազարթոնքի նոր փուլ, որը շարունակվեց նաև Վազգեն Ա Պալճյան (1955-1994թթ.) հայրապետի օրոք: Ճիշտ է, խորհրդային իշխանություններն ամբողջովին ազատ չէին թողել Հայ Առաքելական Եկեղեցուն, և դեռևս գոյություն ունեին բազում սահմանափակումներ, սակայն կաթողիկոսի հեռատես քայլերի շնորհիվ եկեղեցին փոքր քայլերով շարունակում էր ազգային-եկեղեցական իր գործունեությունը: Վերանորոգվեցին ու կառուցապատվեցին Սուրբ Էջմիածինը և մի շարք եկեղեցիներ ու վանքեր (Գայանե, Հռիփսիմե, Շողակաթ, Գեղարդավանք, Խոր Վիրապ), ուշադրություն դարձվեց կրթությանը ճեմարանում, «Էջմիածին» ամսագրի և մի շարք այլ գրքերի հրատարակությանը: Խորացվեցին հայրենիք-սփյուռք, ինչպես նաև միջեկեղեցական հարաբերությունները: 1988 թվականից սկսած Հայ եկեղեցու մի շարք եկեղեցականներ իրենց օգտակարությունը և մասնակցությունը բերեցին Արցախյան գոյամարտին, ինչպես նաև լայն աջակցություն ցուցաբերեցին հայորդիներին 1988թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժի օրերին:

§ 4. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին մեր օրերում

1991 թվականի սեպտեմբերի 21-ին Վազգեն Ա հայրապետը օրհնեց ու ողջունեց հայկական նոր պետականության՝ Հայաստանի երրորդ Հանրապետության ծնունդը: Հայոց Եկեղեցին այլևս ազատվեց Խորհրդային պետության ճնշումներից և ազատ գործելու հնարավորություն ստացավ: Ստեղծված շրջափակումը, ընթացող պատերազմն ընդդեմ ադրբեջանական զավթիչների, քաղաքական և տնտեսական ճգնաժամը չկարողացան ճնշել հայ ժողովրդի ազատատենչությունն ու Հայոց Եկեղեցուն:

1995թ. հայրապետական գահին բազմեց Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ-ն, ով անվանվեց Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոս (1995-1999թթ.): Նրա օրոք Հայոց եկեղեցին ենթարկվեց թեմական նոր բաժանման՝ նախկին 4-ի փոխարեն ունենալով 8 թեմ: Աշխուժացավ եկեղեցական կյանքը, Մայր Աթոռին է հանձնվում Գևորգյան ճեմարանը, կառուցվում է ուսանողական նոր մասնաշենք, բացվում են Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցը և Շիրակի Հոգևոր Ընծայարանը, բացվում է Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը, հրատարակվում են տասնյակ գրքեր, ամրապնդվում են միջեկեղեցական հարաբերությունները, 1995 թվականին հիմնվում է ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետը, 1996 թվականին՝ Հայաստանի աստվածաշնչային ընկերությունը:

Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակին ընդառաջ սկսվում է Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու շինարարությունը, որն ավարտվեց արդեն Ամենայն Հայոց Գարեգին Բ Ներսիսյան կաթողիկոսի օրոք: Հայոց եկեղեցու և քրիստոնեական հավատքի զորացմանը հավատարիմ նոր հայրապետի ջանքերով Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին նորանոր ձեռքբերումներով մտավ 3-րդ հազարամյակ: Կառուցվեցին ու վերանորոգվեցին տասնյակ վանքեր ու եկեղեցիներ, հարյուրներով ավելացավ հոգևորականների թիվը, նոր մակարդակի վրա դրվեց հոգևոր ճեմարանների կրթական որակը, Մայր Աթոռին վերադարձվեցին նախկինում Հայոց եկեղեցուն պատկանած մի շարք կալվածքներ և եկեղեցիներ, բարեկարգվեց, ընդարձակվեց և նոր շինություններով հարստացավ Սուրբ Էջմիածնի Մայրավանքը:

Գարեգին Բ կաթողիկոսի բարձր նախագահությամբ 2001թ. մեծ շուքով տոնվեց Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700 ամյակը: Գարեգին Բ կաթողիկոսի ջանքերով կյանքի են կոչվել սոցիալական, բարեգործական, մանուկների ու պատանիների հոգևոր կրթությանն օժանդակող մի շարք ծրագրեր: Ամրացվել և ընդլայնվել են միջեկեղեցական հարաբերությունները: Հայոց եկեղեցին, այսօր կանգնած է հաստատուն հիմքերի վրա, դեպի լույս և փրկություն է առաջնորդում իր հավատավոր հոտին:

Գլուխ
Հոգևոր իրավունքը Հայաստանի երկրորդ Հանրապետությունում

§ 1. ՀԽՍՀ օրենսդրությունը և եկեղեցի-պետություն փոխհարաբերությունները Հայաստանի երկրորդ Հանրապետությունում

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո ՀԽՍՀ առաջին Սահմանադրությունը (1922թ.) հռչակել էր եկեղեցու անջատումը պետությունից և դպրոցի անջատումը եկեղեցուց: 1943-ին ձևավորվեց ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհուրդը, որը կրոնի նկատմամբ պետական քաղաքականությունն իրականացնող թերևս միակ մարմինն էր, հսկում էր կրոնական պաշտամունքների վերաբերյալ օրենսդրության կիրառումը, իրականացնում պետական և կրոնական կազմակերպությունների միջև կապը և այլն: ՀԽՍՀ Սահմանադրության 50-րդ հոդվածը երաշխավորում էր խղճի ազատություն, այսինքն՝ ցանկացած կրոն դավանելու կամ ոչ մի կրոն չդավանելու իրավունք: «Կրոնական միավորումների մասին» ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության 1977թ. ապրիլի 28-ի հրամանագրի համաձայն՝ իրենց կրոնական պահանջմունքները բավարարելու նպատակով հավատացյալները (18 տարեկանից բարձր) կարող էին միավորվել համայնքների կամ խմբերի մեջ:

Եթե մինչև խորհրդային կարգերի հաստատումը Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու հոգևոր գործառույթներն ընդգրկում էին նաև հասարակական-քաղաքական, ազգապահպան և այլ ոլորտները, խորհրդային կարգերի հաստատումից հետո փոխվեց եկեղեցու գործառույթը. այն հիմնականում զբաղվում էր ծիսակատարությունների կատարմամբ: Եկեղեցին պետության նկատմամբ վարում էր չեզոք քաղաքականություն: Հայրենական պատերազմի տարիներին, այնուամենայնիվ, եկեղեցու դերը փոքր-ինչ կարևորվեց: Եկեղեցին կատարում էր հանգանակություններ՝ հօգուտ երկրի պաշտպանության, եկեղեցու գործուն մասնակցության շնորհիվ ակտիվացավ հայրենադարձության գործընթացը 1946-ին:

§ 2. Կրոնական միավորումների և հոգևորականների գործունեության սահմանափակումները Հայաստանի երկրորդ Հանրապետությունում

Խորհրդային պետությունն իր քաղաքացիներին հնարավորություն էր տալիս դավանելու ցանկացած կրոն, պայմանով, որ կրոնական ծեսի կատարումը կապված չլինի օրենքների խախտման, մյուս քաղաքացիների իրավունքների ոտնահարման և մարդկանց առողջությանը վնաս պատճառելու հետ:

Խորհրդային Հայաստանի օրենքները կրոնական միավորումներին և պաշտամունքի սպասավորներին արգելում էին հավատացյալների աղոթաժողովներն ու այլ հավաքույթներն օգտագործել պետության շահերի դեմ ուղղված քաղաքական ելույթների համար, հավատացյալներին ստիպել հրաժարվելու իրենց քաղաքացիական պարտականությունները կատարելուց և խորհրդային օրենքներով նրանց տրված իրավունքներն իրագործելուց, այսինքն՝ արգելում էին երկրի պետական, մշակութային, հասարակական-քաղաքական կյանքից քաղաքացիներին օտարելու քարոզչություն տանել, կատարել մարդկանց առողջությանը վնաս պատճառող ծեսեր, կազմակերպել ու անցկացնել հասարակական կարգը խանգարող կրոնական երթեր ու ծիսակատարություններ: Կրոնական միավորումներն իրավունք չունեին հավատացյալներին ստիպել վճարելու որևէ տուրք, ինչպես նաև կատարելու սնահավատություն առաջացնող գործողություններ:

Կրոնական պաշտամունքների մասին օրենսդրությունը խախտելու համար մեղավորները պատասխանատվություն էին կրում, ինչպես որ գործող օրենքները խախտող մյուս բոլոր քաղաքացիները:

§ 3. «Խղճի ազատության մասին» ՀԽՍՀ օրենքը և այն խախտելու համար նախատեսված պատասխանատվությունը Հայաստանի երկրորդ Հանրապետությունում

Խղճի ազատությունը խորհրդային սոցիալիստական ժողովրդավարության օրգանական, անկապտելի բաղկացուցիչ մասն էր: ՀԽՍՀ-ում խղճի ազատությունը ոչ միայն հռչակվում է, այլև երաշխավորվում էր Սահմանադրությամբ, ինչպես նաև պաշտամունքի մասին խորհրդային

օրենսդրության պահպանման պետական վերահսկողության համակարգով:

ԽՍՀՄ Սահմանադրության 52-րդ հոդվածը հռչակում էր. «ԽՍՀՄ - քաղաքացիների համար երաշխավորվում է խղճի ազատություն, այսինքն՝ ցանկացած կրոնը դավանելու կամ ոչ մի կրոն չդավանելու, կրոնական պաշտամունքային ծեսեր կատարելու կամ աթեիստական պրոպագանդա մղելու իրավունք: Կրոնական հավատալիքների առնչությամբ թշնամանք և ատելություն հրահրելն արգելվում է:

ԽՍՀՄ-ում եկեղեցին անջատված էր պետությունից և դպրոցը՝ եկեղեցուց»:

Պաշտամունքի մասին խորհրդային օրենսդրությունը հավասարապես պաշտպանում էր ինչպես հավատացյալների, այնպես էլ ոչ հավատացյալների իրավունքները: Սահմանադրությունը հռչակում էր, որ ԽՍՀՄ-ի բոլոր քաղաքացիները օրենքի առաջ հավասար են՝ անկախ ծագումից, սոցիալական և գույքային դրությունից, ռասայական և ազգային պատկանելությունից, սեռից, կրթությունից, լեզվից, կրոնի նկատմամբ ունեցած վերաբերմունքից, զբաղմունքի տեսակից ու բնույթից, բնակության վայրից և այլ հանգամանքներից: «ԽՍՀՄ քաղաքացիների իրավահավասարությունն ապահովվում է տնտեսական, քաղաքական, սոցիալական և կուլտուրական կյանքի բոլոր բնագավառներում» /հոդված 34/:

ԽՍՀՄ-ում սահմանված էին հավատացյալների իրավունքները ոտնահարումից պաշտպանող իրավական հատուկ նորմեր: ՌԽՖՍՀ Գերագույն սովետի նախագահությունը «ՌԽՖՍՀ քրեական օրենսգրքի 142-րդ հոդվածի կիրառման մասին» 1966թ. մարտի 18-ին ընդունած հատուկ որոշմամբ պարզաբանել էր, որ եկեղեցին պետությունից և դպրոցը եկեղեցուց անջատելու մասին օրենքների խախտում ասելով, խախտում, որի համար ՌԽՖՍՀ քրեական օրենսգրքի 142-րդ հոդվածով նախատեսված էր քրեական պատասխանատվություն, հասկացվում էր. «…քաղաքացիներին աշխատանքի կամ ուսումնական հաստատություն ընդունելուց հրաժարումը, աշխատանքից ազատումը կամ ուսումնական հաստատությունից հեռացումը, քաղաքացիներին օրենքով նախատեսված արտոնություններից ու առավելություններից զրկումը, ինչպես նաև նրանց իրավունքների էական այլ սահմանափակումները՝ կախված կրոնի նկատմամբ նրանց վերաբերմունքից»: Հավատացյալների իրավունքները պաշտպանող նման օրենքներ ընդունվել էին նաև մյուս միութենական հանրապետություններում:

Ինքնին հասկանալի էր, որ խորհրդային պետությունն իր օրենքներով ոչ ոքի չէր արգելում կատարել կրոնական ծեսեր՝ պսակադրություն, երեխաների մկրտություն, ինչպես նաև աղոթաժողովների հաճախում և այլն: Դա, օրենքներով, համարվում էր յուրաքանչյուր քաղաքացու անձնական գործը:

Պաշտամունքի մասին խորհրդային օրենսդրությունը՝ ինչպես հավատացյալների, այնպես էլ կրոնական միավորումների իրավունքների ու պարտականությունների համադրություն էր:

Պաշտամունքի մասին օրենքներն ապահովում էին կրոնների հավասարությունը: Դրանք բոլորն էլ օգտվում էին միևնույն իրավունքներից ու պարտականություններից, ի թիվս որոնց՝ նաև հավատացյալների կրոնական համայնքի կամ խմբի գրանցումը պետական մարմիններում: ԽՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական գործերի խորհրդի կողմից որոշում ընդունելուց հետո միայն համայնքը կարող էր ձեռնամուխ լինել իր գործունեությանը: 1966 թվականի մարտի 18-ին հրապարակվեց «Կրոնական պաշտամունքների վերաբերյալ օրենսդրությունը խախտելու համար վարչական պատասխանատվության մասին» ՌԽՖՍՀ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագիրը:

Օրենսդրության խախտում, նշվում էր այդ հրամանագրում, պետք է համարել կրոնական միավորումների ղեկավարների՝ այդ միավորումներն իշխանության մարմիններում գրանցելուց խուսափելը, կրոնական ժողովներ, թափորներ և պաշտամունքային այլ ծեսեր կազմակերպելու և անցկացնելու՝ օրենսդրությամբ հաստատված կարգը խախտելը, պաշտամունքի սպասավորների ու կրոնական միավորումների անդամների կողմից պաշտամունքի հետ առնչություն չունեցող հատուկ մանկական ու պատանեկան ժողովներ, ինչպես նաև աշխատանքային, գրական և այլ խմբակներ ու խմբեր կազմակերպելը: Օրենքների այդ կարգի խախտումների համար նախատեսվում էր 50 ռուբլի տուգանք, որը դնում էին շրջանային և քաղաքային գործադիր կոմիտեներին առընթեր վարչական հանձնաժողովները: Խորհրդային օրենքներն արգելում էր նաև կրոնական կազմակերպությունների և պաշտամունքի սպասավորների օգտին ստիպողական կարգով տուրքեր և հարկեր գանձելը, զանգվածային տարածման համար դիմումներ, նամակներ, թռուցիկներ և այլ փաստաթղթեր պատրաստելը, որոնցում կոչ էր արվում չկատարել կրոնական պաշտամունքի մասին օրենսդրությունը, բնակչության հոծ զանգվածների շրջանում սնահավատություն հրահրելու նպատակով գործողություններ կատարելը:

Համանման հրամանագրեր ընդունվել էին նաև միութենական մյուս հանրապետություններում: Այդ բոլոր օրենսդրական ակտերը ոչ մի կերպ չէին սահմանափակում խղճի ազատությունը: Դրանցում չկային կրոնական համոզմունքների համար նախատեսվող պատժի դրույթներ:

ՌԽՖՍՀ քրեական օրենսգրքի 227-րդ հոդվածը (ՌԽՖՍՀ 1962 թվականի հուլիսի 25-ի օրենքի խմբագրությամբ) ուղղված էր կրոնական ծեսերի կատարման պատրվակով քաղաքացիների անձի և իրավունքների ոտնահարումների դեմ: Այդ հոդվածին համապատասխան՝ պատիժ էր նախատեսվում հավատացյալների այնպիսի խումբ ստեղծելու կամ ղեկավարելու համար, որի գործունեությունն ուղեկցվում էր քաղաքացիների առողջությանը վնաս պատճառելով կամ նրանց անձի ու իրավունքների դեմ այլ ոտնձգություններով, կամ հասարակական գործունեությունից կամ քաղաքացիական պարտականությունները կատարելուց հրաժարվելուն դրդելով, ինչպես նաև այդ խմբում անչափահասների ներգրավմամբ: Համանման հոդվածներ կային նաև միութենական մյուս հանրապետությունների քրեական օրենսգրքերում: Այդ բոլոր ակտերը ծառայում էին հավատացյալների իրավունքների պաշտպանությանը, նրանց առողջության ու քաղաքացիական արժանապատվության պահպանմանը:

Կրոնական կազմակերպություններն ու կրոնական կենտրոնների արհեստանոցները կարող էին մշտական ու ժամանակավոր աշխատանքի ընդունել բանվորների ու ծառայողների: Նրանց վրա տարածվում էր ԽՍՀ Միության ու միութենական հանրապետությունների աշխատանքի մասին օրենսդրությունը, բայց միայն այն դեպքում, եթե աշխատանքային պայմանագրերը կրոնական միավորումների ու եկեղեցական ձեռնարկությունների հետ կնքվել էին արհմիութենական մարմինների մասնակցությամբ:

Աշխատավարձը սահմանվում էր կրոնական կազմակերպության ու աշխատողի փոխադարձ համաձայնությամբ: Այն չպետք է ցածր լիներ տվյալ վայրի պետական հիմնարկությունների ու ձեռնարկությունների աշխատողների գործող դրույքաչափերից: Աշխատանքի պաշտպանությունը պետք է իրագործվեր ըստ հաստատված պետական նորմաների:

§ 4. Կրոնական միավորումների բյուջեի գոյացումը Հայաստանի երկրորդ Հանրապետությունում

Կրոնական համայնքների միջոցները գոյանում էին աղոթատներում հավատացյալների կամավոր նվիրատվություններից, պաշտամունքի ա-

ռարկաների վաճառքից ու կրոնական ծեսերի կատարումից ստացվող դրամական միջոցներից, ինչպես նաև օրենքով սահմանված դրամական այլ մուտքերից: Այդ միջոցներն օգտագործվում էին աղոթատների և պաշտամունքային գույքի պահպանման, պաշտամունքի սպասավորներին, կրոնական կենտրոններին և հոգևոր կառավարման այլ մարմիններին սպասարկող անձնակազմի պահպանման և այլ ծախսերի համար, որոնք բխում էին կրոնական միավորումների պահանջներից:

Կրոնական միավորման գործերը, նրա ունեցվածքը և դրամական միջոցները կառավարելու համար հավատացյալներն ընդհանուր ժողովում իրենցից ընտրում էին գործադիր մարմին, ինչպես նաև վերստուգիչ հանձնաժողով, որոնք ապահովում էին դրամական միջոցների մուտքի, ելքի հաշվառումը և պահպանությունը:

Կրոնական կազմակերպությունների ու պաշտամունքի սպասավորների /հոգևորականների/ օգտին քաղաքացիներից դրամական ու գույքային տուրքերի և հարկերի հարկադրական գանձում չէր թույլատրվում:

Կրոնական կազմակերպությունները վճարում էին իրենց տրամադրության տակ գտնվող սեփական կառույցների և փոխադրամիջոցների համար, ինչպես նաև իրենց օգտագործմանը հատկացված հողամասերի համար օրենսդրությամբ հաստատված հարկերը: Կառույցների հարկը ու եկեղեցական միավորումներին տրամադրված հողամասերի համար հողային ռենտան չէր գերազանցում առանց բացառության բոլոր ձեռնարկությունների ու կազմակերպությունների համար երկրում սահմանված նորմաները:

Եկեղեցիների և կրոնական կազմակերպությունների՝ մոմեր, սրբապատկերներ և պաշտամունքի անհրաժեշտ առարկաներ արտադրող արհեստանոցների եկամուտները հարկվում էին օրենքով սահմանված կարգով, ինչպես յուրաքանչյուր պետական ձեռնարկության եկամուտները:

Եկամտահարկ վճարողներ էին նաև կրոնական պաշտամունքի սպասավորները, ինչպես նաև կրոնական համայնքների գործադիր մարմինների անդամներն ու այն քաղաքացիները, որոնք կրոնական ծեսերի կատարումից ու համայնքում գործունեության այլ ձևերով զբաղվելիս եկամուտներ էին ստանում:

§ 5. Ընտանիքում երեխաների կրոնական դաստիարակությունը Հայաստանի երկրորդ Հանրապետությունում

Խորհրդային իրավունքը չէր բացառում նաև եկեղեցական ուսումնական հաստատություններից դուրս քաղաքացիների կրոնուսուցումը: Քաղաքացիները կարող էին կրոն ուսուցանել ու կրոն սովորել մասնավոր կարգով: Ծնողներին չէր արգելվում իրենց երեխաներին կրոն ուսուցանել տանը, սակայն նման ուսուցումը չպետք է կրեր դպրոցական տիպի խմբակային պարապմունքի բնույթ: ԽՍՀՄ-ում դպրոցի՝ եկեղեցուց անջատված լինելը նշանակում էր ժողովրդական կրթության ու դաստիարակության գործի վրա կրոնական կազմակերպությունների որևէ ազդեցության անթույլատրելիություն: «Ժողովրդական կրթության մասին ԽՍՀՄ և միութենական հանրապետությունների օրենսդրության հիմունքների» 4-րդ հոդվածը հռչակում էր «կրոնի ազդեցությունը բացառող կրթության աշխարհիկ բնույթը»: Հավատացյալների երեխաների, ինչպես նաև երկրի բոլոր քաղաքացիների երեխաների վրա տարածվում էր ընդհանուր միջնակարգ կրթության մասին պահանջը: Եվ ոչ ոք իրավունք չուներ, վկայակոչելով իր կրոնական համոզմունքները, երեխաներին արգելել դպրոց հաճախել:

Իսկ ընտանիքում երեխաների կրոնուսուցումը կարող էր իրագործվել միմիայն ծնողների փոխադարձ համաձայնության դեպքում:

Գլուխ
Հոգևոր իրավունքը Հայաստանի երրորդ Հանրապետությունում

§ 1. ՀՀ օրենսդրությունը և եկեղեցի-պետություն փոխհարաբերությունները Հայաստանի երրորդ Հանրապետությունում

Հայ ժողովուրդը միշտ էլ բարձր է գնահատել եկեղեցու և քրիստոնեական հավատի դերն ու նշանակությունը, կրոնի նկատմամբ ցուցաբերել է առանձնահատուկ վերաբերմունք: Այդ վերաբերմունքն էապես փոխվեց և կրոնական արժեքների նշանակությունը զգալիորեն բարձրացավ, երբ Հայաստանի Հանրապետությունում արմատական՝ սոցիալ-տնտեսական բարեփոխումների հետևանքով ձևավորվեցին պետաեկեղեցական նոր հարաբերություններ:

Երրորդ հանրապետությունում, 1991 թվականից ի վեր, եկեղեցի-պետություն հարաբերությունները դինամիկ ընթացք ստացան: Այդ հանգամանքը պայմանավորված էր ինչպես անկախության ձեռքբերմամբ, այնպես էլ 1995թ. հուլիսի 5-ին ընդունված Սահմանադրությամբ: 1995թ. ընդունված ՀՀ Սահմանադրության հոդված 23-ը սահմանում էր, որ՝ «Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունք: Կրոնի և համոզմունքների արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ Սահմանադրության 45 հոդվածում նախատեսված հիմքերով»:

Այսպիսով, 90-ական թվականների կեսերին Հայաստանի Հանրապետությունում ձևավորվեցին կրոնական կազմակերպությունների անարգել գործունեության իրավական հիմքերը: Բայց պետաեկեղեցական հարաբերությունների ամբողջական հայեցակարգի բացակայությունը, խղճի ազատության հարցերի թերկարգավորվածությունը, պետաեկեղեցական հարաբերությունների իրավական կարգավորվածության անկատարությունը, օրենսդրական կանոնակարգման գործում հապաղումները, դավանաբանական հարաբերություններում առկա ոչ կառուցողական միտումները պատճառ դարձան Հայաստանի Հանրապետություն զանազան միստիկական և կեղծ աղանդների ներթափանցմանը:

Պետության և եկեղեցու փոխհարաբերությունների իրավական կարգավորման հայեցակարգային փոփոխության հիմքը դրվեց 2005 թվականի նոյեմբերի 27-ին ընդունված սահմանադրական փոփոխություններով: ՀՀ փոփոխված Սահմանադրությունը, վերահաստատելով կրոնի

նկատմամբ ժողովրդավարական պետությանը հատուկ իրավական այնպիսի հիմքեր, ինչպիսիք են պետության աշխարհիկությունը, անկախ կրոնական պատկանելությունից քաղաքացիների իրավահավասարությունը, նոր մոտեցում ցուցաբերեց կրոնական կազմակերպությունների հետ հարաբերությունների իրավական կարգավորման, դրանց ոչ դավանաբանական գործունեության վերահսկողության, ինչպես նաև երկրում տիրող կրոնական իրավիճակի նկատմամբ: Պետաեկեղեցական նոր հարաբերությունների համար բնութագրական է այն, որ պետությունը, ըստ արժանվույն գնահատելով կրոնական դաստիարակության նշանակությունը, բարոյա-հոգեբանական դաստիարակության ոլորտում առաջացող խնդիրները համարեց առանձնահատուկ կարգավորման առարկա և ընդգծեց, որ պետաեկեղեցական հարաբերություններում ինքն է հանդիսանում բոլոր քաղաքացիների (հավատացյալ և ոչ հավատացյալ) շահերի իրականացումն ապահովող առաջատար ուժը:

Դրա վկայությունն է այն փաստը, որ Սահմանադրությունն ամրագրելով օրենքի առաջ բոլոր կրոնական կազմակերպությունների հավասարությունը, Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցին ճանաչեց ազգային եկեղեցի և հնարավոր համարեց պետության և Հայ Առաքելական Եկեղեցու հարաբերությունները կարգավորել առանձին օրենքով: Այսինքն՝ պետությունը, նկատի ունենալով Հայ եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում, նրա դերն ու նշանակությունը հայապահպանության, աշխարհասփյուռ հայերի միավորման, հայրենիք–սփյուռք կապերի ամրապնդման գործում, Հայ Առաքելական Եկեղեցուն վերապահեց նախապատվություն և նրա հետ հաստատեց առանձնահատուկ հարաբերություններ:

§ 2. «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի դերը հոգևոր իրավունքում

Կրոնի նկատմամբ նոր վերաբերմունքի հիմքը դրվեց «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» 1991թ. ՀՀ օրենքով: Իր էությամբ ժողովրդավարական այդ ակտը սահմանեց բոլոր կրոնական կազմակերպությունների գործունեության հավասար պայմաններ, վերացրեց կրոնական կազմակերպությունների պաշտամունքային, սոցիալական, արտադրատնտեսական, բարեգործական և այլ ոչ պաշտ-

ամունքային գործունեության իրականացմանը խոչընդոտող բոլոր չարդարացված արգելքները, ճանաչեց կրոնական կազմակերպությունների սեփականության իրավունքը, կրոնի սպասավորների նկատմամբ տարածեց աշխատանքային, սոցիալական ապահովության և սոցիալական ապահովագրության նորմերը:

«Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը, ուղեցույց ունենալով միջազգային կոնվենցիաների հիմնադրույթները, ապահովեց բոլոր կրոնների և դավանանքների հավասարությունը, խղճի և կրոնական դավանանքի ազատությունը: «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը որպես հիմնական սկզբունք ամրագրեց, որ յուրաքանչյուր քաղաքացի ազատորեն է որոշում իր վերաբերմունքը կրոնի նկատմամբ, իրավունք ունի դավանելու ցանկացած կրոն կամ չդավանելու ոչ մի կրոն, անձնապես կամ այլ քաղաքացիների հետ համատեղ կատարելու կրոնական ծեսեր:

1991թ. հունիսի 17-ին ընդունված «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը պետության կողմից եկեղեցու հանդեպ վերաբերմունքի արտահայտություններից կարելի է համարել: Սակայն այս օրենքը, իր բոլոր առավելություններով հանդերձ, ուներ մեկ հիմնական բաց՝ Հայ Առաքելական Եկեղեցին համահավասարեցվում էր կրոնական մյուս կազմակերպություններին:

«Կրոնական կազմակերպություն» հասկացության ներքո ընկալվում են բոլոր այն կազմակերպությունները, որոնք իրականացնում են կրոնական գործունեություն և չի բացառվում, որ կրոնական գործունեություն իրականացնող կազմակերպությունների մեջ լինեն այնպիսիք, որոնք ի սկզբանե քրիստոնեական հիմնական վարդապետությունները չընդունելու պատճառով ավանդական եկեղեցիների կողմից դիտվում են որպես աղանդավորական կազմակերպություններ:

Այս առումով անթույլատրելի էր, որ եկեղեցին համահավասարեցվեր նման կարգավիճակ ունեցող, ավանդական եկեղեցիների կողմից «աղանդավորական» համարվող կրոնական կազմակերպություններին և նրանց հետ դրվեր միևնույն սանդղակին: Այս կրոնական կազմակերպությունների մեջ ներառված են նաև ավանդական մեր քույր եկեղեցիները. Հայաստանում համայնք ունեն ասորիները, ռուսները, կաթոլիկները, հույները: Հետևաբար, անկարելի է արդարացի նկատել այդ գնահատականը, որ Հայ Առաքելական Եկեղեցին, Ռուս Ուղղափառ Եկեղեցին, Կաթոլիկ եկեղեցին կարող են միևնույն սանդղակի վրա հայտնվել կրո-

նական այնպիսի կազմակերպությունների կողքին, որոնք ի սկզբանե աղանդավորական գործելաոճ ունեն:

Այլ երկրների կրոնական օրենսդրության պրակտիկայում ազգային եկեղեցիները հստակորեն տարանջատվում են տվյալ երկրի տարածքում գործող մյուս եկեղեցիներից, առավել ևս՝ կրոնական այնպիսի կազմակերպություններից, որոնք առնչություն չեն ունեցել իրենց ժողովրդի ինքնության, պատմության կերտման գործընթացների հետ: Այս առումով «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը եկավ լրացնելու այդ բացը, շեշտելու, որ հայ ժողովրդի ազգային մշակույթի, ինքնության պահպանման գործում կարևոր դերակատարություն է ունեցել Հայ Առաքելական Եկեղեցին և որ հայ ժողովրդի կյանքի, ապագայի մեջ այն նաև շարունակելու է ունենալ նույն կարևոր դերակատարությունը:

§ 3. «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքի դերը հոգևոր իրավունքում

Կարելի է «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքը համարել ուշացած, քանի որ, փաստորեն, մինչ այդ եկեղեցի-պետություն հարաբերությունները հիմնականում կանոնակարգվում էին միայն «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքով:

Հավանաբար 1991թ. ավելի դյուրին էր ի նպաստ եկեղեցու որևէ օրենսդրական նախաձեռնություն անցկացնել, որովհետև այդ շրջանում մեր պետությունը կաշկանդված չէր եվրոպական կառույցներին ինտեգրվելու ճանապարհին առաջացած պայմաններով: Սակայն եվրոպական կառույցներին ինտեգրվելու՝ մեզ առաջարկված պայմանների համատեքստում չափազանց ողջունելի ու չափազանց բարդ քայլ էր կյանքի կոչել նման մի նախաձեռնություն: Եկեղեցու և պետության միջև առկա հարաբերությունների ջերմությունն ու եկեղեցու ընկալվածությունը պետության կողմից՝ որպես ազգային եկեղեցի, ոչ թե իրավական դաշտում, այլ պարզապես մարդկանց մտայնություններում, ևս իր դերակատարությունն ունեցավ, որ բոլոր կարգի փոխհարաբերությունները միայն իրավական դաշտում ձևակերպումներ չստանան: Եկեղեցին օրենսդրական նախաձեռնություններով և օրենքներով չէ, որ իր դերակատարութ-

յունը, իր ներկայությունը, իր հեղինակությունը պետք է հաստատի հասարակության մեջ:

Ոչ ոք չունի այն միամիտ լավատեսությունը, թե օրենքներով եկեղեցու առաքելությունը շատ ավելի արդյունավետ կդառնա, քան դա հնարավոր է անել անմիջական աշխատանքի շնորհիվ: Բայց յուրաքանչյուր աշխատանք սկսելուց առաջ հայտնի է, որ կա հեղինակության հաստատման խնդիր, և պետության կողմից եկեղեցու հեղինակության վերահաստատմանն ուղղված այս քայլը (2007թ. օրենքը) ողջունելի և լավ խթան է եկեղեցու կողմից իր առաքելությունն առավել արդյունավետ իրականացնելու ուղղությամբ: Սակայն ցայսօր կան բազմաթիվ հարցեր պետության և եկեղեցու միջև, որոնք կարոտ են օրենսդրական կարգավորման:

ԱԺ կողմից օրենքի ընդունման ճանապարհով մի շարք հարցերի լուծումներ տալը հնարավորություններից միայն մեկն է: Մեկ այլ ճանապարհ է տարբեր հարցերի կառավարության որոշումներով, ենթաօրենսդրական ակտերով, եկեղեցու և պետության ներկայացուցիչների համատեղ քննարկումների արդյունքում, լուծումներ տալը: Համաձայն «ՀՀ և Հայաստանյայց Առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 9-ի՝ «Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է, Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու միջև ստորագրված համաձայնագրով սահմանված կարգին համապատասխան, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ կանոնական ծեսով իրագործած ամուսնություններն ու հռչակած ամուսնալուծությունները»:

Օրենքում ամրագրված է նաև, որ պետությունը ճանաչում է եկեղեցական խոստովանության գաղտնիությունը: Այն է՝ մեր եկեղեցու հոգևորական խոստովանահայրը՝ որպես վկա, չի կարող հարցաքննվել այն հանգամանքների մասին, որոնք նրան հայտնի են դարձել խոստովանության ժամանակ: Օրենքը հոդված 11-ով եկեղեցուն շնորհում է նաև հարկումից ազատ եկամուտներ: Այսինքն՝ եկեղեցին ունի իրավունք կազմակերպելու հասարակական դրամահավաքներ և ստանալու նվիրատվություններ ու ընծաներ, որոնք ազատ են հարկումից: Հարկումից ազատ են նաև ծիսական նշանակության առարկաների արտադրությունն ու իրացումը:

Եկեղեցու և պետության միջև կարգավորման կարիք ունեցող հարցերից է, օրինակ, հայկական եկեղեցական ճարտարապետությանը բնորոշ լուծումների կիրառությունը կրոնական այլ կազմակերպությունների

կողմից: Այսօր Հայաստանում կան կրոնական կազմակերպություններ, կրոնական գործունեություն իրականացնող խմբեր, որոնք հասարակության մեջ շփոթություններ առաջացնելու, Հայ Առաքելական եկեղեցու հետ նույնականության պատրանք ստեղծելու նպատակով փորձում են կիրառության մեջ դնել եկեղեցու ճարտարապետությանը բնորոշ մանրամասներ: Օրինակ՝ զանգակատների կառուցումը: Այսօր նկատելի է զանգակատների գործածությունը նաև աղանդավորական գործունեություն իրականացնող կրոնական կազմակերպությունների պաշտամունքային շինություններում: Նման գործելաոճ դրսևորել է, օրինակ, ավետարանական համայնքը:

Բողոքական, ավետարանական եկեղեցիներն ընդհանրապես աչքի չեն ընկնում խաչի գործածությամբ, եթե չասենք հակառակը՝ նրանք չեն ընդունում խաչի խորհուրդը, սակայն խաչի գործածության միջոցով փորձում են նույնականության պատրանք ստեղծել և շփոթության մեջ գցել հավատացյալներին՝ այն իրենց շինություններում տեղադրելով:

§ 4. Եկեղեցական գործունեություն

Եկեղեցին իր առաջնորդներին կուռքեր չի դարձնում, բոլոր անդամները մկրտված են նույն իրավունքներով և առաջնորդվում են միևնույն նշանաբանով. «Պաշտիր՛ միայն քո Տեր Աստծուն»: Եկեղեցական իշխանությունը պետք է անվերապահորեն և հավատարմորեն ծառայի 2000 տարիներ ի վեր Առաքյալներից փոխանցված Աստվածաշնչին:

Եկեղեցին առաջարկում է փրկության այնպիսի տարբերակ, որն ընդունում է գոյության բոլոր մեծ հարցականները՝ չձգտելով դրանց տալ պարզունակ բացատրություն: Եկեղեցու քարոզած Աստվածը ցանկանում է ամենքին փրկել Հիսուս Քրիստոսով:

Եկեղեցին համահունչ է ժամանակակից գիտություններին, պատմությանը, փիլիսոփայությանը և չի խրախուսում կտրուկ խզում աշխարհի, անհատի կամ հասարակության անցյալի հետ:

Եկեղեցին պահանջում է գիտակցված, մտածված մերձեցում: Քրիստոնյաները մասնակցում են կրոնական համայնքին, որն առաջարկում է ազատ ապրելու և մտածելու հնարավորություն: Բայց նրանք պետք է ինքնուրույնաբար տան իրենց հավատքի պատասխանը և ազատ կամքով գործեն՝ համաձայն իրենց խղճի:

Եկեղեցին զարգացնում է հավատքի հանդեպ գիտակցվածություն, որը յուրաքանչյուրին՝ հավատացյալ կամ անհավատ, թույլ կտա ինքնու-

րույն դատողություններ անել: Յուրաքանչյուր հավատացյալ իր հոգևոր սնունդը կարող է տարբեր կերպ ստանալ: Այն ամենը, ինչ մարդկային է, պետք է մութ ու անծանոթ չմնա նրան:

Եկեղեցին պետք է կարողանա, ինչպես ցանկացած ընկերություն կամ կառույց, հենվել իր անդամների ակտիվ մասնակցության (ներառյալ ֆինանսական) և աջակցության վրա: Եկեղեցին չի պահանջում այնպիսի ներդրումներ, որոնք կխարխլեն յուրաքանչյուրի անհատական հավասարակշռությունը, ընտանեկան կյանքը, մասնագիտական և սոցիալական պարտականությունները:

Եկեղեցին հարգում է իր հավատացյալների ազատությունները և վերահսկում է կյանքի հավասարակշռությունը, ակնհայտ ստուգումներ և ուղղումներ է կատարում՝ բաց թողածը լրացնելու համար:

Եկեղեցին քարոզում է Աստվածաշունչը՝ Քրիստոսի խոսքը: Եկեղեցին գիտակցաբար, պահանջում է որոշակի պատրաստվածություն և ժամանակ՝ յուրաքանչյուրի ուղին դեպի Ավետարանը դարձնելու համար:

Եկեղեցին բաց է և հյուրընկալ բոլորի առջև: Այն Ավետարանի խոսքերը հաղորդում է ինչպես Քրիստոսը՝ «Եթե ցանկանում ես»:

Եկեղեցին իր ներսում ընդունում է զանազանություն և խրախուսում է համագործակցությունը տարբեր տենդենցների միջև: Այն այսօր մեծապես նպաստում է էկումենիկ և միջեկեղեցական երկխոսություններին:

Գլուխ
Հայաստանի երրորդ Հանրապետության օրենսդրությունը որպես հոգևոր իրավունքի երաշխիք

§ 1. ՀՀ Սահմանադրությունը որպես մտքի, խղճի և կրոնի ազատության երաշխիք

Հայ ժողովուրդը, հիմք ընդունելով Հայաստանի անկախության մասին հռչակագրում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքները և համազգային նպատակները, իրականացրած ինքնիշխան պետության վերականգնման իր ազատասեր նախնիների սուրբ պատգամը, նվիրված հայրենիքի հզորացմանը և բարգավաճմանը, ապահովելու համար սերունդների ազատությունը, ընդհանուր բարեկեցությունը, քաղաքացիական համերաշխությունը, հավաստելով հավատարմությունը համամարդկային արժեքներին, ընդունում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը:

Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:

Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են:

Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն:

Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը: Այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և օրենքներին:

Միջազգային պայմանագրերն ուժի մեջ են մտնում միայն վավերացվելուց կամ հաստատվելուց հետո:

Միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը: Սահմա-

նադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել:

Հայաստանի Հանրապետությունում եկեղեցին անջատ է պետությունից:

Հայաստանի Հանրապետությունը **ճանաչում է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝** որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում:

Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով գործող բոլոր կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը:

Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունները կարող են կարգավորվել օրենքով:

Պատմության և մշակույթի հուշարձանները, մշակութային այլ արժեքները գտնվում են պետության հոգածության և պաշտպանության ներքո:

Հայաստանի Հանրապետությունը միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի շրջանակներում նպաստում է հայկական սփյուռքի հետ կապերի ամրապնդմանը, այլ պետություններում գտնվող հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանմանը, հայ կրթական և մշակութային կյանքի զարգացմանը:

Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև:

Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, **կրոնից,** աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ քարոզի, եկեղեցական արարողությունների և պաշտամունքի այլ ծիսակատարությունների միջոցով արտահայտելու ազատությունը:

Այս իրավունքի արտահայտումը կարող է սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է հասարակական անվտանգության, առողջության, բարոյականության կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար:

Յուրաքանչյուր ոք պարտավոր է պահպանել Սահմանադրությունը և օրենքները, հարգել այլոց իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը:

Արգելվում է իրավունքների և ազատությունների օգտագործումը սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, **կրոնական** ատելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակով:

§ 2. «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը որպես մտքի, խղճի և կրոնի ազատության երաշխիք

Ղեկավարվելով Հայաստանի անկախության մասին հռչակագրով, նկատի ունենալով հայ ժողովրդի հոգևոր զարթոնքը, նրա դարավոր հոգևոր փորձն ու ավանդույթները, ճանաչելով Հայաստանյայց Առաքելական եկեղեցին, որպես հայ ժողովրդի ազգային եկեղեցի, նրա հոգևոր կյանքի շինության ու ազգապահպանման կարևոր պատվար, առաջնորդվելով միջազգային նորմերով սահմանված մարդու իրավունքների և հիմնական ազատությունների սկզբունքներով և հավատարիմ լինելով Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 18-րդ հոդվածի դրույթներին, Հայաստանի Հանրապետությունն ընդունել է «Խղճի ազատության և կրոնական կազմակերպության մասին» օրենքը:

Հայաստանի Հանրապետությունում ապահովվում է քաղաքացիների խղճի և կրոնական դավանանքի ազատությունը: Յուրաքանչյուր քաղաքացի ազատորեն է որոշում իր վերաբերմունքը կրոնի նկատմամբ, իրավունք ունի դավանելու ցանկացած կրոն կամ չդավանելու ոչ մի կրոն, անձնապես կամ այլ քաղաքացիների հետ համատեղ կատարելու կրոնական ծեսեր:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն օրենքի առջև հավասար են քաղաքացիական, քաղաքական, հասարակական, տնտեսական և մշակութային կյանքի բոլոր բնագավառներում՝ անկախ կրոնի նկատմամբ իրենց վերաբերմունքից կամ կրոնական պատկանելությունից:

Դավանանքի նկատմամբ քաղաքացիների իրավունքների ուղղակի կամ անուղղակի սահմանափակումները, կրոնական հողի վրա հետապնդումները կամ այլ իրավունքների խոչընդոտումը, կրոնական

թշնամանքի հարուցումը առաջ են բերում օրենքով սահմանված պատասխանատվություն:

Քաղաքացու նկատմամբ չի թույլատրվում որևէ հարկադրանք կամ բռնություն՝ ժամերգություններին, կրոնական ծիսակատարություններին և արարողություններին, կրոնի ուսուցմանը մասնակցելու կամ չմասնակցելու հարցերի նկատմամբ իր վերաբերմունքը որոշելիս:

Խղճի ազատության իրավունքի իրագործումը ենթակա է լոկ այն սահմանափակումներին, որոնք անհրաժեշտ են հասարակական անվտանգությունը և կարգուկանոնը, քաղաքացիների առողջությունը և բարոյականությունը, հասարակության մյուս անդամների իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու համար:

Կրոնական կազմակերպությունը հավատի համատեղ դավանության, ինչպես նաև կրոնական այլ պահանջմունքների բավարարման նպատակով ստեղծված քաղաքացիների միավորում է:

Կրոնական կազմակերպություններ են՝ եկեղեցական ու կրոնական համայնքները, թեմերը, վանքերը, կրոնական միաբանությունները, նրանց կրթական ու հրատարակչական հաստատությունները և այլ կրոնական-եկեղեցական հիմնարկներ:

Քաղաքացիների խումբը ճանաչվում է որպես կրոնական կազմակերպություն, եթե այն բավարարում է հետևյալ պայմաններին.

ա) չի հակասում «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի դրույթներին.

բ) հիմնվում է պատմականորեն կանոնացված որևէ սուրբ գրքի վրա.

գ) իր դավանանքով մտնում է համաշխարհային ժամանակակից կրոնական-եկեղեցական համայնքների համակարգի մեջ.

դ) զերծ է նյութապաշտությունից և ուղղված է դեպի հոգևոր ոլորտները.

ե) ընդգրկում է առնվազն 200 հավատացյալ անդամ:

Մինչև 18 տարեկան երեխաները չեն կարող անդամագրվել կրոնական կազմակերպությանը՝ անկախ կրոնական ծեսերին իրենց մասնակցելու պարագայից և այլ հանգամանքներից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործում են.

- Հայաստանյաց Առաքելական եկեղեցին (կրճատ՝ Հայ եկեղեցի)՝ իր ավանդական կազմակերպություններով.
- կրոնական այլ կազմակերպություններ, որոնք ստեղծվում և գործում են իրենց հավատացյալ անդամների շրջանակում՝ սեփական ունեցվածքի ու կանոնադրության համաձայն:

Կրոնական կազմակերպությունների հոգևոր-կրոնական գործունեությունն իրականացվում է հետևյալ իրավունքների հստակ ընդգծված շրջանակներում.

ա) իրենց շուրջ համախմբել իրենց հավատացյալներին.

բ) ապահովել իրենց հավատացյալների հոգևոր-կրոնական բոլոր կարիքների ու պահանջմունքների բավարարումը.

գ) կատարել կրոնական ժամերգություններ, ծեսեր ու արարողություններ աղոթատներում և դրանց պատկանող տարածքում, ուխտատեղիներում, կրոնական կազմակերպությունների հիմնարկներում, ինչպես նաև գերեզմանոցներում, քաղաքացիների տներում և բնակարաններում, հիվանդանոցներում, զառամյալների ու հաշմանդամների տներում, ազատազրկման վայրերում, զորամասերում՝ այնտեղ գտնվող և տվյալ կրոնական կազմակերպության անդամ հանդիսացող քաղաքացիների խնդրանքով:

Մնացած դեպքերում հրապարակային ժամասացությունները, կրոնական ծեսերն ու արարողությունները կատարվում են ժողովների, հանրահավաքների, ցույցերի ու երթերի համար սահմանված կարգով.

դ) ստեղծել համապատասխան կրոնական ուսուցման խմբեր իրենց անդամների ու նրանց երեխաների կրոնական կրթության համար՝ ծնողների համաձայնությամբ, այդ նպատակով օգտագործելով իրենց պատկանող կամ հատկացված շինությունները.

ե) զբաղվել աստվածաբանական, կրոնական, պատմամշակութային ուսումնասիրություններով.

զ) պատրաստել հոգևորական ծառայության կամ գիտական ու մանկավարժական կադրեր իրենց հոգևոր կենտրոնների կրթական հաստատություններում.

է) ձեռք բերել և օգտագործել կրոնական նշանակության առարկաներ ու նյութեր.

ը) օգտվել զանգվածային լրատվության միջոցներից՝ օրենքով սահմանված կարգով.

թ) կապեր հաստատել այլ երկրների եկեղեցական կազմակերպությունների հետ՝ անկախ ազգային կամ դավանական պատկանելությունից, հրավիրել նրանց ներկայացուցիչներին, իրենց հավատացյալներին գործուղել արտասահման՝ ուխտագնացության, ժո-

ղովների և կրոնական այլ միջոցառումների մասնակցելու, ինչպես նաև ուսման կամ հանգստի նպատակով.

ժ) զբաղվել բարեգործությամբ:

Կրոնական կազմակերպությունների հրատարակչական գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ:

Վերոհիշյալ իրավունքներն առաջանում են տվյալ կրոնական կազմակերպության Հայաստանի Հանրապետությունում գրանցվելու պահից:

Հայաստանի Հանրապետության տարածքում արգելվում է հոգեորսությունը:

Որպես հոգեորսություն չի կարող դիտվել «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածում նշված իրավասությունների սահմանում ծավալված որևէ գործողություն:

Հայաստանյայց Առաքելական եկեղեցին և կրոնական այլ կազմակերպությունների պատմական հուշարձանները և պաշտամունքային գույքը օգտագործվում են համաձայն այդ կազմակերպությունների նվիրագործված ավանդական կարգի:

Կրոնական կազմակերպությունները պարտավոր են ապահովել պետության կողմից որպես սեփականություն իրենց հանձնված կառույցների, տարածքների և մյուս ունեցվածքի, ինչպես նաև իրենց սեփականություն հանդիսացող պատմական հուշարձանների պահպանությունը և ըստ նշանակության օգտագործումը:

Կրոնական կազմակերպությունները կարող են դիմել հավատացյալներին կամավոր դրամական և այլ նվիրատվությունների խնդրանքով, ստանալ և տնօրինել դրանք:

Կրոնական կազմակերպությունների ստացած դրամական և այլ նվիրատվությունները, քաղաքացիներից ստացվող հասույթները հարկման ենթակա չեն:

Այն կրոնական կազմակերպությունները, որոնց հոգևոր կենտրոնները գտնվում են Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս, չեն կարող ֆինանսավորվել այդ կենտրոնների կողմից: Կրոնական կազմակերպությունները չեն կարող ֆինանսավորվել կուսակցությունների կողմից և ֆինանսավորել նրանց:

Կրոնական համայնքը կամ կազմակերպությունն իրավաբանական անձ է ճանաչվում պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստանալու պահից:

Կրոնական կազմակերպության կանոնադրությունը տվյալներ է պարունակում կրոնական կազմակերպության բնույթի և գործելու վայրի, դավանական պատկանելության, կրոնական միավորման կառուցվածքի, աղոթատեղիների և գույքային դրության, ձեռնարկություններ հիմնելու ուսումնական և հրատարակչական հաստատություններ ստեղծելու մտադրությունների, գործունեության դադարեցման դեպքում գույքային և այլ հարցերի լուծման կարգի մասին, ինչպես նաև պարունակում է տվյալ կազմակերպության գործունեության առանձնահատկությունների հետ կապված այլ դրույթներ:

Կրոնական կազմակերպության գրանցման կամ գրանցումը մերժելու որոշումը՝ մերժման հիմքերի նշումով, մեկամսյա ժամկետում գրավոր ձևով հանձնվում է դիմողին:

Կրոնական կազմակերպության գործունեությունը կարող է դադարեցվել ինքնալուծարքի հետևանքով կամ դատարանի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենքների խախտման դեպքում:

§ 3. «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքը որպես մտքի, խղճի և կրոնի ազատության երաշխիք

«ՀՀ և Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքն ընդունված է 2007 թվականի փետրվարի 22-ին և ուժի մեջ է մտել 2007թ. մարտի 14-ին:

Օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու առանձնահատուկ հարաբերությունները:

Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ որպես ազգային եկեղեցի՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին կենտրոնով, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության, Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքությունների նվիրապետական աթոռներով, և նրա բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում:

Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ինքնակառավարումն իր նվիրապետության սահմաններում:

Հայաստանի Հանրապետության Նախագահը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու գլուխ ընտրված Ամենայն Հայոց կաթողիկոսին շնորհում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, եթե նա Հայաստանի Հանրապետության քաղաքացի չէ:

Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների կարգավորման սկզբունքները սահմանված են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ընդհանուր հարաբերությունները՝ «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով և միջազգային պայմանագրերով, իսկ առանձնահատուկ հարաբերությունները՝ որպես պետության և նրա կողմից ազգային ճանաչված եկեղեցու հարաբերություններ, «ՀՀ և Հայաստանյայց Առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքով:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պատմական, հոգևոր, մշակութային և վավերագրական ժառանգությունը ազգային ինքնության հենքի կարևոր և անբաժանելի մասն է:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պատմական, հոգևոր, մշակութային և վավերագրական արժեքների՝ պետական սեփականություն հանդիսացող հատվածը կարող է օտարվել կամ պահպանման վայրից փոխադրվել՝ այդ մասին նախապես տեղեկացնելով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն: Այդ արժեքների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ խորհրդակցելով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հետ:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին իրավունք ունի կառուցելու վանքեր, եկեղեցիներ և պաշտամունքային այլ շինություններ, գործող դարձնելու պատմական հուշարձանի կարգավիճակ ունեցող վանքերն ու եկեղեցիները:

Պատմական հուշարձանի կարգավիճակ ունեցող եկեղեցիների և պաշտամունքային այլ շինությունների պահպանությունը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին և Հայաստանի Հանրապետությունն իրականացնում են համատեղ:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու սեփականությունը և ազգային մշակութային ժառանգության բաղկացուցիչ մասը հանդիսացող մշակութային հաստատությունների, հավաքածուների, թանգարանների, գրադարանների, արխիվների պահպանության և հարստացման համար պետական աջակցության ծավալն ու նպատակը Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է տվյալ տարվա

պետական բյուջեի նախագծով՝ նախապես այն քննարկելով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հետ:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին իրավունք ունի՝

1) հիմնելու կամ հովանավորելու նախադպրոցական հաստատություններ, տարրական, միջնակարգ և ավագ դպրոցներ, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում.
2) մասնակցելու պետական կրթական հաստատություններում «Հայ եկեղեցու պատմություն» առարկայի ուսումնական ծրագրի և դասագրքի մշակմանը, այն դասավանդող ուսուցիչների որակավորման պահանջների սահմանմանը և դպրոցներին ներկայացնելու այդ ուսուցիչների թեկնածությունները.
3) պետական կրթական հաստատություններում կամավոր ուսումնական դասընթացներ կազմակերպելու՝ օգտագործելով դրանց շենքերն ու ռեսուրսները՝ այդ հաստատությունների հետ համաձայնեցնելով դասընթացների իրականացմանն առնչվող խնդիրները.
4) նպաստելու հասարակության հոգևոր կրթությանը կրթական հաստատություններում՝ օրենքով սահմանված կարգով:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ստեղծած ուսումնական հաստատությունները պետք է ստանան այն աջակցությունը, որը պետությունը ցուցաբերում է մասնավոր հաստատություններին:

Պետությունը երաշխավորում է կրոնական կրթության իրավունքի իրացումը՝ կամավորության հիման վրա:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պաշտոնական հաղորդագրությունները զանգվածային լրատվության միջոցները հրապարակում են անփոփոխ:

Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է, Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու միջև ստորագրված համաձայնագրով սահմանված կարգին համապատասխան, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ կանոնական ծեսով իրագործած ամուսնություններն ու հռչակած ամուսնալուծությունները:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին իրավունք ունի ունենալու մշտական հոգևոր ներկայացուցիչ հիվանդանոցներում, ման-

կատներում, տուն-ինտերնատներում, զորամասերում, ազատազրկման վայրերում, ներառյալ՝ քննչական մեկուսարաններում:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին իրավունք ունի կազմակերպելու հասարակական դրամահավաքներ և ստանալու նվիրատվություններ ու ընծաներ, որոնք ազատ են հարկումից:

Հարկումից ազատ են նաև ծիսական նշանակության առարկաների ու պարագաների արտադրությունը և իրացումը:

Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է եկեղեցական խոստովանության գաղտնիությունը: Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգևորական-խոստովանահայրը՝ որպես վկա, չի կարող հարցաքննվել այն հանգամանքների մասին, որոնք նրան հայտնի են դարձել խոստովանության ժամանակ:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, որպես ազգային եկեղեցի, որը գործում է նաև այլ երկրներում, գտնվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության ներքո՝ միջազգային իրավական նորմերին համապատասխան:

§ 4. Կրոնական կազմակերպությունների և պետության հարաբերությունները

Հայաստանի Հանրապետության եկեղեցին անջատված է պետությունից: Հայաստանի Հանրապետությունը՝

ա) իրավունք չունի քաղաքացուն հարկադրել դավանելու այս կամ այն կրոնը.

բ) չի միջամտում եկեղեցու և կրոնական կազմակերպությունների՝ օրենքին համապատասխանող գործունեությանը և ներքին կյանքին, արգելում է եկեղեցիների և կրոնական կազմակերպությունների կառուցվածքում որևէ պետական մարմնի կամ նրա հանձնարարությունները կատարող անձի գործունեություն.

գ) արգելում է եկեղեցու մասնակցությունը պետական կառավարմանը, եկեղեցու և կրոնական կազմակերպությունների վրա չի դնում որևէ պետական ֆունկցիա: Պետությունը չի խոչընդոտում ազգային եկեղեցու մենաշնորհ հանդիսացող հետևյալ առաքելությունների իրագործմանը.

- ազատ քարոզել ու տարածել իր դավանանքը Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում: Հայաստանյայց Առաքելա-

կան եկեղեցու դավանաբանության պաշտոնական լուսաբանումը զանգվածային լրատվության միջոցներով կամ զանգվածային միջոցառումների ժամանակ կարող է իրականացվել միայն Հայաստանյայց Առաքելական եկեղեցու հավանությամբ.

- վերստեղծել իր պատմական ավանդույթները, կառուցվածքը, կազմակերպությունները, թեմերն ու համայնքները.
- կառուցել նոր եկեղեցիներ, գործող դարձնել իրեն պատկանող պատմական հուշարձան-եկեղեցիները՝ ինչպես հավատացյալների խնդրանքով, այնպես էլ սեփական նախաձեռնությամբ.
- նպաստել հայ ժողովրդի հոգևոր կրթությանը, օրենքով սահմանված կարգով նաև պետական կրթական հաստատություններում.
- գործնականորեն աջակցել հայ ժողովրդի բարոյական կատարելագործմանը.
- ծավալել բարեգործական եւ բարեխնամ գործունեություն.
- ունենալ մշտական հոգևոր ներկայացուցիչ հիվանդանոցներում, զառամյալների և հաշմանդամների տներում, զորամասերում, ազատազրկման վայրերում՝ ներառյալ քննչական մեկուսարանները:

Միևնույն ժամանակ Հայաստանյայց Առաքելական եկեղեցին, որպես ազգային եկեղեցի, որը գործում է նաև հանրապետության տարածքից դուրս, ենթակա է Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը՝ միջազգային իրավական նորմերի սահմաններում:

Ազգային տաղավար տոներին հաջորդող աշխատանքային օրը Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կարող է տեղափոխվել նախորդ կամ հաջորդ շաբաթ օրը:

Պետությունը չի ֆինանսավորում ինչպես կրոնական կազմակերպությունների գործունեությունը, այնպես էլ աթեիզմի քարոզչությունը, միևնույն ժամանակ կրոնական կազմակերպությունների անդամներին ու սպասավորներին վերապահում է հասարակական ու քաղաքական կյանքին մասնակցելու իրավունք՝ այլ քաղաքացիների հետ համահավասար:

Գործող օրենսդրությամբ նախատեսված բոլոր քաղաքացիական պարտականությունները տարածվում են նաև կրոնական կազմակերպությունների հավատացյալ անդամների վրա՝ այլ քաղաքացիների հետ համահավասար:

Քաղաքացիական պարտականությունների և կրոնական համոզմունքների հակասության առանձին դեպքերում քաղաքացիական պարտականությունների կատարման հարցը կարող է լուծվել այլընտրանքային սկզբունքով՝ օրենքով նախատեսված կարգով համապատասխան պետական մարմնի և տվյալ կրոնական կազմակերպության փոխադարձ համաձայնությամբ:

Համաձայն «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 20-ի՝ Քաղաքացիական կացության ակտերի փոխհամաձայնեցված եկեղեցական գրանցումը պետությունը ճանաչում է որպես օրինական ուժ ունեցող գործողություն՝ համապատասխան բոլոր հետևություններով:

Պետությունը ճանաչում է խոստովանության գաղտնիությունը: Քննչական և դատական ատյաններում որպես վկա չի կարող հարցաքննվել ձեռնադրված հոգևորական-խոստովանահայրը գործի այն հանգամանքների մասին, որոնք նրան հայտնի են դարձել խոստովանության ժամանակ:

Պետությունն իր վրա է վերցնում կրոնական նշանակություն ունեցող պատմական հուշարձանների պահպանությունը՝ անկախ նրանց պատկանելությունից:

Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրված անձը ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:

Պետության և կրոնական կազմակերպությունների հարաբերությունները կարգավորում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմինը, որը՝

ա) գրանցում է կրոնական կազմակերպությունների կանոնադրությունները, միջնորդում է դատարանին օրենքը խախտող կրոնական կազմակերպությունները լուծարքի ենթարկելու առաջարկով.

բ) կրոնական կազմակերպությունների խնդրանքով աջակցում է առանձին հարցերի շուրջ պետական մարմինների հետ համաձայնության գալուն և անհրաժեշտ օգնություն է ցույց տալիս այդ հարցերի լուծմանը պետական մարմինների կողմից.

գ) պետության անունից որպես միջնորդ մասնակցում է Հայաստանի կրոնական կազմակերպությունների միջև ծագած հարցերի և վեճերի լուծմանը:

Պետության և կրոնական կազմակերպությունների հարաբերությունները կարգավորվում են պետության և համապատասխան կրոնական կազմակերպությունների վարչությունների համաձայնությամբ:

Գլուխ
Միջազգային օրենսդրությունը որպես հոգևոր իրավունքի երաշխիք

§ 1. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը որպես հոգևոր իրավունքի երաշխիք

Քանզի մարդկային ընտանիքի բոլոր անդամներին ներհատուկ արժանապատվության և հավասար ու անօտարելի իրավունքների ճանաչումն աշխարհում ազատության, արդարության և խաղաղության հիմքն է, քանզի մարդու իրավունքների անտեսումն ու դրանց նկատմամբ արհամարհանքը հանգեցրել են մարդկության խիղճը վրդովող բարբարոսական գործողությունների, և որպես մարդկության վեհ նպատակ հռչակված է այնպիսի աշխարհի ստեղծումը, ուր մարդիկ կվայելեն խոսքի և համոզմունքի ազատություն և զերծ կլինեն վախից ու կարիքից, քանզի, որպեսզի մարդը հարկադրված չլինի դիմելու ապստամբության ընդդեմ բռնակալության ու ճնշման՝ որպես վերջնական միջոցի, կարևոր է իրավական պետության կողմից մարդու իրավունքների պաշտպանությունը, քանզի կարևոր է ազգերի միջև բարեկամական հարաբերությունների զարգացման խթանումը, քանզի Միավորված ազգերի կազմակերպության ժողովուրդները Կանոնադրության մեջ վերահաստատել են իրենց հավատը մարդու հիմնարար իրավունքների, անհատի արժանապատվության ու արժեքի և տղամարդու ու կնոջ իրավահավասարության նկատմամբ և վճռել են քաջալերել սոցիալական առաջընթացն ու կենսամակարդակի բարելավումն առավել ազատության պայմաններում, քանզի անդամ պետությունները պարտավորվել են, Միավորված ազգերի կազմակերպության հետ համագործակցելով, հասնել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ համընդհանուր հարգանքի ու դրանց պահպանման քաջալրմանը, քանզի այդ իրավունքների ու ազատությունների ընդհանուր ըմբռնումը վիթխարի նշանակություն ունի այս պարտավորության լիակատար իրականացման համար, ուստի այժմ Գլխավոր ասամբլեան հռչակում է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը՝ որպես բոլոր ժողովուրդների ու ազգերի կողմից նվաճվելիք ընդհանուր մի չափանիշ, որպեսզի յուրաքանչյուր անհատ և հասարակության ամեն մի մարմին, մշտապես մտապահելով սույն Հռչակագիրը, ձգտի ուսման ու կրթութ-

յան միջոցով քաջալերել հարգանքն այս իրավունքների ու ազատությունների նկատմամբ և ազգային ու միջազգային առաջադիմական միջոցառումներով ապահովել դրանց համընդհանուր և արդյունավետ ճանաչումն ու պահպանումը թե անդամ պետությունների ժողովուրդների և թե դրանց իրավազորության ներքո գտնվող տարածքների ժողովուրդների կողմից:

Բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար՝ իրենց արժանապատվությամբ և իրավունքներով: Նրանք օժտված են բանականությամբ և խղճով և պարտավոր են միմյանց վերաբերվել եղբայրության ոգով:

Յուրաքանչյուր ոք ունի սույն Հռչակագրում ամրագրված բոլոր իրավունքներն ու ազատությունները՝ առանց որևէ տարբերակման, այնպիսի հիմքերով, ինչպիսին են ռասան, մաշկի գույնը, սեռը, լեզուն, կրոնը, քաղաքական կամ այլ համոզմունքը, ազգային կամ սոցիալական ծագումը, գույքային դրությունը, ծնունդը կամ այլ կարգավիճակ:

Չափահաս տղամարդիկ ու կանայք, առանց ռասայական, ազգային կամ կրոնական որևէ սահմանափակման, իրավունք ունեն ամուսնանալ և ընտանիք կազմել:

Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի ու կրոնի ազատության իրավունք. այս իրավունքը ներառում է իր կրոնը կամ համոզմունքը փոխելու ազատություն և միանձնյա կամ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով իր կրոնը կամ համոզմունքը քարոզելու, արարողությունների, պաշտամունքի և ծեսերի միջոցով արտահայտելու ազատություն:

Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Կրթությունը, առնվազն տարրական և հանրակրթական փուլերում, անվճար է: Տարրական կրթությունը պարտադիր է: Տեխնիկական և մասնագիտական կրթությունը պետք է լինի հանրամատչելի, իսկ բարձրագույն կրթությունը՝ ընդունակություններին համապատասխան հավասարապես մատչելի բոլորի համար:

Կրթությունը պետք է նպատակաուղղված լինի անձի լիարժեք զարգացմանը և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի ամրապնդմանը: Այն պետք է նպաստի բոլոր ազգերի, ռասայական կամ կրոնական խմբերի միջև փոխըմբռնմանը, հանդուրժողականությանն ու բարեկամությանը, էլ ավելի նպաստի Միավորված ազգերի կազմակերպության խաղաղապահ գործունեությանը:

Յուրաքանչյուր մարդ պետք է ունենա սույն Հռչակագրում հռչակված բոլոր իրավունքներն ու ազատություններն առանց որևէ տարբե-

ության, անկախ ռասայից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական և այլ համոզմունքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, գույքային, դասային և այլ վիճակից: Բացի այդ, չպետք է դրվի որևէ տարբերություն այն հիմունքով, թե ինչպիսի՞ն է այն երկրի կամ տարածքի, որին պատկանում է մարդը, քաղաքական, իրավական կամ միջազգային կարգավիճակը, անկա՞խ, խնամարկյա՞լ, ո՞չ ինքնավար, թե՞ ինքնավարության մեջ որևէ այլ ձևով սահմանափակ:

Չափահաս դարձած տղամարդիկ ու կանայք իրավունք ունեն, առանց ռասայական, ազգային ու կրոնական պատկանելության հատկանիշների որևէ սահմանափակման, ամուսնանալու և ընտանիք կազմելու: Նրանք օգտվում են նույն իրավունքներից ամուսնանալու պահին, ամուսնության ընթացքում և ամուսնալուծության դեպքում:

Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի ու հավատի ազատության իրավունք, այդ իրավունքը ներառում է իր կրոնը կամ համոզմունքը փոխելու ազատությունը, իր հավատը և համոզմունքը ինչպես միանձնյա, այնպես էլ ուրիշների հետ մեկտեղ դավանելու, հրապարակավ կամ մասնավոր կարգով ուսմունք քարոզելու, ծիսակատարություն, կրոնական պաշտամունք և արարողություններ կատարելու ազատություն:

§ 2. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան որպես հոգևոր իրավունքի երաշխիք

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիան ստորագրած կառավարությունները, լինելով Եվրոպայի խորհրդի անդամներ, նկատի ունենալով 1948թ. դեկտեմբերի 10-ին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի հռչակած Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, նկատի ունենալով, որ այդ Հռչակագիրը նպատակ ունի ապահովելու այնտեղ հռչակված իրավունքների համընդհանուր և արդյունավետ ճանաչումն ու պահպանումը, նկատի ունենալով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն իր անդամների միջև առավել միասնություն ձեռք բերելն է, և որ այդ նպատակին հասնելու միջոցներից մեկը մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պահպանումը և հետագա իրականացումն է, կրկին հավաստելով իրենց խորին հավատը այդ հիմնարար ազատությունների նկատմամբ, որոնք արդարության ու խաղաղության հիմքն են աշխարհում, և որոնց լավագույն պահպանումը կախ-

ված է, մի կողմից, քաղաքական արդյունավետ ժողովրդավարությունից և, մյուս կողմից, մարդու՝ դրանց վերաբերող իրավունքների ընդհանուր ըմբռնումից ու պահպանումից, համակված վճռականությամբ՝ որպես միասնական հայացքներ և քաղաքական ավանդույթների, իդեալների, ազատության և իրավական պետության ընդհանուր ժառանգություն ունեցող եվրոպական երկրների կառավարություններ՝ առաջին քայլերն անել Համընդհանուր հռչակագրում ամրագրված որոշ իրավունքների հավաքական իրականացման ճանապարհին, սահմանեցին, որ. Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք. այս իրավունքը ներառում է իր կրոնը կամ համոզմունքը փոխելու ազատությունը և դրանք ինչպես միանձնյա, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով, քարոզչության, արարողությունների, պաշտամունքի և ծեսերի միջոցով արտահայտելու ազատություն:

Սեփական կրոնը կամ համոզմունքները դավանելու ազատությունը ենթակա է միայն այնպիսի սահմանափակումների, որոնք սահմանված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի պաշտպանություն հասարակական անվտանգության, հասարակական կարգի, առողջության կամ բարոյականության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների:

Նշված Կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելն ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից:

§ 3. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը որպես հոգևոր իրավունքի ազատության երաշխիք

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը սահմանում է, որ յուրաքանչյուր մարդ ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք:

Այդ իրավունքն ընդգրկում է սեփական ընտրությամբ կրոն կամ համոզմունք ունենալու կամ ընդունելու ազատությունը և ինչպես միանձնյա, այնպես էլ այլոց հետ համատեղ, հրապարակավ կամ մասնավոր

կարգով իր կրոնն ու համոզմունքները դավանելու ազատությունը, պաշտամունքի իրականացման, կրոնական ու ծիսական արարողությունների և վարդապետությունների իրականացման ազատությունը:

Ոչ ոք չպետք է ենթարկվի այնպիսի հարկադրանքի, որը նսեմացնում է իր ընտրությամբ կրոն կամ համոզմունքներ ունենալու կամ ընդունելու ազատությունը:

Կրոնը կամ համոզմունքները դավանելու ազատությունը ենթարկվում է միայն օրենքով սահմանված եւ հասարակական անվտանգության, կարգուկանոնի, առողջության ու բարոյականության, ինչպես և այլ անձանց հիմնական իրավունքների ու ազատությունների պահպանման համար անհրաժեշտ սահմանափակումների:

Դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են հարգել ծնողների և համապատասխան դեպքերում օրինական խնամակալների ազատությունը՝ ապահովելու իրենց երեխաների կրոնական ու բարոյական դաստիարակությունը սեփական համոզմունքներին համապատասխան:

§ 4. Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների ապահովման մասին կոնվենցիան որպես հոգևոր իրավունքի երաշխիք

«Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների ապահովման մասին» կոնվենցիայի մասնակից պետությունները, համարելով, որ իրենց միջև բարեկամության, բարիդրացիության և համագործակցության հարաբերությունների զարգացումը և ամրապնդումը համապատասխանում են իրենց ժողովուրդների արմատական շահերին և ծառայում են խաղաղության և անվտանգության գործին, հաստատելով իրենց կողմնակցությունը ժողովրդավարությանը, ազատությանը և արդարությանը, հաստատելով նաև իրենց կողմնակցությունը մարդու իրավունքների բնագավառում միջազգային չափանիշների պահպանմանը, որոնք ամրագրված են, մասնավորապես, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրում, Ազգային կամ էթնիկական, կրոնական և լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների մասին հռչակագրում, Ռասայական խտրականության բոլոր ձևերի դեմ պայքարի մասին կոնվենցիայում,

Ցեղասպանության հանցագործությունը կանխելու դրա համար պատժելու մասին կոնվենցիայում, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայում և մարդու իրավունքների մասին այլ հիմնարար փաստաթղթերում, հաշվի առնելով իրենց պարտավորությունները, որոնք բխում են Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդակցության Հելսինկիի եզրափակիչ ակտից, Մադրիդի, Վիեննայի եւ Հելսինկիի ամփոփիչ փաստաթղթերից, ԵԱՀԽ՝ Մարդկային չափման գծով Կոպենհագենի և Մոսկվայի խորհրդակցությունների փաստաթղթերից, մշակութային ժառանգության մասին Կրակովի գիտաժողովի, ինչպես նաև նոր Եվրոպայի համար Փարիզյան Խարտիայի փաստաթղթերից, ելնելով նրանից, որ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքները հանդիսանում են մարդու հանրաճանաչ իրավունքների անբաժանելի մասը, նկատի ունենալով, որ յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի տարածքում բնակվում են ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք, ընդունելով, որ հիշատակված փոքրամասնությունները հանդիսանում են հասարակության անբաժանելի մասը, որտեղ նրանք ապրել ու ապրում են և հարստացնում են այն իրենց աշխատանքով, ինքնատիպությամբ և մշակույթով, համարելով, որ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների խրախուսումը և պաշտպանությունը նպաստում է այն պետությունների քաղաքական և սոցիալական կայունությանը, որտեղ նրանք բնակվում են, ինչպես նաև անհրաժեշտ համարելով պատշաճ միջոցների ձեռնարկումը ազգային փոքրամասնությունների իրավունքների ապահովման համար և այդ նպատակներով համագործակցության համապատասխան մեխանիզմների ստեղծումը, այդ թվում՝ երկկողմ համաձայնագրերի շրջանակներում, սահմանեցին, որ նշված Կոնվենցիայի նպատակների համար, ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք ասելով, հասկացվում են անձինք, որոնք մշտապես բնակվում են մի Պայմանավորվող կողմի տարածքում, ունեն նրա քաղաքացիությունը, որոնք, ըստ իրենց էթնիկ ծագման, լեզվի, մշակույթի, կրոնի կամ ավանդույթների, տարբերվում են տվյալ Պայմանավորվող կողմի հիմնական բնակչությունից:

Պայմանավորվող կողմերը հաստատում են, որ պատկանելությունը ազգային փոքրամասնությանը անհատական ընտրության հարց է և երաշխավորում են, որ նման ընտրությունը չի հանգեցնի նշված անձի համար որևէ ոչ բարենպաստ հետևանքների:

Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը ճանաչում է ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքը՝ անհատա-

պես կամ իր խմբի անդամների հետ համատեղ անխափան կերպով արտահայտել, պահպանել և զարգացնել իրենց էթնիկ, լեզվական, մշակութային կամ կրոնական ինքնատիպությունը:

Պայմանավորվող կողմերը պարտավորվում են իրենց քաղաքականության մեջ հաշվի առնել ազգային փոքրամասնությունների օրինական շահերը և անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել՝ նրանց էթնիկ, լեզվական, մշակութային կամ կրոնական ինքնատիպության պահպանման և զարգացման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով: Նման միջոցները կծառայեն ամբողջ հասարակության շահերին և չպետք է ոտնահարեն Պայմանավորվող կողմերի մյուս քաղաքացիների իրավունքները:

Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց ապահովել հասարակական և պետական կյանքին մասնակցելու իրավունք, հատկապես տարածաշրջանային մակարդակով նրանց շահերի պաշտպանությանը վերաբերող հարցերի լուծման դեպքում:

Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը ճանաչում է ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքը՝ ազգային օրենսդրությանը համապատասխան ստեղծելու լուսավորչական, մշակութային և կրոնական բնույթի տարբեր կազմակերպություններ (ասոցիացիաներ, հայրենակցական միություններ և այլն)՝ էթնիկ, լեզվական, մշակութային և կրոնական ինքնատիպության պահպանման և զարգացման նպատակով:

Նշված կազմակերպությունները կունենան նույնպիսի իրավունքներ, որոնք տրամադրվում են նման կազմակերպություններին, մասնավորապես, ինչ վերաբերում է հասարակական շենքերից, ռադիոհաղորդումներից, հեռուստատեսությունից, մամուլից, զանգվածային լրատվության այլ միջոցներից օգտվելուն:

Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը ճանաչում է ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքը՝ բնակության պետության տարածքում անխափան պահպանելու շփումներ միմյանց միջև, ինչպես նաև այն պետությունների քաղաքացիների և կազմակերպությունների հետ կապեր պահպանելու իրավունքը, որոնց հետ նրանք ունեն ընդհանուր էթնիկ ծագում, մշակույթ, լեզու կամ կրոնական համոզմունքներ: Նման կապերը և շփումները չպետք է հակասեն Պայմանավորվող կողմերի ազգային օրենսդրություններին:

Պայմանավորվող կողմերն իրենց տարածքում կխրախուսեն մյուս Պայմանավորվող կողմերի մշակութային տեղեկատվական կենտրոնների գործունեությունը:

Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը ճանաչում է ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքը՝ անհատապես կամ իր խմբի անդամների հետ համատեղ դավանել իր կրոնը և իր դավանանքին համապատասխան կատարել կրոնական ծիսակատարություններ, պահել պաշտամունքային շինություններ, ձեռք բերել և օգտագործել պաշտամունքի համար անհրաժեշտ առարկաներ, ինչպես նաև մայրենի լեզվով վարել լուսավորչական կրոնական գործունեություն: Նման գործունեությունը չպետք է հակասի ազգային օրենսդրությանը:

Սույն Կոնվենցիայում հիշատակված լուսավորչական, մշակութային և կրոնական բնույթի կազմակերպությունները կարող են ֆինանսավորվել կամավոր դրամական ներդրումների հաշվին, ինչպես նաև օգնություն ստանալ իրենց գտնվելու վայրի պետությունից՝ նրա օրենսդրությանը համապատասխան: Նրանք նաև օգնություն կարող են ստանալ մյուս Պայմանավորվող կողմերի պետական և հասարակական կազմակերպություններից՝ նրանց գտնվելու վայրի պետության օրենսդրությամբ հաստատված պահանջների պահպանմամբ:

§ 5. Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին ժնևի կոնվենցիան որպես հոգևոր իրավունքի երաշխիք

Այս Կոնվենցիան ընդունվել է 1949 թվականի ապրիլի 21-ից մինչև օգոստոսի 12-ը Ժնևում պատերազմի զոհերի պաշտպանության մասին միջազգային կոնվենցիա կազմող դիվանագիտական կոնֆերանսի կողմից՝ 1949 թվականի օգոստոսի 12-ին և ուժի մեջ է մտել 1950 թվականի հոկտեմբերի 21-ին:

Պայմանավորվող Կողմերը պարտավորվում են ցանկացած հանգամանքներում պահպանել և ստիպել պահպանելու սույն Կոնվենցիան:

Բացի այն որոշումներից, որոնք պետք է ուժի մեջ մտնեն դեռևս խաղաղ ժամանակ, սույն Կոնվենցիան կկիրառվի հայտարարված պատերազմի և ամեն մի այլ զինված կոնֆլիկտի դեպքում, որ ծագում է երկու կամ մի քանի Բարձր Պայմանավորվող Կողմերի միջև, անգամ այն դեպքում, եթե դրանցից մեկն ու մեկը չի ընդունում պատերազմական վիճակը:

Կոնվենցիան կկիրառվի նաև Բարձր պայմանավորվող կողմի ամբողջ տարածքի կամ տարածքի մի մասի օկուպացման բոլոր դեպքերում, անգամ եթե այդ օկուպացումը ոչ մի զինված դիմադրության չհանդիպի:

Եթե կոնֆլիկտի մեջ մտնող տերություններից մեկը սույն Կոնվենցիայի մասնակից չէ, այնուամենայնիվ, դրա մասնակից տերություններն իրենց փոխհարաբերություններում մնում են Կոնվենցիայով կապված: Դրանից բացի, նրանք Կոնվենցիայով կապված կլինեն վերը նշված տերության վերաբերմամբ, եթե վերջինս ընդունում և կիրառում է Կոնվենցիայի դրույթները:

Միջազգային բնույթ չկրող և Բարձր պայմանավորվող կողմերից մեկի տարածքում ծագող զինված կոնֆլիկտի դեպքում, կոնֆլիկտի մեջ գտնվող կողմերից յուրաքանչյուրը պարտավոր կլինի, որպես նվազագույնը, կիրառել հետևյալ դրույթները.

1. Այն անձինք, որոնք անմիջականորեն չեն մասնակցում ռազմական գործողություններին, ներառյալ զինված ուժերի կազմից այն անձինք, որոնք զենքը վայր են դրել, ինչպես նաև նրանք, որոնք դադարել են պատերազմական գործողություններին մասնակցելուց հիվանդության, վիրավորվելու, բռնվելու կամ ցանկացած այլ պատճառով, պետք է բոլոր հանգամանքներում օգտվեն մարդասիրական վերաբերմունքից՝ առանց որևէ խտրականության ռասայի, մաշկի գույնի, կրոնի կամ հավատի, սեռի, ծագման կամ գույքային դրության և ցանկացած համանման այլ չափանիշների պատճառներով:

Այդ նպատակով վերը նշված անձանց նկատմամբ մշտապես ու ամենուրեք կարգելվեն հետևյալ գործողությունները.

ա/ ոտնձգությունը կյանքի և ֆիզիկական անձեռնմխելիության նկատմամբ, մասնավորապես, ամեն տեսակի սպանությունները, խեղումները, դաժան վերաբերմունքը, տանջահարությունը և խոշտանգումները,

բ/ պատանդ վերցնելը,

գ/ոտնձգությունը մարդկային արժանապատվության նկատմամբ, մասնավորապես, վիրավորական և նվաստացուցիչ վերաբերմունքը,

դ/ դատապարտելը և պատիժ կիրառելը առանց նախնական դատական վճռի՝ կայացված պատշաճ ձևով կազմավորված դատարանի

կողմից, քաղաքակիրթ ազգերի շրջանում անհրաժեշտ ճանաչված դատական երաշխիքների առկայությամբ:

2. Վիրավորները և հիվանդները կհավաքվեն և նրանց ցույց կտրվի օգնություն:

Անաչառ մարդասիրական կազմակերպությունը, այնպիսին, ինչպիսին Կարմիր խաչի միջազգային կոմիտեն է, կարող է իր ծառայություններն առաջարկել կոնֆլիկտի մեջ գտնվող կողմերին:

Դրանից բացի, կոնֆլիկտի մեջ գտնվող կողմերը կձգտեն հատուկ համաձայնագրերի միջոցով գործողության մեջ դնել սույն Կոնվենցիայի բոլոր մնացյալ դրույթները կամ դրանց մի մասը:

Նախորդ դրույթների կիրառումը չի շոշափի կոնֆլիկտի մեջ գտնվող կողմերի իրավաբանական կարգավիճակը:

Սույն բաժնի դրույթները վերաբերում են կոնֆլիկտի մեջ գտնվող կողմերի ամբողջ բնակչությանը՝ առանց որևէ խտրականության, մասնավորապես, ռասայի, ազգության, կրոնի կամ քաղաքական համոզմունքների պատճառներով, և պետք է նպաստեն պատերազմի կողմից առաջացող տառապանքների մեղմացմանը:

Դեռևս խաղաղ ժամանակ Պայմանավորվող կողմերը, իսկ ռազմական գործողություններն սկսելուց հետո՝ կոնֆլիկտի մեջ գտնվող կողմերը կարող են իրենց սեփական տարածքում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ օկուպացված տարածքներում ստեղծել այնպիսի կազմակերպված սանիտարական և անվտանգ գոտիներ ու տեղեր, որպեսզի պատերազմի գործողություններից պատսպարեն վիրավորներին և հիվանդներին, հաշմանդամներին, զառամյալներին, մինչև 15 տարեկան երեխաներին, հղի կանանց և մինչև 7 տարեկան հասակի երեխաներ ունեցող մայրերին:

Կոնֆլիկտի հենց սկզբից և դրա ամբողջ ընթացքում շահագրգիռ կողմերը կարող են համաձայնագրեր կնքել իրենց կողմից ստեղծված գոտիների և տեղերի փոխադարձ ճանաչման մասին: Այդ նպատակով նրանք կարող են օգտագործել սույն Կոնվենցիային առընթեր համաձայնագրի նախագծի դրույթները՝ դրա մեջ մտցնելով հնարավոր այնպիսի փոփոխություններ, որոնք նրանք անհրաժեշտ կհամարեն:

Հովանավոր տերությունները և Կարմիր խաչի Միջազգային կոմիտեն կոչվում են նպաստելու այդ սանիտարական գոտիների և տեղերի ստեղծման և ճանաչման դյուրացմանը:

Կոնֆլիկտի մեջ գտնվող կողմերը կձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ, որպեսզի պատերազմի հետևանքով որբացած կամ իրենց ընտա-

նիքներից անջատված մինչև 15 տարեկան երեխաները չթողնվեն ինքնահոսի, և որպեսզի բոլոր հանգամանքներում դյուրացվի նրանց ապրուստը, նրանց կրոնների հետ կապված պարտականությունների կատարումը և նրանց դաստիարակությունը: Նրանց դաստիարակությունը, եթե դա հնարավոր է, կհանձնարարվի միևնույն մշակութային ավանդույթների մարդկանց:

Կոնֆլիկտի մեջ գտնվող կողմերը կնպաստեն, հովանավոր տերության համաձայնությամբ, կոնֆլիկտի ժամանակ այդ երեխաներին ընդունելու չեզոք երկրում, եթե այդպիսին գոյություն ունի, և այն բանի երաշխիքով, որ կպահպանվեն առաջին պարբերության մեջ շարադրված սկզբունքները:

Հովանավորվող անձինք ցանկացած հանգամանքներում ունեն իրենց անձի, պատվի, ընտանեկան իրավունքի, կրոնական համոզմունքների և ծիսակատարությունների, կենսափորձի և սովորույթների նկատմամբ հարգանքի իրավունք: Նրանց հետ մշտապես կվարվեն մարդասիրական ձևով և, մասնավորապես, նրանց կպաշտպանեն բռնության կամ ահաբեկման, ամբոխի կողմից վիրավորանքի և հետաքրքրասիրություն ցուցաբերելու ցանկացած գործողությունից:

Կանայք հատուկ կպահպանվեն նրանց պատվի նկատմամբ ամեն տեսակի ոտնձգություններից, մասնավորապես, բռնաբարություններից, պոռնկության ստիպելուց կամ նրանց բարոյականության նկատմամբ ցանկացած այլ ձևի ոտնձգությունից:

Առողջական վիճակին, տարիքին և սեռին վերաբերող դրույթների հաշվառմամբ կոնֆլիկտի մեջ գտնվող կողմը, որի իշխանության տակ են գտնվում հովանավորվող անձինք, նրանց բոլորի հետ կվարվի միատեսակ, առանց որևէ խտրականության, մասնավորապես, ռասայի, կրոնի կամ քաղաքական համոզմունքների պատճառներով:

Սակայն այդ անձանց վերաբերմամբ կոնֆլիկտի մեջ գտնվող կողմերը կարող են ձեռնարկել վերահսկողության և անվտանգության ապահովման այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ դառնալ պատերազմի հետևանքով:

Հովանավորվող անձանց վիճակը սկզբունքորեն կշարունակվի կարգավորվել խաղաղ ժամանակ օտարերկրացիների հետ վարվելակերպին վերաբերող կանոններով:

Նրանց կթույլատրվի իրականացնել իրենց կրոնական պարտականությունները և իրենց դավանանքի պաշտամունքի սպասավորներից ստանալ հոգևոր օգնություն:

Հովանավորվող անձը ոչ մի դեպքում չի կարող հանձնվել այնպիսի երկրի, որտեղ նա կարող է երկյուղ կրել հետապնդումներից՝ իր քաղաքական կամ կրոնական համոզմունքների կապակցությամբ:

Օկուպացրած տերությունը պաշտամունքի սպասավորներին թույլ կտա հոգևոր օգնություն ցուցաբերել իրենց միահավատականներին:

Օկուպացրած տերությունը նաև կընդունի կրոնական կարիքների բավարարման համար անհրաժեշտ գրքեր և առարկաներ պարունակող ծանրոցներ, և կաջակցի դրանք տարածելու օկուպացված տարածքում:

Տերությունը, որի իշխանության տակ են գտնվում ներկալվածները, անկախ դավանանքից, նրանց տրամադրության տակ կդնի համապատասխան շենքեր՝ կրոնական արարողություն կատարելու համար:

Ներկալվածներին կտրամադրվի լրիվ ազատություն իրենց կրոնների արարողությունները կատարելու համար, ներառյալ այցելությունը ժամերգության, ներկալվածներին տնօրինող իշխանությունների սահմանած կարգապահության կանոնները ներկալվածների կողմից պահպանելու պայմանով:

Պաշտամունքի ներկալված սպասավորներին կթույլատրվի լրիվ կատարել իրենց պարտականությունները հավատակիցների շրջանում: Այդ նպատակով, տերությունը, որի իշխանության տակ են գտնվում ներկալվածները, հոգ կտանի ներկալման զանազան այն վայրերի միջև նրանց ճիշտ տեղաբաշխման մասին, որտեղ կան միևնույն լեզվով խոսող և միևնույն կրոնին պատկանող ներկալվածներ:

Այն դեպքում, եթե պաշտամունքի այդպիսի սպասավորները լինեն անբավարար քանակի, ապա տերությունը, որի իշխանության տակ են գտնվում ներկալվածները, նրանց կտրամադրի անհրաժեշտ պայմաններ, այդ թվում փոխադրական միջոցներ ներկալման մի վայրից մյուսը տեղափոխելու համար, և նրանք իրավունք կունենան այցելելու հիվանդանոցներում գտնվող ներկալվածներին: Պաշտամունքի սպասավորները կօգտվեն իրենց պաշտամունքի կրոնական գործերով այն երկրի կրոնական իշխանությունների հետ, որտեղ գտնվում են ներկալվածները, և որքան դա հնարավոր է՝ իրենց դավանանքի միջազգային կրոնական կազմակերպությունների հետ ազատ գրագրությունից:

Այն դեպքում, եթե կան ներկալվածներ, որոնք չունեն իրենց պաշտամունքի սպասավորների հոգևոր օգնությունը, կամ այն դեպքում, եթե այս վերջիններս կան անբավարար թվով, ապա այդ նույն դավանանքի տեղական կրոնական իշխանությունները կարող են այն տերության հետ համաձայնեցնելով, որի իշխանության տակ են գտնվում ներկալվածնե-

ը, կամ այն դեպքում, եթե դա հնարավոր է կրոնի տեսակետից, նշանակել համանման պաշտամունքի սպասավոր կամ իրազեկ աշխարհիկ անձ: Այս վերջինը կօգտվի այն պարտականությունների հետ կապված առավելություններից, որոնք նա վերցրել է իր վրա: Այս ձևով նշանակված անձինք պետք է կատարեն բոլոր այն կանոնները, որ ի շահ կարգապահության և անվտանգության, սահմանել է տերությունը, որի իշխանության տակ են գտնվում ներկալվածները:

Ներկալվածներին կթույլատրվի փոստով կամ որևէ այլ միջոցով ստանալ անհատական կամ կոլեկտիվ ծանրոցներ, որոնք կպարունակեն, մասնավորապես, սննդամթերք, հագուստ, դեղամիջոցներ, ինչպես նաև գրքեր և նրանց կրոնական պահանջմունքների բավարարման համար, նրանց լուսավորության և ժամանցի համար նախատեսված առարկաներ: Այդ ծանրոցները ոչ մի դեպքում սույն Կոնվենցիայով նրա վրա դրված պարտականություններից չեն ազատում այն տերությանը, որի իշխանության տակ են գտնվում ներկալվածները:

Ներկալող իշխանությունները պետք է հետևեն այն բանին, որպեսզի վախճանված ներկալվածները թաղվեն պատվով, եթե հնարավոր է, այն կրոնի ծիսակատարությամբ, որին նա պատկանում է, որպեսզի նրանց գերեզմանները հարգվեն, պահվեն կարգին վիճակում, նշվեն այնպես, որ դրանք միշտ կարելի լինի գտնել:

Մահացած ներկալվածների աճյունները պետք է ամփոփվեն առանձին գերեզմաններում, բացառությամբ այն դեպքերի, երբ անխուսափելի հանգամանքները ստիպեն նրանց թաղել եղբայրական գերեզմանում: Աճյունները կարող են հրկիզվել, միայն եթե դա թելադրված է սանիտարական կարգի պարտադիր նկատառումներով, կամ այն կրոնի պահանջներով, որին պատկանել է հանգուցյալը, կամ էլ եթե վերջինս արտահայտել է համապատասխան ցանկություն:

§ 6. Ռազմագերիների հետ վարվելակերպի մասին ժնևի կոնվենցիան որպես հոգևոր իրավունքի երաշխիք

«Ռազմագերիների հետ վարվելակերպի մասին» կոնվենցիան ընդունվել է 1949 թվականի ապրիլի 21-ից մինչև օգոստոսի 12-ը Ժնևում պատերազմի զոհերի պաշտպանության մասին միջազգային կոնվենցիա կազմող դիվանագիտական կոնֆերանսի կողմից՝ 1949 թվականի օգոստոսի 12-ին և ուժի մեջ է մտել 1950 թվականի հոկտեմբերի 21-ին:

Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են ցանկացած հանգամանքներում պահպանել և ստիպել պահպանելու սույն Կոնվենցիան:

Բացի այն որոշումներից, որոնք պետք է ուժի մեջ մտնեն դեռևս խաղաղ ժամանակ, սույն Կոնվենցիան կկիրառվի հայտարարված պատերազմի և ամեն մի այլ զինված կոնֆլիկտի դեպքում, որ ծագում է երկու կամ մի քանի Բարձր Պայմանավորվող Կողմերի միջև, անգամ այն դեպքում, երբ դրանցից որևէ մեկը չի ընդունում պատերազմական վիճակը:

Կոնվենցիան կկիրառվի նաև Բարձր պայմանավորվող կողմի ամբողջ տարածքի կամ տարածքի մի մասի օկուպացման բոլոր դեպքերում, անգամ եթե այդ օկուպացումը ոչ մի զինված դիմադրության չհանդիպի:

Միջազգային բնույթ չկրող և Բարձր Պայմանավորվող Կողմերից մեկի տարածքում ծագող զինված կոնֆլիկտի դեպքում, կոնֆլիկտի մեջ գտնվող կողմերից յուրաքանչյուրը պարտավոր կլինի, որպես նվազագույնը, կիրառել, որ այն անձինք, որոնք անմիջականորեն չեն մասնակցում ռազմական գործողություններին, ներառյալ զինված ուժերի կազմից այն անձինք, որոնք զենքը վայր են դրել, ինչպես նաև նրանք, որոնք դադարել են պատերազմական գործողություններին մասնակցելուց հիվանդության, վիրավորվելու, կալանվելու կամ ցանկացած այլ պատճառով, պետք է բոլոր հանգամանքներում օգտվեն մարդասիրական վերաբերմունքից՝ առանց որևէ խտրականության ռասայի, մաշկի գույնի, կրոնի կամ հավատի, սեռի, ծագման կամ գույքային դրության և ցանկացած համանման այլ չափանիշների պատճառներով:

Ռազմագերիներին կտրամադրվի լիակատար ազատություն իրենց կրոնի ծիսակատարությունների համար, ներառյալ այցելությունը ժամերգության՝ նրանց կողմից ռազմական իշխանությունների սահմանած կարգապահական կարգը պահպանելու պայմանով: Կրոնական ծառայությունների համար կառանձնացվեն պատշաճ շենքեր:

Զինվորական հոգևորականության կազմի մեջ մտնող պաշտամունքի սպասավորներին, որոնք ընկել են հակառակորդ տերության իշխանության տակ և մնացել կամ պահվել են ռազմագերիներին օգնություն ցույց տալու համար, կթույլատրվի սպասարկել նրանց հոգևոր կարիքները և ազատորեն կատարել իրենց պարտականությունները իրենց հավատակիցների մեջ՝ իրենց կրոնական խղճին համապատասխան: Նրանք կբաշխվեն տարբեր ճամբարների և աշխատանքային խմբերի միջև, որտեղ գտնվում են նույն զինված ուժերին պատկանող միևնույն

լեզվով խոսող կամ նույն կրոնին պատկանող ռազմագերիները: Նրանց կտրամադրվեն անհրաժեշտ հնարավորություններ:

Նրանք կօգտվեն իրենց պաշտամունքի կրոնական գործերով այն երկրի հոգևոր իշխանությունների և միջազգային կրոնական կազմակերպությունների հետ գրաքննության ենթակա ազատ գրագրությունից, որտեղ նրանք պահվում են:

Ռազմագերիներին կթույլատրվի փոստով կամ ցանկացած այլ միջոցով ստանալ անհատական կամ կոլեկտիվ ծանրոցներ, որոնք կպարունակեն, մասնավորապես, սննդամթերք, հագուստ, դեղորայք և նրանց կրոնական պահանջմունքների բավարարման համար, նրանց լուսավորության կամ ժամանցի առարկաներ, ներառյալ գրքեր, պաշտամունքի առարկաներ, գիտական աշխատանքների համար ապարատուրա, քննական նյութեր, երաժշտական գործիքներ, սպորտային գույք ու նյութեր, որոնք թույլ կտան ռազմագերիներին շարունակելու սովորել և զբաղվել գեղարվեստական գործունեությամբ:

Գերության մեջ պահող իշխանությունները պետք է ապահովեն, որպեսզի գերության մեջ վախճանված ռազմագերիները թաղվեն պատվով և, եթե հնարավոր է, այն կրոնի արարողությանը համապատասխան, որին նրանք պատկանում են, որպեսզի մահացածների գերեզմանները հարգվեն, պահվեն կարգին վիճակում և նշվեն այն ձևով, որպեսզի մշտապես հնարավոր լինի դրանք գտնել: Բոլոր դեպքերում, երբ դա հնարավոր է, միևնույն տերությանը պատկանող մահացած ռազմագերիները պետք է հողին հանձնվեն միևնույն տեղում:

Մահացած ռազմագերիների թաղումը պետք է կատարվի առանձին գերեզմաններում, բացառությամբ այն դեպքերի, երբ անխուսափելի հանգամանքներն ստիպում են նրանց թաղել եղբայրական գերեզմանում: Դիակների հրկիզումը կարող է կատարվել միայն հիգիենայի անխուսափելի նկատառումներով կամ կրոնական դրդապատճառներով, կամ որոշակիորեն արտահայտված ցանկությամբ: Եթե կատարվի հրկիզում, ապա մահվան մասին վկայականի մեջ պետք է նշվի հրկիզման փաստի եւ դրա պատճառների մասին:

Բացի այն դեպքերից, երբ գերության մեջ պահող տերությունները կկիրառեն միջոցներ, որոնք նրանք անհրաժեշտ կգտնեն իրենց անվտանգության ապահովման համար, կամ այն բանի համար, որպեսզի բավարարեն իրենց այլ բնական կարիքները, կրոնական կազմակերպությունների, օգնության ընկերությունների կամ ռազմագերիներին օգնություն ցույց տվող այլ կազմակերպության ներկայացուցիչները ի-

րենց համար, ինչպես նաև իրենց հարկ եղած ձևով՝ հավատարմագրված լիազորների համար այդ տերությունների կողմից կստանան բոլոր անհրաժեշտ հնարավորությունները ռազմագերիներին այցելելու, օգնության ծանրոցները և ցանկացած ծագման այն նյութերը նրանց միջև բաշխելու համար, որոնք նախատեսված են կրոնական և դաստիարակչական նպատակների համար, ինչպես նաև զբաղմունք ունենալու կամ այն բանի համար, որպեսզի ռազմագերիներին օգնություն ցույց տրվի ճամբարների ներսում իրենց ժամանցը կազմակերպելու համար:

§ 7. Գործող բանակներում վիրավորների և հիվանդների վիճակի բարելավման մասին ժնևի կոնվենցիան որպես հոգևոր իրավունքի երաշխիք

Սույն Կոնվենցիան ընդունվել է 1949 թվականի ապրիլի 21-ից մինչև օգոստոսի 12-ը Ժնևում պատերազմի զոհերի պաշտպանության մասին միջազգային կոնվենցիա կազմող դիվանագիտական կոնֆերանսի կողմից՝ 1949 թվականի օգոստոսի 12-ին և ուժի մեջ է մտել 1950 թվականի հոկտեմբերի 21-ին:

Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են ցանկացած հանգամանքներում պահպանել և ստիպել պահպանելու սույն Կոնվենցիան:

Բացի այն որոշումներից, որոնք պետք է ուժի մեջ մտնեն դեռ խաղաղ ժամանակ, սույն Կոնվենցիան կկիրառվի պատերազմ հայտարարելու և ցանկացած զինված կոնֆլիկտի դեպքում, որը ծագում է երկու կամ մի քանի Բարձր պայմանավորվող կողմերի միջև, անգամ այն դեպքում, եթե դրանցից մեկը չի ընդունում պատերազմական դրությունը:

Կոնվենցիան կկիրառվի նաև Բարձր պայմանավորվող կողմի ամբողջ տարածքի կամ դրա մի մասի օկուպացման դեպքերում, անգամ եթե այդ օկուպացումը ոչ մի զինված դիմադրության չհանդիպի:

Եթե կոնֆլիկտի մեջ գտնվող տերություններից մեկը չի հանդիսանում սույն Կոնվենցիայի մասնակից, այդ կոնֆլիկտին մասնակից տերությունները իրենց փոխհարաբերություններում, այնուամենայնիվ, կապված կմնան այդ Կոնվենցիայով:

Դրանից բացի, դրանք Կոնվենցիայով կապված կլինեն վերը նշված տերության վերաբերմամբ, եթե վերջինս ընդունում և կիրառում է դրա դրույթները:

Այն զինված կոնֆլիկտի դեպքում, որը չի կրում միջազգային բնույթ և ծագել է Բարձր պայմանավորված կողմերից մեկի տարածքում, ապա կոնֆլիկտի մեջ գտնվող յուրաքանչյուր Կողմ պարտավոր կլինի, որ անձինք, որոնք անմիջականորեն մասնակցություն չեն ունենում ռազմական գործողություններին, ներառյալ զինված ուժերի կողմից այն անձինք, ովքեր զենքը ցած են դրել, ինչպես նաև նրանք, ովքեր ռազմական գործողություններին մասնակցելուց դադարել են հիվանդության հետևանքով, պետք է բոլոր հանգամանքներում օգտվեն մարդասիրական վարվելակերպից՝ առանց որևէ խտրականության ռասայի, մաշկի գույնի, կրոնի կամ հավատի, սեռի, ծագման կամ գույքային դրության կամ ցանկացած այլ համանման չափանիշների պատճառներով:

Զինված ուժերի անձնական կազմը և հաջորդ հոդվածում նշված այլ անձինք, նրանց վիրավորվելու կամ հիվանդանալու դեպքում, պետք է օգտվեն հովանավորությունից և պաշտպանությունից բոլոր հանգամանքներում:

Կոնֆլիկտի մեջ գտնվող այն կողմը, որի իշխանության տակ կհայտնվեն նրանք, նրանց համար կապահովի մարդասիրական վարվելակերպ և խնամք՝ առանց այնպիսի պատճառներով խտրականության, ինչպիսիք են՝ սեռը, ռասան, ազգությունը, կրոնը, քաղաքական համոզմունքները կամ մյուս համանման չափանիշները: Խիստ արգելվում է ոտնձգությունը նրանց կյանքի և անձի հանդեպ և, մասնավորապես, արգելվում է նրանց վերջ տալ կամ ոչնչացնել, նրանց ենթարկել տանջանքների, նրանց նկատմամբ կատարել կենսաբանական փորձեր, միտումնավոր կերպով նրանց թողնել առանց բժշկական օգնության և խնամքի, կանխամտածված կերպով պայմաններ ստեղծել նրանց վարակման համար:

Կոնֆլիկտի մեջ գտնվող կողմերը կձեռնարկեն բոլոր անհրաժեշտ միջոցներն այն բանի համար, որպեսզի մահացածներին հողին հանձնելը կամ նրանց հրկիզումը տեղի ունենա, որքան դա հնարավոր է, անհատապես և, որպեսզի դրա նախորդի աճյունների ուշադիր և, եթե հնարավոր է, բժշկական զննություն՝ մահվան արձանագրման, ինքնության հաստատման և այդ մասին հնարավոր հաշվետվության նպատակով: Կրկնակի ճանաչման մեդալիոնի կեսը կամ ճանաչման բուն մեդալիոնը, եթե այն սովորական մեդալիոն է, պետք է մնա հանգուցյալի վրա:

Դիակները կհրկիզվեն միայն այն դեպքում, եթե դա թելադրված է սանիտարական կարգի անխուսափելի նկատառումներով կամ մահացածների կրոնի հետ կապված դրդապատճառներով: Հրկիզման դեպ-

քում՝ այդ մասին մանրամասն, հրկիզման պատճառները ցույց տալով, պետք է նշվի մահվան մասին ակտում և մահացածների հաստատված ցուցակում:

Դրանից բացի, կոնֆլիկտի մեջ մտնող կողմերը պետք է հետևեն, որպեսզի մահացածները թաղվեն պատվով և, եթե դա հնարավոր է, այն կրոնի ծիսակատարության համաձայն, որին նրանք պատկանում են, որպեսզի գերեզմանները հարգվեն, հնարավորության սահմաններում կենտրոնացվեն ըստ մահացածների ազգության, պահպանվեն հարկ եղածին պես և նշվեն այն ձևով, որպեսզի միշտ հնարավոր լինի դրանք գտնել: Այդ նպատակով և ռազմական գործողությունների սկզբից կողմերը կազմակերպում են գերեզմանների պաշտոնական ծառայություն, որպեսզի հնարավոր դարձնեն ապագայում դիակը շիրմից հանելը, ապահովեն, ինչպիսին էլ որ լինի գերեզմանների գտնվելու վայրը, դիակների ճանաչումը և նրանց հնարավոր ուղարկումը հայրենիք:

Վերադարձման ենթակա անձնակազմի ընտրությունը պետք է կատարվի ռասայի, կրոնի կամ քաղաքական համոզմունքների հետ կապված որևէ նկատառումից անկախ՝ ելնելով առավելապես նրանց կալանման ժամկետների վաղեմությունից և նրանց առողջական վիճակից:

Ռազմական գործողությունների հենց սկզբից կոնֆլիկտի մեջ գտնվող կողմերը կարող են հատուկ համաձայնագրերի միջոցով սահմանել այն անձնակազմի տոկոսային հարաբերակցությունը, որը ենթակա է կալանման, ելնելով գերիների թվաքանակից և ըստ ճամբարների նրանց բաշխումից:

Գլուխ
էկումենիկ շարժում (էկումենիզմ)

§ 1. էկումենիզմի հասկացությունը և էկումենիկ շարժման նպատակը

էկումենիզմ բառն առաջացել է հունական «էյկումեն» բառից, որը նշանակում է ամբողջ տիեզերքը, տիեզերական: Այն համարվում է քրիստոնեական եկեղեցիների միավորման շարժում:

V դ. Քաղկեդոնի ժողովից հետո սկիզբ առած Ընդհանրական եկեղեցու պառակտումը, XI դ. Հույն և Հռոմի եկեղեցիների բաժանումը, XVI դ. Ռեֆորմացիայի արդյունքում ավետարանական եկեղեցիների սկզբնավորումը, այնուհետև՝ XVIII–XX դարերում նորանոր եկեղեցիների ծնունդը հանգեցրել են քրիստոնեական եկեղեցիների միության գաղափարի՝ փոխադարձ հարգանքի, վստահության, միջեկեղեցական գործակցության հիման վրա: էկումենիկ շարժման սկզբունքն է՝ նախ լուծել եկեղեցիների միջև առկա տարաձայնությունները և խնդիրները, ապա՝ միավորվել:

Միջեկեղեցական երկխոսության նպատակ էին հետապնդում ԱՄՆ-ի և Եվրոպայի ավետարանական եկեղեցիների նախաձեռնությամբ 1910-ին էդինբուրգում (Շոտլանդիա) ստեղծված Համաշխարհային ուսանողական քրիստոնեական ֆեդերացիան և Միջազգային միսիոներական խորհուրդը: էկումենյան հարաբերությունների ձևավորման առաջին պաշտոնական առաջարկը կատարել է Կ. Պոլսի հունաց տիեզերական պատրիարքը: Նա 1920-ին «Քրիստոսի եկեղեցիներին ամենուրեք» խորագրով մի շրջաբերական գիր է հղել, որտեղ բոլոր քրիստոնյա եկեղեցիներին կոչ է արել հաղթահարել անվստահությունը և զարկ տալ համագործակցությանը՝ անտեսելով դավանական տարաձայնությունները: Եկեղեցիների հարաբերություններն ավելի սերտացնելու և գործնական քայլեր կատարելու համար առաջարկվում էր նաև ստեղծել մի «լիգա» կամ «ընկերակցություն»: 1937 թվականին որոշվել էր ստեղծել քրիստոնեական եկեղեցիների խորհուրդ, որի իրականացմանը խոչընդոտել է երկրորդ համաշխարհային պատերազմը:

էկումենիկ շարժումը ձևավորվել է 1948 թվականի օգոստոսի 30-ին Ամստերդամում գումարված իր առաջին համաժողովում, երբ ստեղծվել է Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը (ԵՀԽ, նստավայրը՝ Ժնև): էկումենիկ շարժման մասնակից եկեղեցիների գործունեությունը համա-

կարգող այս կազմակերպության նպատակն էր զարգացնել քրիստոնեական եկեղեցիների համագործակցությունը, հաղթահարել տարաձայնությունները: ԵՀԽ բարձրագույն մարմինը համաժողովն է, որը գումարվում է յոթ տարին մեկ, ընտրում է Կենտրոնական կոմիտե, որը հիմնական գործող մարմինն է համաժողովների միջև ընկած ժամանակաշրջանում: Գործադիր աշխատանքները ղեկավարում է գլխավոր քարտուղարը, որին ընտրում է Կենտրոնական կոմիտեն: ԵՀԽ-ն 1961 թվականին Դելիում գումարված III համաժողովում ընդունել է հետևյալ դավանական բանաձևը. «ԵՀԽ-ն եկեղեցիների մի ընկերակցություն է, որը դավանում է մեր Տեր Հիսուս Քրիստոսին որպես Աստված և Փրկիչ ըստ Ս. Գրոց, և աշխատում է միասին իրագործել իր հասարակական կոչումը, ի փառս Աստծո՝ Հոր, Որդու և Սուրբ Հոգու»:

§ 2. էկումենիկ շարժման սկզբնավորումն ու զարգացումը Հայաստանում

Հայ աստվածաբանական միտքը դարեր ի վեր որոնել է այն ուղիները, որոնցով հնարավոր կլիներ կրկին միավորել եկեղեցիները: Եսայի Նչեցին, Ներսես Շնորհալին, Վարդան Այգեկցին, Ներսես Լամբրոնացին, Մխիթար Գոշը հանգել են դավանանքի հանդուրժողականության, քրիստոնեական եկեղեցիների միավորման անհրաժեշտության գաղափարին: Ներսես Շնորհալին, ով եկեղեցիների միության ամենաջերմ ջատագովներից էր, հանգամանորեն շարադրել է Հայ եկեղեցու դիրքը և սկզբունքը եկեղեցական միության հարցում. «Հաւասար ընդ հաւասարի, և ոչ որպէս տէր ընդ ծառայի...յաղագս աստուածային սիրոյն հաղորդութեան և ոչ իբր ի մոլորութենէ դառնալով ի ճշմարտութիւն»:

Արդի շրջանում էլ Հայ եկեղեցին գործուն մասնակցություն է ունեցել միջեկեղեցական հարաբերություններին: 1927 թվականին Լոզանում (Շվեյցարիա) տեղի ունեցած «Հավատի և կարգի» շարժման համաշխարհային I վեհաժողովին մասնակցել են շուրջ 100 քրիստոնեական եկեղեցիների, այդ թվում՝ Հայ եկեղեցու ներկայացուցիչները: Հայ եկեղեցին մասնակցել է նաև 1937 թվականի՝ էդինբուրգի, 1952 թվականի՝ Լունդի (Շվեդիա), 1963 թվականի Մոնրեալի և այլ «Հավատք և կարգ» ժողովներին: Հայ եկեղեցին ԵՀԽ-ին անդամակցել է 1962 թվականի օգոստոսին՝ Փարիզյան նստաշրջանում, Վազգեն Ա Պալճյան կաթողիկոսի՝ նույն թվականի ապրիլի 26-ի դիմումով: ԵՀԽ-ին անդամակցելու խնդրանքով դիմել էր նաև Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պատվիրակները հայտարարություն են արել ԵՀԽ Փարիզի նստաշրջանի դիվանին՝ շեշտելով, որ Հայ եկեղեցին մեկ ամբողջություն է՝ Ս. Էջմիածնի հոգևոր գերագահությամբ և իշխանությամբ, իսկ նվիրապետական աթոռներն ունեն իրենց իրավասության սահմանները: Ընդգծվել է նաև, որ երկու դիմումագրերը չպետք է թողնեն այն տպավորությունը, թե երկու տարբեր և անջատ եկեղեցիներ են դիմում անդամակցության համար:

1975 թվականին ԵՀԽ Նայրոբիի (Քենիա) V համաժողովում Գարեգին արք. Սարգիսյանն ընտրվել է ԵՀԽ փոխատենապետ և պաշտոնավարել մինչև 1983 թվականը: 1991 թվականի Կանբերայի (Ավստրալիա) VII համաժողովում Արամ արք. Քեշիշյանը (1995 թվականից՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա) ընտրվել է ԵՀԽ ատենապետ՝ նույն պաշտոնում վերընտրվելով նաև 1998 թվականի Հարարեի համաժողովում:

Էկումենիկ շարժման շրջանակներում Հայ եկեղեցին խորհրդակցություններ է վարել Արևելյան ուղղափառ, ուղղափառ, կաթոլիկ, բողոքական եկեղեցիների հետ: 1965 թվականին Ադիս Աբեբայում (Եթովպիա) հրավիրվել է Հայ առաքելական, եթովպական, ղպտի, ասորի, Հնդկաստանի մալաբար եկեղեցիների առաջնորդների ժողով, որը մեծ նշանակություն է ունեցել դավանակից եկեղեցիների համագործակցության ճանապարհին: Եկեղեցիների միջև աստվածաբանական երկխոսություն և փոխըմբռնում հաստատելու փորձերից, որոնց գործուն մասնակցություն է ունեցել Հայ եկեղեցին, հիշատակելի են Արևելյան ուղղափառ եկեղեցիների և Հռոմի կաթոլիկ եկեղեցու միջև աստվածաբանական երկխոսության Վիեննայի հինգ ոչ պաշտոնական խորհրդակցությունները (1971, 1973, 1976, 1978, 1988), Արևելյան ուղղափառ եկեղեցիների և ուղղափառ եկեղեցու ոչ պաշտոնական չորս խորհրդակցությունները (1964, 1967, 1970, 1971) և երեք պաշտոնական համատեղ հանձնաժողովի հանդիպումները (Ս. Բիշո վանք՝ 1989, Չամբես ՝ 1990, Ժնև՝ 1993): Դրանք զգալիորեն նպաստել են մեղմելու դավանական տարաձայնությունները, վերացնելու փոխադարձ նզովքներն ու դատապարտությունները, որոնք գոյություն ունեն Քաղկեդոնի ժողովից ի վեր:

Հայ եկեղեցին մասնակցել է նաև Արևելյան ուղղափառ եկեղեցիների և Բարեկարգյալ բողոքական եկեղեցիների համաշխարհային միության ներկայացուցիչների համատեղ հինգ ժողովներին (վերջինը՝ 1999 թվականին, Դամասկոսի Ս. Եփրեմի աստվածաբանական ճեմարանում), ինչպես նաև միջկրոնական համաժողովներին (վերջինը՝ թվով 13-րդը, 1998 թվականին, Բուխարեստում), որոնց մասնակցել են բոլոր մեծ

կրոնների ներկայացուցիչները և քննարկել միջկրոնական ու միջազգային կարևորագույն հիմնահարցեր:

Քրիստոնեական եկեղեցիների հետ բազմաթիվ էկումենիկ հանդիպումներ են գումարվել նաև Ս. Էջմիածնում: Էկումենիկ շարժման շրջանակներում քննարկվում են ոչ միայն եկեղեցական, կրոնական, աստվածաբանական, այլև մարդկությանը հուզող բազմաթիվ այլ խնդիրներ, մշակվում են ընկերային, մարդասիրական, բարեգործական, կրթական և այլ համատեղ ծրագրեր, ստեղծվում էկումենիկ կազմակերպություններ, տեղական խորհուրդներ: Այդպիսիներից է ԵՀԽ Հայաստանյան Կլոր սեղանը, որը 1997-ից Հայաստանի Հանրապետությունում իրականացնում է մի շարք ծրագրեր՝ Հայ առաքելական, Հայ կաթողիկե և Հայ ավետարանական եկեղեցիների ուժերով:

§ 3. Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կազմավորումը

ԵՀԽ-ն անցել է կազմավորման տևական գործընթացների և գաղափարական բուռն պայքարի բովով, որն սկսվել է 20-րդ դարի առաջին քառորդում:

1920 թ. Կոստանդնուպոլսի Տիեզերական պատրիարքությունն առաջինն էր, որ տեղապահ Գենադիոս Միտրոպոլիտի հատուկ շրջաբերականով կոչ արեց Եկեղեցիներին ստեղծել «Բոլոր եկեղեցիների համագործակցություն» կամ «Եկեղեցիների լիգա» (koinonia Ekklesion):

1920 թ. Ժնևում կայանում է «Հավատք և կարգ» շարժման հանձնախմբերից մեկի հանդիպումը, որի ընթացքում մերձեցման վերաբերյալ Տիեզերական պատրիարքության գաղափարը ներկաներին հիշեցնում է Հույն եկեղեցու ներկայացուցիչ պրոֆեսոր Ալվիսատրոսը: Իսկ արդեն 1927 թ. «Հավատք և կարգ» շարժման Լոզանյան կոնֆերանսի 7-րդ նիստում Ուփսալայի արքեպիսկոպոս Նաթան Սոդերբլոնը, անդրադառնալով Կոստանդնուպոլսի եկեղեցու առաջ մղած գաղափարին, մի նախնական օրինակով առաջարկում է գոյություն ունեցող էկումենիկ կազմակերպություններից ստեղծել Եկեղեցիների խորհուրդ:

1937 թ. էդինբուրգի կոնֆերանսում անդրադառնալով Եկեղեցիների խորհրդի գաղափարին՝ Քենթրբերիի արքեպիսկոպոս Ուիլիամ Թեմփլերը նշում է, որ անհրաժեշտ է ստեղծել Միավորված (Una Sancta) եկեղեցի, սակայն, նրա համոզմամբ, դրան պետք է նախորդեր եկեղեցիների միջև համագործակցության ծավալումը, ինչպես նաև փոխօգնությունն

իրենց առաքելության բոլոր ասպարեզներում, ինչն էլ թույլ կտա եկեղեցիների համագործակցության հիմքը դնել:

Արդեն 1937 թ. հուլիսին «Կյանք և գործ» շարժման՝ Օքսֆորդի և «Հավատք և կարգ» շարժման՝ Էդինբուրգի կոնֆերանսների ներկայացուցիչները հանդիպում են Լոնդոնում, որտեղ որոշում են երկու շարժումները միավորել և ստեղծել Եկեղեցիների միացյալ խորհուրդ: Միավորված կազմակերպությունը հռչակեց, որ «իշխանություն չի ունենալու օրենքներ մշակել Եկեղեցիների համար և նրանց որևէ քայլ պարտադրել՝ առանց նրանց համաձայնության, սակայն, որպեսզի այն արդյունավետ լինի, պետք է արժանանա և վայելի Եկեղեցիների հարգանքն այն աստիճան, որ Եկեղեցիներում մեծ ազդեցություն և հարգանք վայելող անձինք կամենան իրենց ժամանակը և միտքը նվիրել նրա գործերի իրականացմանը»:

ԱՄՆ-ի ներկայացուցիչ պրն Մակգրեա Քավերթն առաջարկեց այդ խորհուրդը կոչել Եկեղեցիների համաշխարհային խորհուրդ:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո՝ 1948թ. Ամստերդամում գումարվում է ԵՀԽ հիմնադիր համագումարը, որին մասնակցում էին 147 Եկեղեցիներ՝ աշխարհի 44 երկրներից:

Քննարկումների երկրորդ օրը համագումարը հաստատեց ԵՀԽ-ի սահմանադրությունը, իսկ անդամ եկեղեցիները նախապատրաստեցին և հրապարակեցին իրենց պատգամը. «Քրիստոս մեզ Իրենն է դարձրել, և Նա բաժանված չէ: Նրան փնտրելով մենք գտնում ենք միմյանց: Այստեղ՝ Ամստերդամում մենք պարտավորվում ենք նորոգվել Նրա մեջ և ուխտ ենք կնքում միմյանց հետ՝ սահմանելով եկեղեցիների համաշխարհային խորհուրդը»:

Ամստերդամի համագումարը սահմանեց ԵՀԽ-ի պարտավորությունների, ինչպես նաև այն հարցերի շրջանակը, որոնք վերաբերում էին կառույցի ծրագրերին, քաղաքականությանը և ֆինանսավորմանը: Համագումարը թույլատրեց ԵՀԽ-ին կոչեր ուղղել Եկեղեցիներին ու պետություններին: Ամստերդամի համագումարից հետո էլ սկսվեց ԵՀԽ-ի շարունակական ծավալումը:

ԵՀԽ-ն նոր երևույթ էր եկեղեցիների համար: ԵՀԽ-ի անդամ եկեղեցիները հասկանում էին, որ այս կառույցը ո՛չ գերեկեղեցի է, ո՛չ Տիեզերական եկեղեցի և ո՛չ էլ՝ «Համաշխարհային եկեղեցու սկիզբ»: Նրանց համար ԵՀԽ-ն մի կառույց է, որտեղ տարբեր Եկեղեցիներ իրենց ընդհանուր վկայությունն են բերում Քրիստոսին ծառայելու գործին, փնտրում են այն միությունը, որ Հիսուս Քրիստոսը կամենում է իր Մեկ և Անբաժան

եկեղեցու համար, ինչպես նաև համագործակցում են այն խնդիրների շուրջ, որոնք պահանջում են համատեղ ջանքեր և գործողություններ:

1948 թ. Ամստերդամի համագումարն ընդունել է ԵՀԽ-ի վերաբերյալ Վիսեր դե Հուֆտի ներկայացրած սահմանումը. «… մի համագործակցություն, որ Քրիստոսով մեզ տված միության արտահայտությունն է, որն ի վիճակի է հարթել այդ միությունն ավելի ամբողջական ու լիարժեք ներկայացնելու ճանապարհը»:

Այնուամենայնիվ, այս բանաձևման մեջ հստակեցված չէին ինչպես անդամ եկեղեցիների հետ հարաբերությունները, այնպես էլ անդամ եկեղեցիների պատկերացումները ԵՀԽ-ի գործառնության ու սահմանափակումների նկատմամբ: Հարց էր ծագում, թե անդամակցելով ԵՀԽ-ին՝ արդյո՞ք եկեղեցին ստիպված էր փոփոխություն մտցնել իր կարգավիճակում ու ընկալումներում, թե՝ ոչ: Ի՞նչ էր իրենից ներկայացնում ԵՀԽ-ն և ո՞րն էր նրա դերը:

Չևավորված խնդիրներին լուծում տալու նպատակով ԵՀԽ-ի Կենտրոնական կոմիտեն 1950 թ. Տորոնտոյում հռչակեց «Եկեղեցու, եկեղեցիների և Եկեղեցիների համաշխարհային խորհրդի մասին» հայտարարությունը:

Համաձայն այս փաստաթղթի՝ «Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը գերեկեղեցի չէ և չպետք է դառնա գերեկեղեցի»: Միության համար այն չի կարող հանդես գալ եկեղեցիների անունից: «Այն հիմնված չէ և չի կարող հիմնվել եկեղեցու որևէ մասնավոր սկզբունքի վրա»: ԵՀԽ-ին անդամակցությունն ամենևին էլ չի նշանակում, թե «որևէ եկեղեցի այլ եկեղեցու վերաբերյալ իր ուրույն ընկալումը համարում է հարաբերական» կամ «Եկեղեցու միության հարցի մասին ընդունում է հատուկ բանաձևված որևէ սկբունք»: ԵՀԽ-ի անդամները պետք է հիմնվեն նորկտակարանային ընդհանրական այն վկայության վրա, որ «Քրիստոսն է Եկեղեցու աստվածային գլուխը», որ Քրիստոսի Ընդհանրական եկեղեցուն անդամակցելն ըստ էության ավելի «ընդգրկուն է, քան անդամակցությունն իր առանձին մարմնին»: «Սակայն սա չի նշանակում, որ յուրաքանչյուր եկեղեցի պարտավորված է վերանայել իր եկեղեցաբանական սկզբունքները»: ԵՀԽ-ին անդամակցությունը գործնականում ենթադրում է, որ «Եկեղեցիները պետք է համերաշխությամբ ընդունեն միմյանց, օգնեն միմյանց և զերծ մնան այնպիսի քայլերից, որոնք անընդունելի են եղբայրական հարաբերություններում»:

§ 4. Եկեղեցիների համաշխարհային խորհրդի դերն ու սկզբունքները

ԵՀԽ գործունեության հիմնարար սկզբունքների հիմնաքարն է հանդիսանում ԵՀԽ սահմանադրությունը, որում ամրագրված է, որ ԵՀԽ-ն կոչված է.

- իրականացնել «Հավատք և կարգ», «Կյանք և գործ» և «Միսիոներական Միջազգային խորհուրդ» շարժումների գործը,
- պարզեցնել եկեղեցիների համատեղ գործունեությունը,
- խրախուսել համագործակցությունն աստվածաբանական հետազոտությունների ոլորտում,
- անդամ բոլոր եկեղեցիների մեջ զորացնել էկումենիկ և միսիոներական մտածողությունը,
- նպաստել Եկեղեցիների աշխարհասփյուռ միսիոներական և քարոզչական գործունեությանը,
- հարաբերություններ հաստատել և պահպանել Եկեղեցիների տարածաշրջանային խորհուրդների, Համաշխարհային հարանվանական կառույցների և էկումենիկ այլ կազմակերպությունների հետ,
- եթե դրանց անհրաժեշտությունը կա՝ մասնավոր թեմաների շուրջ հրավիրել համաշխարհային կոնֆերանսներ և իրավունք վերապահել հրատարակելու կոնֆերանսների փաստաթղթերն ու հետազոտությունները:

ԵՀԽ սահմանադրության 4-րդ հոդվածում հստակ նշվում է, որ ԵՀԽ-ն՝

- խորհուրդ է տալիս և հնարավորություն ստեղծում համընդհանուր հարցերի շուրջ միասնաբար գործելու համար,
- կարող է գործել անդամ եկեղեցիների անունից, եթե նրանցից մեկը կամ մի քանիսը հավանություն տան դրան,
- իրավունք չունի եկեղեցիների անունից օրենքներ մշակել կամ որևէ եղանակով գործել նրանց փոխարեն՝ բացառությամբ վերը նշված դեպքերի կամ անդամ եկեղեցիների պահանջի:

Համաձայն ԵՀԽ սահմանադրության՝ ԵՀԽ-ն անդամ եկեղեցիներից ակնկալում է.

1) պատգամավորներ նշանակել ԵՀԽ-ի համագումարների, Խորհրդի որոշում կայացնող գլխավոր մարմնի համար և Խորհրդում՝ այլ եկեղեցիների հետ կերտել էկումենիկ տեսիլքը և ծրագրերն իրականացնելու մեխանիզմները,

2) ԵՀԽ-ին հայտնել իրենց հիմնախնդիրների, հրամայականների, գործունեության և կառուցողական քննադատությունների մասին, որպեսզի նրանք կարողանան մաս կազմել ԵՀԽ-ի ծրագրերին, ինչպես նաև այն ամենը, որոնք անհրաժեշտ են, որպեսզի արտահայտվի էկումենիկ համերաշխությունը և արժանանա ԵՀԽ-ի կամ աշխարհասփյուռ եկեղեցիների ուշադրությանը,
3) եկեղեցական կյանքի բոլոր մակարդակներում տարածել էկումենիկ նվիրումի ոգին, խթանել և քաջալերել էկումենիկ հարաբերությունները և գործունեությունը, տեղական, ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում նպաստել էկումենիկ եղբայրությունը,
4) անդամակցող եկեղեցիներին ներկայացնել ինչպես էկումենիկ շարժման, այնպես էլ ԵՀԽ-ի բնույթի, նպատակների և ծրագրերի էությունը պարզաբանող հիմնահարցերը,
5) քաջալերել մասնակցությունը Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ծրագրերին, գործունեությանը և հանդիպումներին՝ ա) առաջադրելով անձերի, ովքեր կարող են մասնավոր նպաստ բերել և կամ մասնակցել Խորհրդի տարբեր կոմիտեների, հանդիպումների և խորհրդակցությունների աշխատանքներին, բ) կապեր հաստատելով ծրագրերն իրականացնող տեղական գրասենյակների և Համաշխարհային խորհրդի համապատասխան ծրագրերն իրականացնող գրասենյակների միջև և գ) ԵՀԽ-ի տեղեկատվական համակարգին տրամադրել համապատասխան նյութեր (գրքեր, ամսագրեր և այլ հրատարակություններ),
6) պատասխանել Կենտրոնական կոմիտեի որոշումներին, որ հրավիրում է Եկեղեցիներին [այս որոշումներն] ուսումնասիրել, գործադրել կամ այլ հետևողական ծրագրեր իրականացնել, ինչպես նաև արձագանքել՝ աղոթելու, խորհուրդ տալու, տեղեկություններ հաղորդելու և կարծիք հայտնելու խնդրանքներին, որոնք առաջադրում են Կենտրոնական կամ Գործադիր կոմիտեները, կամ էլ՝ գլխավոր քարտուղարը:

§ 5. Հայ առաքելական եկեղեցու անդամակցումը ԵՀԽ-ին

Հայ առաքելական եկեղեցու հետ ԵՀԽ-ին անդամակցելու վերաբերյալ երկխոսություններն սկսվեցին 1959թ.: Պատմական այդ փուլում ԵՀԽ պատվիրակությունը, գլխավոր քարտուղար Վիսեր դե Հուվտի գլխավորությամբ, այցելեց ԽՍՀՄ, ապա Հայաստան՝ Մայր Աթոռ

Ս. էջմիածին: Եռամյա բանակցություններից հետո 1962 թ. օգոստոսի 7-17-ը կայացած նստաշրջանում ԵՀԽ Կենտրոնական վարչությունն ընդառաջելով Ամենայն Հայոց կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա-ի դիմումին, Հայ առաքելական եկեղեցին ընդունեց որպես Եկեղեցիների համաշխարհային խորհրդի անդամ:

1962թ. «էջմիածին» ամսագրում նշվում է, որ «Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը», Հայ եկեղեցուն ընդունելով որպես իր լիիրավ անդամ, «հանդիսավոր կերպով նշեց ու արձանագրեց, թե մեկ է և անբաժանելի Հայաստանյայց առաքելական եկեղեցին իր բոլոր նվիրապետական աթոռներով, հոգևոր վերին իշխանությանը ներքև Ամենայն Հայոց Հայրապետության»: Իսկ մինչ այդ, Հայ եկեղեցու կողմից ԵՀԽ-ի Ամստերդամի 1948թ. համագումարին մասնակցելու կազմկոմիտեի հրավերի պատասխանը հանդիսացավ Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ջ Չորեքչյանի գլխավորած պատվիրակության մասնակցությունը 1948թ. Մոսկվայում Համայն Ռուսիայի պատրիարք Ալեքսի Ա Սիմանսկու գլխավորությամբ կայացած Ուղղափառ եկեղեցիների գահերեցների ժողովին, որն ընդունեց «Լուծում էկումենիկ հարցի վերաբերյալ» վերտառությամբ համատեղ հայտնի հայտարարությունը: էկումենիկ բնույթի այդ փաստաթուղթը, մի կողմից, արտահայտվում էր պապականության դեմ, իսկ, մյուս կողմից՝ էկումենիկ շարժումն ու բողոքականության շրջանակներում ձևավորված միսիոներական տարաբնույթ կառույցներն ու կազմակերպությունները համարվում էին «հակաարշավ պապականության դեմ»: Իսկ դրանից հետևում է, որ 1948 թ. էկումենիկ շարժման նկատմամբ Հայ եկեղեցու դիրքորոշումը ժխտողական էր:

Հայ եկեղեցին հանդիսանում է նաև էկումենիկ այլ կառույցների անդամ: 1977 թ. Ս. էջմիածինն անդամագրվեց «Եկեղեցիների եվրոպական կոնֆերանս» կազմակերպությանը, Մայր Աթոռ Սուրբ էջմիածինը գործուն մասնակցություն ունի նաև վերջինիս կյանքին: Հայ եկեղեցին իր թեմերով անդամակցում է նաև Եկեղեցիների ազգային խորհուրդներին, որոնց մեջ գործուն է հատկապես ԱՄՆ Քրիստոսի Եկեղեցիների Ազգային Խորհուրդը, որին ԱՄՆ Հայոց Արևելյան թեմն անդամագրվել է 1957թ.: Հայ եկեղեցին ակտիվորեն մասնակցում է նաև տարածաշրջանային այլ կառույցների՝ Մերձավոր Արևելքի Եկեղեցիների Կոնֆերանսի աշխատանքներին, ուր հատկապես գործուն է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը: Իր ստեղծման սկզբնական շրջանում այս կազմակերպության աշխատանքներին ակտիվորեն մասնակցում էին նաև Երուսաղեմի Հայոց պատրիարքության ներկայացուցիչները:

Բազմիցս ԵՀԽ-ն առիթ է ընձեռել Հայ եկեղեցուն բարձրաձայն աշխարհին կոչեր հղելու Հայոց ցեղասպանությունը ճանաչելու և Արցախի արդար դատին զորավիգ կանգնելու համար:

Այսպես, ԵՀԽ Վանկուվերի վեցերորդ համագումարը հայ պատվիրակների առաջարկով քննարկել է 1915 թ. Հայոց ցեղասպանության հարցը: Ընդունվել է 4 կետերից բաղկացած մի բանաձև, որով ԵՀԽ-ն ոչ միայն ճանաչեց Հայոց ցեղասպանությունը, այլև կոչով դիմեց ՄԱԿ-ի և ԵՀԽ-ի գլխավոր քարտուղարներին, որպեսզի այս հարցը քննարկման դրվի անդամ եկեղեցիներում: 1991թ. Վազգեն Ա կաթողիկոսն ուղերձով դիմեց Կամբերայի յոթերորդ համագումարին՝ կոչ անելով սատար կանգնել արցախահայությանը: Ի պատասխան Հայրապետական ուղերձի և Հայ պատվիրակության խնդրանքի, համագումարն ընդունեց հետևյալ որոշումը. «Մենք մտահոգված ենք. Ղարաբաղի հայ ազգաբնակչությունը զոհ է դառնում խտրականության, ահաբեկչության և բռնությունների»: Դրա հիման վրա ԵՀԽ-ն որոշեց՝

ա) անմիջապես միջոցներ ձեռք առնել հայ ազգաբնակչության կրոնական, մշակութային և ազգային շահերը պաշտպանելու համար,

բ) ապահովել Ղարաբաղի շրջանի բոլոր բնակիչների մարդկային իրավունքները,

գ) պահանջել անդամ բոլոր եկեղեցիներից, որ աղոթեն հայության համար, որոնք «պայքարում են հանուն արդարության ու խաղաղության»:

Ջուգահեռաբար հայ ժողովրդի համար կառույցն իրականացրել է նաև նյութական և բարեգործական այլ ծրագրեր ևս:

Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո, երբ հանրապետությունը գտնվում էր Արցախյան պատերազմի և հարևան երկրների կողմից շրջափակման մեջ, իսկ Հայաստանի հյուսիսային շրջանները տուժել էին 1988թ. ավերիչ երկրաշարժից, ԵՀԽ հովանավորությամբ քննարկումներ, Կլոր սեղաններ կազմակերպվեցին ԵՀԽ-ի, ինչպես նաև Հայ առաքելական, Հայ կաթոլիկ և Հայ Ավետարանական եկեղեցիների ներկայացուցիչների միջև՝ Հայաստանում բարեգործական և զարգացման ծրագրեր իրականացնելու համար: 1993 թ. և 1996 թ. նման հանդիպումներ տեղի են ունեցել նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնում:

Այդ հանդիպումների արդյունքում 1997 թ. ստեղծվեց ԵՀԽ-ի Հայաստանի Կլոր սեղանի գրասենյակը, որը Հայաստանում և Արցախում իրականացնում է կրթական, գյուղատնտեսական և բարեգործական, զարգացման ծրագրեր՝ ուղղված աղքատության նվազեցմանը, համայնքնե-

րի հզորացմանը և հատկապես շարքային քաղաքացիների ինքնուրույնության և նախաձեռնության խթանմանը:

§ 6. Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամի /ՀԿՍ/ ստեղծումն ու գործունեության հիմնական ոլորտները

Էկումենիկ ՀԿՍ-ն ստեղծվել է 1996 թվականին (գրասենյակը հիմնվել է 1997թ.) Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և Եկեղեցիների համաշխարհային խորհրդի համատեղ նախաձեռնությամբ և Հայ ավետարանական ու Հայ կաթոլիկ եկեղեցիների մասնակցությամբ: ՀԿՍ-ն իր ստեղծման օրվանից աշխատում է Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հովանու ներքո և համախմբելով հայ եկեղեցիների, տեղական հասարակական կազմակերպությունների, եկեղեցուն հարող գործընկերների ուժերը՝ միասնաբար պայքարում է երկրի առանցքային սոցիալական և տնտեսական հիմնախնդիրների լուծման համար:

2003 թվականի նոյեմբերից կազմակերպությունն ունի հիմնադրամի կարգավիճակ և գրանցված է ՀՀ արդարադատության նախարարությունում՝ «Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամ» անվամբ: Կազմակերպության հիմնադիրներն են Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը:

ՀԿՍ-ն ձգտում է մեր Տեր Հիսուս Քրիստոսի Ավետարանի և քրիստոնեական սոցիալական ուսմունքի լույսի ներքո ստեղծել խաղաղ և արդար հասարակություն, որտեղ հարգվում են Աստծո ստեղծածները: ՀԿՍ-ն իր գործով և խոսքով կյանքի է կոչում քրիստոնեական արժեքները, խոցելի խմբերի համար ապահովում է արժանապատիվ կյանք՝ հավասար իրավունքներով և հնարավորություններով:

Հիմնված լինելով աստվածաշնչյան diakonia (ծառայություն) և koinonia (եղբայրություն) գաղափարների վրա՝ Կլոր սեղանը մի կառույց է, որն իր գործընկերությունն իրականացնում է կոնկրետ գործողությունների միջոցով: Գործընկերները համատեղ իրականացնում են Հայաստանի Կլոր սեղանի ծրագրային նպատակներին համապատասխանող ծրագրեր և միջոցառումներ:

Կլոր սեղանի ամենամյա ժողովը խորհրդատվական մարմին է, որտեղ համախմբվում են ՀԿՍ էկումենիկ և տեղական գործընկերները՝ կազմակերպության ուղղությունների և առաջնային աշխատանքների շուրջ որոշումներ կայացնելու, ՀԿՍ ծրագրերի ընդհանուր քաղաքականությունը և կառուցվածքն առաջնորդելու, ծրագրերի մասին հաշվետվություններն ու աուդիտները վերահսկու նպատակով, որպեսզի ծրագրերն իրականացվեն ՀԿՍ-ի հեռանկարին և առաքելությանը համապատասխան:

Հանդիպումները ողջունվում են Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն պատրիարք և Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից: Ամենամյա հանդիպումների և ՀԿՍ կողմից կազմակերպված բազմաթիվ միջոցառումների մասնակիցները հնարավորություն են ունենում Վեհափառ Հայրապետի հետ հանդիպելու և քննարկելու ՀԿՍ ռազմավարությունը և այլ հատուկ հարցեր:

Հիմնադրման օրվանից ՀԿՍ-ն աշխատել է տարբեր ոլորտներում. տրամադրել է փոքր վարկ և մարդասիրական օգնություն, իրականացրել է կրթական, գյուղատնտեսության զարգացման և սոցիալական դիակոնիայի, եկեղեցիների մասնակի վերանորոգման և այլ ծրագրեր: 1997 թվականին ՀԿՍ-ն իր գործունեությունն սկսեց մարդասիրական ծրագրերից: Մասնավորապես. աջակցում էր մարդասիրական օգնություն տրամադրելով բնական աղետներից տուժածներին, շահույթ ապահովող նախաձեռնություններով, փոքր վարկային ֆոնդերի տրամադրմամբ, չորացած միրգ արտադրելուն, հոգևոր վերելքին եկեղեցիների վերակառուցման միջոցով, անապահով ընտանիքների ամառային հանգիստը ապահովելով և այլն: ՀԿՍ-ն աստիճանաբար ծավալեց իր ծրագրերը և մարդասիրական ծրագրերից անցավ զարգացման ծրագրերի իրականացման գործընթացին, որոնք միտված են ապահովելու Հայաստանում սոցիալական և տնտեսական ոլորտներում առկա խնդիրների երկարատև լուծմանը, ինչպես նաև հասարակության հոգևոր կյանքի վերելքին:

ՀԿՍ առաջնային ոլորտներից էր Փոքր վարկային ֆոնդի ստեղծումը երջանկահիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի աջակցությամբ, որը 1997-2002թթ. օժանդակել է ինքնազարգացման փոքր նախաձեռնություններին հարյուրավոր մարդկանց համար Հայաստանի ամբողջ տարածքում:

Տեսնելով փոքր վարկերի տրամադրումից ստացված արդյունքները, 1999 թվականին ՀԿՍ-ն Հայաստան հրավիրեց էկումենիկ եկեղեցական փոխատվական ֆոնդին (ECLOF), որը հիմնվեց 2000 թվականին,

որպես Հայաստանյան ազգային էկումենիկ եկեղեցական փոխատվական ֆոնդ: Այն Հայաստանում իրականացնում է փոքր և միջին բիզնեսի զարգացման ծրագրեր:

1997 թվականից ՀԿՍ-ն ծրագրել և իրականացրել է մոտ 300 դրամաշնորհային ծրագրեր՝ ուղղված սոցիալական դիակոնիայի և կրթության, գյուղատնտեսության և կարողությունների զարգացման ոլորտներին: Կրթական ծրագիրը նպատակ ուներ զարգացնելու և բարելավելու Հայաստանում կրթական և սոցիալական համակարգերը: Մի շարք կրթական և սոցիալական ծրագրեր են իրականացվել՝ ուղղված անապահով խմբերի աջակցմանը, երկրի կրթական և սոցիալական սեկտորների բարելավմանը, քրիստոնեական կրթության ապահովմանը, ինչպես նաև թիրախային խմբերի ինքնազարգացման ապահովմանը, որպեսզի վերջիններս կարողանան հաղթահարել գործազրկության և սոցիալական ոլորտի հետ կապված խնդիրները: ՀԿՍ-ն աջակցել է նաև եկեղեցու մասնակցությանն արժեքային համակարգ ձևավորող մանկավարժության, ինչպես նաև սոցիալական ծառայությունների ապահովմանը:

Գյուղատնտեսության զարգացման հիմնական նպատակն է նպաստել գյուղական համայնքների ակտիվացմանը և բարելավմանը, աջակցել աղքատության կրճատմանը՝ համայնքային զարգացման միջոցով: ՀԿՍ-ի՝ Կարողությունների զարգացման և դասընթացների ծրագիրն սկսվել է 2004 թվականից: Ծրագրի նպատակն է նպաստել քաղաքացիական հասարակության զարգացմանը՝ նրա հնարավորությունների և կարողությունների զարգացման միջոցով, ինչպես նաև ստեղծել նրա անդամների միջև համագործակցության ցանց: Ծրագրի նպատակն է բարելավել ՀԿՍ գործընկերների գիտելիքները և կարողությունները ծրագրի կառավարման, պլանավորման, վերահսկման և գնահատման ուղղությամբ, ապահովել անհրաժեշտ դասընթացներով և խորհրդատվություններով, կազմակերպել ՀԿՍ տեղական գործընկերների միջև փորձի փոխանակման միջոցառումներ: 2005 թվականից ի վեր ՀԿՍ-ն երկու նոր ուղղություններ որդեգրեց՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարելու ուղղությունը՝ եկեղեցու ուղղակի մասնակցությամբ, և խաղաղության ու տարածաշրջանային հաշտեցման ծրագիրը:

ՀԿՍ-ն իր գործունեության տարիներին տրամադրել է ֆինանսական (դրամաշնորհային) աջակցություն, խորհրդատվություն և տեղեկատվական դասընթացներ, ինչպես նաև զբաղվել է շահերի պաշտպանությամբ: ՀԿՍ-ն իր գործընկերների միջոցով օժանդակում է թիրախային խմբերին՝ սոցիալապես անապահով երեխաներին, երիտասարդներին, գործա-

զուրկներին, ֆերմերներին, միայնակ ծերերին, փախստականներին, հաշմանդամներին՝ ուսուցիչների, սոցիալական աշխատողների և հոգևորականների աջակցությամբ:

ՀԿՍ-ն իր ծրագրերն իրականացնում է համագործակցելով գործընկերների՝ եկեղեցու, ծխերի և տեղական հասարակական կազմակերպությունների հետ, որոնք ընդունում են ՀԿՍ-ի տեսլականը, առաքելությունը և աշխատանքային կանոնները:

ՀԿՍ նախաձեռնությունները երկարատև ֆինանսական աջակցություն են ստանում մի շարք նվիրյալ էկումենիկ կազմակերպությունների կողմից: 1997 թվականին ՀԿՍ-ն սկսեց ութ փոքր ծրագրերի իրականացում երկու տեղական հասարակական կազմակերպությունների և Հայ եկեղեցու հետ համագործակցությամբ: 2006 թվականին իրականացվել են 170-ից ավելի ծրագրեր, որոնք կյանքի են կոչվել թվով 15 ՀԿ-ների և 12 ֆինանսավորող կազմակերպությունների, ինչպես նաև բազմաթիվ ծխերի աջակցությամբ:

Տարիների ընթացքում համագործակցելով ծրագրային աշխատանքներ իրականացնող կազմակերպությունների հետ՝ ՀԿՍ-ն նպատակ ուներ զարգացնելու տեղական ՀԿ-ների կարողությունները՝ դրանց ինքնուրույնությունն ու կայունությունն ապահովելու համար: Կայուն և ինքնուրույն դարձած կազմակերպություններից են «ԲիոէկոՄեդ»-ը, «Սյունիք» և «Շեն» ՀԿ-ները, որոնք աշխատում են գիտական հետազոտությունների, կրթության և սոցիալական համակարգի ապահովման, ինչպես նաև գյուղատնտեսության զարգացման ուղղությամբ:

§ 7. ՀԿՍ դերը քաղաքացիական հասարակության և էկումենիկ շարժման մեջ

1997 թվականից ՀԿՍ-ն անդամ է հանդիսանում միջազգային միություններում՝ Եկեղեցիների համատեղ գործողություններ միջազգային ծրագրում, Եկեղեցիների համատեղ գործողություններ զարգացման ծրագիրը ղեկավարող հանձնաժողովում, ինչպես նաև ընդգրկված է ԱՊՐՈԴԵՎ-ի աշխատանքներում: Իր գործունեության ընթացքում ՀԿՍ-ն ստանձնել է համակարգող կազմակերպության դեր, որն ինչպես առանձին, այնպես էլ տեղական ՀԿ-ների, միջազգային կազմակերպությունների և պետության հետ համագործակցության միջոցով տարաբնույթ գործունեություն է իրականացնում: ՀԿՍ-ի համար կարևոր նշանակություն ունի քաղաքացիական զարգացման խմբերի հնարավորությունների և

կարողությունների զարգացման միջոցով քաղաքացիական զարգացման խթանումը, ինչպես նաև պետության հետ համագործակցության ստեղծումը: 2006 թվականի մայիսից ՀԿՍ-ն Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամի հայաստանյան ծրագրի «Գործընկերության ստեղծում՝ աճի միջոցով աղքատության կրճատման համար» շահագրգիռ կողմերի հանձնախմբի, ինչպես նաև Կառավարման խորհրդի անդամ է:

ՀԿՍ-ն հիմնել է ՀԿ-ներից, պետական և եկեղեցական կառույցներից, երիտասարդական միություններից բաղկացած ՀԿ-ների ցանց, որը մասնակցում է կրթական, սոցիալական, գյուղատնտեսական, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տարածաշրջանային խաղաղության և այլ հարցերի շուրջ կազմակերպվող քննարկումներին: Ստեղծման օրվանից ի վեր ՀԿՍ-ն իր գործունեության ցանցում ներգրավել է շահագրգիռ տարբեր կողմերի՝ ամրապնդելով նրանց միջև կապը:

ՀԿՍ-ն լինելով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու անդամ՝ մասնակցում է բազմաթիվ տարածաշրջանային և գլոբալ էկումենիկ հավաքների, ներառյալ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի (ԵՀԽ), ինչպես նաև ԵՀԽ տարբեր հանձնախմբերի:

2006 թվականին ՀԿՍ-ն, իր անդամ եկեղեցիների, գործընկեր ՀԿ-ների, թիրախային խմբերի և ֆինանսավորող կազմակերպությունների մասնակցությամբ, մշակեց ՀԿՍ 2007-2010թթ. ռազմավարությունը, որի համաձայն ՀԿՍ-ն աշխատում է՝

համապարփակ համայնքային զարգացման, կարողությունների զարգացման և տարածաշրջանում խաղաղության ու հանդուրժողականության խթանման ուղղություններով:

Ծրագիրը նպատակ ունի նպաստել խոցելի համայնքների բնակչության կենսամակարդակի կայուն աճին՝ համայնքային խմբերի կարողությունների հզորացման և նրանց զարգացման ակտիվ ու կենսունակ գործիչ դարձնելու միջոցով: Ծրագրի իրականացման համար ընտրվել են մասնավորապես Գեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերը: Նման ընտրությունը պայմանավորված է այդ մարզերում աղքատության համեմատաբար բարձր մակարդակով: Բացի դրանից, ՀԿՍ նախորդ ծրագրերի իրականացման շնորհիվ այդ մարզերում ստեղծվել են բարենպաստ պայմաններ սույն ծրագրի իրականացման համար:

Ծրագրի նպատակն է նպաստել քաղաքացիական հասարակության զարգացմանը՝ ՀԿՍ գործընկերների կարողությունների զարգացման և նրանց միջև համագործակցային ցանցի ամրապնդման միջոցով: ՀԿՍ - կողմից կազմակերպված դասընթացները և փորձի փոխանակման նպա-

տակով իրականացված այցելություններն ու հանդիպումները նպաստում են ոչ միայն ՀԿՍ գործընկերների աշխատանքային կարողությունների զարգացմանը, այլ նաև նրանց միջև համագործակցային ցանցի ամրապնդմանը: Իր գործունեությունն սկսելով փոքրաթիվ կազմակերպությունների հետ, այսօր ՀԿՍ-ն Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում ունի գործընկերների լայն ցանց՝ ի դեմս երեք եկեղեցիների և մի շարք հասարակական կազմակերպությունների: Ստեղծված ցանցերը բարենպաստ հող են նախապատրաստում քաղաքացիական հասարակության տարբեր խմբերի միջև երկխոսության զարգացման և համագործակցության համար (գործընթացում ընդգրկելով առավելագույն թվով ՀԿ-ներ, եկեղեցապատկան կազմակերպություններ և պետական կառույցների ներկայացուցիչներ)՝ լուծելու համայնքի առջև ծառացած հիմնախնդիրները:

Խաղաղության ծրագիրը նպատակ ունի խթանել տարածաշրջանային հանդուրժողականության քննարկումները, մասնավորապես հայ-ադրբեջանական խնդրի շուրջ, հասարակ մարդկանց մակարդակով՝ ներառելով հասարակական կազմակերպությունների, ՁԼՄ-ների, կրթության ոլորտի մասնագետների և հոգևորականների: Բոլոր շահագրգիռ կողմերը պետք է.

1. ընդունեն, որ հակամարտության երկարատևությունը կարող է միայն խորացնել սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները,
2. կիսեն այն համոզմունքը, որ խաղաղության վերականգնման համար առավել արդյունավետ է ներքևից վերև մոտեցումը, այսինքն՝ գործընթացն սկսել հասարակ մարդկանցից,
3. ընդունեն, որ երկխոսությունը և քննարկումները հզոր ներուժ են փոխըմբռնման և աջակցության, այնպես ինչպես ստեղծագործական գաղափարները հակամարտության լուծման և խաղաղության կառուցման ճանապարհին:

ՀԿՍ-ն սույն նախաձեռնության իրականացումն սկսել է Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն պատրիարք և Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնությամբ:

Գլուխ
Աղանդավորական շարժում

§ 1. Աղանդավորական շարժման անցյալն ու ներկան

Նախևառաջ հարկ է պատմական աղանդները տարբերել նոր աղանդավորական շարժումներից: Անցյալում աղանդ էին կոչվում այն մարդկանց խմբերը, որոնք, անջատվելով կրոնական մայր համայնքից, հետևում էին անջատողական ղեկավար անձին, որը դառնում էր նրանց «ուսուցիչը» կամ «գուրուն»: Աղանդ բառն առաջացել է լատինական Secta բառից, որը նշանակում է հետևել՝ հետևորդների դավանած ուսմունք: Սակայն արդի ժամանակներում գործող նոր աղանդները հիմնովին տարբերվում են պատմական աղանդներից, որոնց հիմնական մասն իրականում սոցիալ-քաղաքական շարժումներ էին և գյուղացիական ապստամբություններ՝ կրոնական քողի տակ գործող, որոնք պահանջում էին եկեղեցու հաստատության բարեկարգում ու վերադարձ դեպի քրիստոնեության մաքրամաքուր ակունքները, որոնցից հեռացել էին ոչ միայն եկեղեցական հայրերը, այլև պետական այրերը, որոնք գործընկերներ էին հին ավատապետական դարերում: Այսպիսի շարժում էր, օրինակ, հայ թոնդրակեցիների շարժումը, որը սոցիալական և ազգային առումներով ազատագրական բովանդակություն ուներ:

Շարժումը հետևում էր Նազովրեցի Հիսուսի ուսմունքին և ոչ թե դոգմայացած Քրիստոսին և ինստիտուցիոնալացված եկեղեցուն: Հետևաբար, սխալ և հակագիտական է այսպիսի շարժումներին տալ «աղանդ» անվանումը՝ բառի ներկայի իմաստով: Այս առումով մեծապես ուսանելի աղբյուր է Էրիկ Ֆրոմի (Eric Fromm) «Քրիստոսի դավանության» (The Dogma of Christ) խորագրով գիրքը, որտեղ ցույց են տրվում Նազովրեցի Հիսուսի՝ որպես Քրիստոս դավանանքի վերացման իսկական նպատակներն ու շահադական նկրտումները:

Նոր աղանդները բացարձակապես կապ չունեն կրոնի հետ, ընդհակառակը, նրանք գործում են ծածկագիտական եղանակով՝ ընդդեմ մարդկայնական գաղափարների, ներառյալ, ինչպես տեսանք, քրիստոնեության: Օրինակ՝ մունականները, որոնք գործում են նաև Հայաստանում, իրենց կարգախոս են ընտրել «Որքան եռանդագին գործենք մենք՝ այնքան արագ կփլուզվի քրիստոնյա աշխարհը»: Մունականը գործում է շարժման պարագլուխ Սան Մեոն Մունի հաջողության ու հաղթանակի

համար, նրա կապվածությունը Մունի անձի հետ է և հոգեպես չի հաղորդակցվում Աստծու հետ, ինչը հատուկ է քրիստոնեական կրոնին:

Աղանդների անդամներն ունեն երեք աստիճան.

1. ներքին կորիզը, որի անդամները նշանակովի են, արհեստավարժ, նրանց կեցությունն ապահովում է շարժման բյուջեն: Միայն նրանք են վերահասու շարժման բուն նպատակներին,
2. հավատարիմ և նվիրյալ, այսինքն՝ կույր և մոլեռանդ հետևորդների ոչխարի հոտը,
3. մասամբ ներքաշվածներ՝ մի տեսակ «այցելու» անդամներ, որոնք հետևորդների մեծամասնությունն են կազմում և հասարակության մեջ ամրապնդում են աղանդի դիրքերը, քանի որ մասնավոր շահեր են հետպնդում:

Աղանդավորական շարժման հետևորդի գիտակցությունն ընդմիշտ պարագլխի ամբողջական վերահսկողության տակ է. մի անգամ ընկնելով ծուղակը՝ նա դառնում է գերին աղանդի ծածկագիտական ծեսերի, նրա յուրահատուկ եզրույթի ու բառապաշարի, եզրաբանության ու դարձվածաբանության: Այսպիսով, մարդկանց գիտակցությունը սահմանափակվում է ու շեղվում սոցիալական, քաղաքական, տնտեսական ու մշակութային իրական հարցերից և հասարակական իսկական պայքարի դաշտից:

Գլոբալացման ուժերից է նոր աղանդավորական շարժումը՝ սիոնականության, մասոնականության և այլ ծածկագիտական շարժումների շարքում: Աղանդավորական մեծ շարժումներն ունեն ֆինանսական հսկայական միջոցներ, որով կարող են կաշառել պետական այրերի ու բարձրաստիճան պաշտոնյաների՝ վերջիններիս իրենց նպատակներին ծառայեցնելու համար: Օրինակ՝ Մունի աղանդը 1995թ. մայիսին և սեպտեմբերին կարողացավ իր նպատակներին ծառայեցնել նախագահ Ջորջ Բուշին ու նրա տիկնոջը՝ Բարբարային, մի կլորիկ վարձատրության դիմաց և վիրավորել Ճապոնիայի ազգային արժանապատվությունը, որի դեմ բողոքեցին այս աղանդի զոհերի պաշտպան փաստաբաններն ու Ճապոնիայի Բողոքական եկեղեցիների միությունը: Այս իրադարձությունների շուրջ չկարողացան լռություն պահպանել նաև «Նյու Յորք թայմսն» ու «Վաշինգթոն պոստը»՝ իրենց 1995թ. սեպտեմբերի 6-ի համարներում:

Մի շարք աղանդավորական շարժումներ ուղղակիորեն կամ իրենց ներքին կորիզի միջոցով կապ ունեն «Սիոնա-ամերիկյան համաշխարհային կայսրության» (որը կոչվում է New World Order՝ Աշխարհի նոր

կարգ) և նրա նպատակներն իրականացնող գաղտնի մարմինների հետ, որոնց մասին մի խորազնին ուսումնասիրություն է Գարի Հ. Կահի գիրքը (Gary H. Kah, ‚On Route to GLOBAL OCCUPATIONե, Lafayette, Louisiana, 1992, Huntington House Publishers):

Այս վտանգավոր շարժումների դեմ այսօր պայքար է մղվում Եվրամիության հին անդամ երկրներում, մինչդեռ Եվրամիության Կոմիսարիատը Հայաստանի իշխանություններից պահանջում է «խղճի ազատության» in abstracto գործադրում: Այլ կերպ՝ Եվրամիության հին (մեծ) անդամ երկրներն այդ սկզբունքն իրենց մոտ գործադրում են in concreto ձևով, որպեսզի այդ սկզբունքի գործադրումը չվնասի հին (մեծ) երկրների ազգային շահերը և թույլ չտրվի դրա չարաշահում աղանդավորականների կողմից, մյուս կողմից, սակայն, Եվրախորհրդի նոր (փոքր) անդամ երկրներից պահանջում են նրա in abstracto 12 գործադրում՝ ի վնաս վերջիններիս ազգային շահերի:

§ 2. Աղանդավորական խմբի էությունը և նպատակները

Աղանդն ընդդիմադիր հոսանք, ուսմունք կամ դավանանք է համաշխարհային այս կամ այն կրոնում: Աղանդը շեղում է հիմնական կամ պաշտոնական դավանանքից և հաճախ հակադրվում է դրան:

Աղանդի հետևորդները կոչվում են աղանդավորներ: Դրանք մարդկանց (հավատացյալների) խմբեր են, որոնք անջատվել են ավանդական եկեղեցուց և, չընդունելով նրա դավանանքի որոշ կետեր կամ դավանանքն ամբողջությամբ, քարոզում են իրենց առաջնորդի առաջ քաշած գաղափարները: Վերջիններս մեծ մասամբ հիմնված են Ավետարանի այս կամ այն հատվածի կողմնակալ մեկնաբանության վրա՝ ըստ աղանդի շահերի և համոզմունքների: Աղանդավորները՝ որպես առանձին կազմակերպված համայնքներ, ընդդիմադիր են ոչ միայն ավանդական եկեղեցուն, այլև հաճախ՝ պետությանն ու պետական կառույցներին: Աղանդների հետևորդները խուսափում են ազգային, հասարակական, բարոյական պարտավորություններից:

Աղանդավորական է այն խումբը կամ կազմակերպությունը, որն ունի իր առաջնորդը, ով հանդես է գալիս որպես միակն ու անհերքելին: Նա գործում է որպես գայթակղող կամ բռնակալ: Իր հետևորդների համար վերջինս կուռք է, որից կամ վախենում են, կամ՝ պաշտում:

Աղանդավորական խումբը ներկայացնում է փրկության իր ուսմունքը՝ որպես միակը և վերջնականը, որը կարող է տալ ամբողջական գիտելիքներ և ճիշտ պատասխան ձեր բոլոր խնդիրներին:

Ըստ այս խմբի համոզմունքների ու ճշմարտության՝ պետք է խզել բոլոր կապերն ընկերների, ծանոթների ու շրջապատի հետ՝ երբեմն խախտելով մարդու իրավունքները:

Աղանդավորական խումբը գործածում է մարդկանց հավաքագրման և մեքենայության այն մեթոդներ, որոնք ցրում են բոլոր տեսակի կասկած հարուցող հարցերը և հաճախ առաջ բերում հետևորդի անհատականության մերժում: Լավագույն դեպքում, խումբը նրան առաջարկում է պարզունակ, ճղճիմ պատասխաններ ու գործնական այնպիսի կանոններ, որոնք նրան ազատում են իր կյանքը բարդացնող երևույթներից:

Աղանդավորական հետևորդն աստիճանաբար արմատավորվում է խմբի կենսակերպի մեջ՝ առանց քննադատական մտորումների, որոնք նրան թույլ կտան իր անհատական դատողություններն անել: Այդ խմբում իր մասնակցության ապագան իր համար նույնքան մութ ու անորոշ է, որքան որ արտաքինից այդ խումբը:

Հետևորդը շահագործվում է (ինտենսիվ աշխատանք, դրամական պարգևներ) և առաջնորդները նրա թիկունքում օգուտ են քաղում: Այս խարդախությունները ոչ միշտ են հետապնդում անհատական հարստացման նպատակներ, այլ ելնելով խմբի շահերից կարող են խախտել զգուշավորության տարրական կանոնները՝ անտեսելով անհատներին, նրանց ապագան ու ընտանիքները:

Վտանգները բազմազան են՝ առողջությանը, ազատություններին, երեխաների կրթության սպառնացող: Նույնիսկ այն աստիճան, որ դժվար է իմանալ, թե ինչ է կատարվում փակ խմբում:

Խումբը հոգեորսությամբ է զբաղվում: Այն մարդկանց դեպի իրեն է ձգում գայթակղությամբ, բռնի ուժով՝ նպատակ ունենալով որքան հնարավոր է նրանց արագ ներքաշել աղանդավորների շարքերը և խզել անցյալում ունեցած կապերը:

Խումբն իր ներսում բացառում է որևէ զանազանություն (բոլոր հետևորդները միևնույն ուղվածությունն ու նպատակներն ունեն) և արգելում է կենսակերպի փոփոխությունը կամ տարակարծությունը:

Կարևոր է մշտապես հիշել աղանդավորական գործունեության այն բոլոր վտանգները, որոնք կարող են ի հայտ գալ եկեղեցիներում: Վտանգն առկա է հենց այն ժամանակ, երբ խումբն սկսում է կուրորեն հետևել իր հոգևոր առաջնորդին, անդամներին դրդել կապերը խզել հա-

ռազատների հետ, վերացնել հոգևոր պայքարի նախադրյալները, պատսպարվել իրենց երևակայական աշխարհում:

Վտանգավոր են նաև այն աղանդավորական խմբերը, որոնք քողարկում են, փաստորեն, մյուսների վախը: Երբ հաստատության անվտանգությունը կամ խմբի ջերմությունը (այնտեղ, ուր քեզ լավ ես զգում) վերածվում է վախի և զգուշավորության, որն արգելում է սիրտդ բացել աշխարհի առջև և արձագանքել Հոգու անկանխատեսելի կանչերին, եկեղեցական ամբողջ դինամիկան կորցնում է իր ուժն ու էներգիան: Աղանդը պետական կրոնը ջարդելու, երկիրը քանդելու՝ դրսից ներմղված ուժ է: Ըստ մեր եկեղեցու՝ աղանդը կոնկրետ կրոնից, գերակայող եկեղեցուց հեռացած, շեղված կրոնական համայնք է: Այսինքն՝ ինչ-որ կրոնի հիման վրա ձևավորված, բայց ընդունված ընկալումից ու մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ: Ժամանակակից կրոնները՝ որպես աղանդներ, ծագել են նախկին կրոնական համակարգերից:

Աղանդավորական շարժումներն ուղեկցել են բոլոր հիմնարար կրոններին, մասնավորապես՝ քրիստոնեությանը: Միջնադարում քրիստոնեական աղանդավորական շարժումների հիմքը բնակչության անապաշտպան խավերն էին, որոնք պայքարում էին ժողովրդին կեղեքող պետության ու իշխող եկեղեցու դեմ: Իրականում աղանդը համաշխարհային, գլոբալ բիզնես է՝ մարդուն կառավարելի դարձնելու ամենակարճ ուղին: Աղանդներն աշխատում ու գործում են գաղտնի: Այդ կառույցները հասարակությանը վտանգ են սպառնում: Աղանդների գործունեության տևողությունը նպատակային է և ամենևին կապ չունի ՀՈԳՈՒ և ՈԳԵՂԵՆԻ հետ: Նրանց նպատակը հետևորդներ հավաքելն ու շահագործելն է, դրա համար էլ, վերջին հաշվով, հիմնադիրները խաբեբաներ են, որոնք վերցնում են իրական Կրոնը կամ Իրական Հոգևոր գիտելիքը և աղավաղում այն՝ համարելով իրենց «հոգևոր առաջնորդներ»: Շատերն ուղղակի գործադրում են արգելված մեթոդներ՝ խախտելով մարդու իրավունքը: Գործադրում են հոգեբանական ճնշումներ, շանտաժ՝ շահարկելով հիմնականում մարդու սոցիալական գործոնը:

Աղանդները սովորաբար բնորոշվում են կենտրոնական դերակատարի՝ առաջնորդի առկայությամբ, որն իրեն համարում է Աստծո «պատգամաբեր»: Առաջնորդն անսահմանափակ իշխանություն է ձեռք բերում հավատախմբի նկատմամբ, որի արդյունքում աղանդի հետևորդները լիակատար կախման մեջ են գտնվում հավատի, վարքի, ապրելակերպի հարցերում: Սա անթույլատրելի է և անբարոյական: Այսպիսով՝ նրանք բաժանում են մարդու հոգին և ոգի-մարմինը, ինչով և բացահայ-

տորեն հակադրվում են քրիստոնեությանը, որն ուսուցանում է մարդու հոգու, ոգու և մարմնի եռամիասնություն: Մինչդեռ նրանք շարունակ պնդում են. «Կյանքը դատարկ է, ունայն և փուչ. պետք է Տիրոջը հանդիպել, այն էլ՝ շտապ»: Այդ ամենը սովորեցնում են դեռահաս պատանիներին, ինչն էլ բազմաթիվ խեղաթյուրված կյանքերի և ինքնասպանությունների պատճառ է դառնում:

Աղանդի հողի վրա կատարվող ինքնասպանությունները շատացել են տասնապատիկ, եթե առաջ մենք ցուցակի ամենավերջին շարքերում էինք, հիմա դարձել ենք առաջատար: Այսօր մեր ժողովրդի մի ստվար հատված առանց այն էլ հոգեբանական ճգնաժամի մեջ է՝ պայմանավորված սոցիալ-տնտեսական իրավիճակով: Հոգեպես անհավասարակշիռ կամ սթրեսային վիճակում գտնվող շատ մարդիկ կարդալով այդ գրականությունը՝շատ հաճախ միանգամից ամեն ինչից ազատվելու ցանկություն, համենայնդեպս՝ մտքեր են ունենում: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ողջ աշխարհում աղանդներն այլասերում են հատկապես երեխաներին և ոտնահարում նրանց իրավունքները, քանի որ իրականացվում են նաև, երեխաների խոշտանգումներ և զանգվածային սպանություններ:

§ 3. Հակաաղանդավորական պայքարն Արևմուտքում

1999թ. ապրիլի 23-ին և 24-ին Ստրասբուրգում կայացած Համաեվրոպական խորհրդակցությունը (17 երկրներից եկած 260 պատգամավորների մասնակցությամբ) որդեգրեց մի հռչակագիր, որի գլխավոր կետերն են.

ա. մերժել աղանդավորականների այն փորձերը, որոնց նպատակն է ամբաստանել Ֆրանսիայի պետության կողմից աղանդավորականների դեմ կիրառվող կանխարգելիչ միջոցները՝ որպես խղճի ազատության իրավունքի սահմանափակում և անհանդուրժողականություն,

բ. պաշտպանել մարդու իրավունքները որոշ աղանդների վտանգավոր ոտնձգություններից՝ ինչ քողի տակ էլ որ գործելու լինեն նրանք,

գ. Եվրախորհրդարանից և ԵԱՀԿ-ից պահանջել, որ նրանք ՄԱԿ-ի հանձնաժողովի կարգավիճակ տան FECRIS-ին («Աղանդավորական քայքայիչ գործունեության դեմ պայքարի եվրոպական դա-

շինք») և լսեն նրա տեղեկագիրը՝ ընթացք տալով նրա հանձնարարություններին,

դ. ստեղծել համաեվրոպական կենտրոնական մարմին, որի գործառույթը լինի աղանդավորական շարժումների տարածման կանխարգելումը:

Եվրախորհրդարանն իր՝ 1984-1985 թվականների տարեշրջանի նիստերում Մունի աղանդի դեմ ընդունել է 47 որոշում, որոնք համարակալված են թիվ 84/1-47:

1998թ. Դանիայի կրթության նախարարությունը կրոնական պիտակի տակ գործող բոլոր շարժումների գրանցման համար պարտադիր է հռչակել 10 նախապայմանների առկայություն:

Լիոնի քրեական դատարանի 1996թ. նոյեմբերի 22-ի վճռի համաձայն՝ «խարդախություն» է համարվում այն զանցանքը, որով իրավաբանական անձի (այսինքն՝ գրանցված աղանդավորական շարժման) պատասխանատուներն իրենց ֆինանսական և առևտրական նպատակների համար օգտագործում են կրոնափիլիսոփայական ուսմունքներ՝ երրորդ անձին գիտակցաբար խաբելու համար: Խարդախություն կարող են համարվել նաև ծիսակարգի այն արարողությունները, որոնք բարեխիղճ (անմեղ) մի երրորդ անձի խաբելու նպատակ են հետապնդում:

Ավստրալիայի քրեական դատարանները ևս անհաշտ պայքար են մղում մասնավորաբար Սայենթաբանների աղանդի դեմ, որի զոհերը տառապում են ճնշման բարձրացումից, քնի խանգարումից, դեղորայքի չափազանց շատ գործածությունից, մեղավորության և վախի զգացումից: Ավստրալիայի նահանգներից մեկի գերագույն դատարանը 1999թ. մայիսին արձակած իր անկյունաքարային, անբեկանելի վճռով հիմնավորված համարեց ավստրալական քրեական դատարանների իրավասությունը՝ դատելու աղանդավորական շարժումներին՝ առանց դա խղճի ազատության սկզբունքի ոտնահարում համարելու, քանի որ «ազատորեն դավանելու իրավունքը երբե՛ք չի նշանակում իրավունք ունենալ ազդել երրորդ անձանց հոգեկանի վրա կամ կրճատել և սահմանափակել նրանց իրավունքները»:

ԱՄՆ-ում վերջին տարիներին աղանդավորականների ոճրական և քայքայիչ գործունեության վտանգի նկատմամբ նոր շարժընթաց է նկատվում: 1998թ. Օրեգոն նահանգի համանուն քաղաքում մահացավ մի երեխա, որը շաքարախտով էր տառապում: Սակայն երեխայի ծնողները՝ «Քրիստոսի հետևորդների» աղանդի անդամներ լինելով, արգելել էին նրա բուժումը դեղորայքով և բավարարվել լոկ աղոթքներով: Երբ

հասարակական կազմակերպությունները քրեական դատարանում հայց հարուցեցին երեխայի ծնողների դեմ, դատարանն անպարտ հռչակեց նրանց, քանի որ «վարվել էին իրենց դավանանքի թելադրանքի համաձայն», թեև պատճառ էին հանդիսացել ուրիշ անձի մահվան:

Նահանգի խորհրդարանն ընդունեց մի օրինագիծ, որն արգելում է դավանանքի ազատության իրավունքի չարաշահումը և պարտադիր դարձնում անչափահաս զավակների բժշկական խնամքը: Ինչպես տեսնում ենք, Օրեգոնի քրեական դատարանն in abstracto էր կիրառել խղճի ազատության իրավունքը, իսկ նահանգի խորհրդարանը՝ օրենսդիր իշխանությունը, պահանջեց այն կիրառել in concreto՝ արգելելով այդ իրավունքի չարաշահումը կամ սխալ գործածությունը, որն էլ երեխայի մահվան պատճառ էր դարձել:

§ 4. Աղանդավորական շարժումների պատմությունը Հայաստանում և աշխարհում

Աղանդավորական շարժումները քրիստոնեական եկեղեցու կյանքում նոր երևույթներ չեն: Դեռևս I–III դարերում փիլիսոփայական տարբեր հոսանքների ազդեցությամբ ձևավորվել են բազմաթիվ աղանդներ, հերձվածներ ու հերետիկոսական ուղղություններ, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր առաջնորդը: Ժամանակակից աղանդներում այդպիսիք են, օրինակ, Ռասելը՝ Եհովայի վկաների, Միլլեր–Վայթ զույգը՝ ադվենականների, Սմիթը՝ մորմոնների համար: Սկզբունքը նույնն էր նաև պատմական աղանդների դեպքում, ինչպես Արիոսը՝ արիոսականների, Պողոս Սամոսատցին՝ պավլիկյանների համար և այլն:

Աղանդավորական շարժումների պատմությունը ցույց է տալիս, որ նրանց առաջնորդները, իրենց վերապահելով Սուրբ Գրքի մեկնաբանմամբ դավանանքի նոր սահմանումները տալու իրավունքը, շատ դեպքերում հայտարարում են իրենց նոր մարգարեներ կամ նոր քրիստոսներ ու մխիթարիչներ:

Հին և նորագույն ժամանակաշրջանների առանձին մտածողների ու աղանդավորների կարծիքով՝ Աստվածաշունչն Աստծու խոսքի միակ աղբյուրը չէ, և քրիստոնեական ճշմարտությունը տրված է ոչ միայն Հին ու Նոր կտակարաններում: Սուրբ Գրքի պատգամները շատ հաճախ շաղախվում են հեթանոսական կրոնների, առանձին փիլիսոփաների կամ գիտական հայտնագործությունների՝ իրենց ձեռնտու մտքերով ու փաստերով:

Հիսուս Քրիստոսը ժամանակին կանխատեսել էր, որ իր խոսքերի սխալ մեկնաբանությամբ հանդես կգան կեղծ քարոզիչներ:

IV դարից սկսած Հայ եկեղեցում նույնպես երևան են եկել աղանդներ՝ մծղնեականությունը, բորբորիտները, պավլիկյաններն ու թոնդրակեցիները: Աղանդավորական շարժման դեմ պայքարում անգնահատելի է V դարի պատմիչ Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» աշխատությունը:

XIX–XX դարերում են առաջացել կեղծ քրիստոնեություն և ամբողջատիրական գաղափարներ քարոզող Եհովայի վկաների, մորմոնների (Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբերի եկեղեցի), Մունիների (Միավորման եկեղեցի) աղանդները:

Ժամանակակից քրիստոնեական աղանդներն այսօր էլ իրենց վնասակար գործունեությունը շարունակում են Հայաստանում, որոնցից առավել տարածված են.

- **ադվենականներ** (լատիներեն է, նշանակում է գալուստ) կամ գալստականներ. աղանդն առաջացել է ԱՄՆ-ում՝ 1830-ական թվականներին: Բողոքականության տարատեսակներից է: Քարոզում է Քրիստոսի երկրորդ գալուստը և երկրի վրա նրա աստվածային հազարամյա թագավորության հաստատման գաղափարը:
- **բապտիստներ** (հունարեն է, նշանակում է ընկղմվել, ջրով մկրտվել). բողոքականության տարատեսակներից է, առաջացել է XVII դարում: Չեն ընդունում գաղտնիությունը, մկրտությունն ու հաղորդությունը համարում են սոսկ եկեղեցական կարգ, որը խորհրդավորություն չունի: Կնքվում են միայն մեծահասակները:
- **հիսունականներ կամ հոգեգալստականներ.** աղանդն առաջացել է ԱՄՆ-ում՝ XIX դարի վերջին – XX դարի սկզբին: Անվանումը կապված է Գործք առաքելոցում հիշվող Հոգեգալստյան տոնի հետ, երբ Սուրբ Հոգին առաքյալների վրա է իջել Քրիստոսի Հարության հիսուներորդ օրը, ինչի շնորհիվ նրանք կարողացել են քարոզչություն իրականացնել օտարալեզու ժողովուրդների մեջ: Հիսունականները, սխալ ընկալելով լեզվախոսության շնորհը, այն իբրև պարտադիր պայման են ընդունում և շատ հաճախ հոգեբանական զմայլվածական վիճակների մեջ են հայտնվում, որը հոգևոր և հոգեբանական լուրջ վնասվածքներ ստանալու վտանգ ունի: Հայաստանում զանազան անուններով գործում են հիսունականների տարատեսակ խմբեր՝ Կյանքի խոսք, Ավետարանի հավատի քրիստոնյաներ և այլն: Հիսունականները չեն ընդունում

քրիստոնեական եկեղեցու պաշտոնական ծեսերը, սրբապատկերները, խաչը:

- **Եհովայի վկաներ կամ եհովականներ.** բողոքական աղանդ է, հիմնադրել է Չառլզ Ռասելը 1872 թվականին՝ ԱՄՆ-ի Փենսիլվանիա նահանգում: Ընդունում են մեկ միասնական Աստծուն՝ միայն Եհովային, իսկ Քրիստոսին համարում են նրանից ծնված և նրա կամքը կատարող: Եհովականները չեն ընդունում Սուրբ Հոգուն՝ իբրև Աստծու, մերժում են Սուրբ Խաչը, մկրտությունը և այլն: Ըստ եհովականների՝ երկրի վրա է գտնվում սատանայի թագավորությունը, և Եհովայի ու սատանայի առաջիկա ճակատամարտում (Արմագեդոն) մարդկությունը կկործանվի՝ բացառությամբ եհովականների, և երկրի վրա կհաստատվի Աստծու թագավորությունը:
- **Մորմոններ.** աղանդն ստեղծել է Ժոզեֆ Սմիթը 1830 թ.՝ ԱՄՆ-ում: Նրանք չեն ընդունում քրիստոնեական խորհրդանիշները՝ համարելով, որ դրանք ստեղծել է ոչ թե Աստված, այլ մարդը:

Գլուխ
Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներ, ենթաօրենսդրական ակտեր

§ 1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշում Ֆրանսիայի դեմ

Ֆրանսիայում Եհովայի վկաների քրիստոնեական միության կողմից ներկայացված, դատարանին ուղղված No 53430/99 հայցադիմումն ընդունելու մասին

ՈՐՈՇՈՒՄ

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, 2001թ. նոյեմբերի 6-ին գումարեց նիստ հետևյալ կազմով.

Ա.Բ. Բակա - նախագահ
Ժ. Ժ. Կոստա,
Ժ. Ժորունդսոն,
Կ. Ժունգվիերտ,
Վ. Բուտկևիչ,
Տիկին Վ. Թոմասեն,
Մ. Ուգրեխելիձե - դատավորներ
Տ. Լ. Ըլի - դատարանի քարտուղար

ուսումնասիրեցին վերոնշյալ հայցադիմումը՝ ներկայացված 1999թ. դեկտեմբերի 9-ին և գրանցված 1999թ. դեկտեմբերի 15-ին, քննեցին պատասխանող՝ կառավարության և նրան ի պատասխան՝ հայցվորի կողմից ներկայացված դիտարկումները և կայացրեցին հետևյալ որոշումը.

Փաստեր.

Պահանջող կողմը միություն է, որը հիմնադրվել է համաձայն Եկեղեցիների և պետության անջատման մասին 1905թ. դեկտեմբերի 9-ի օրենքի 20-րդ հոդվածի: Այս միությունը հիմնել է Եհովայի վկաների եկեղե-

ցին: Հարցը Դատարանին ներկայացվել է Փարիզի դատապաշտպան-ներ Ա. Գարայի և Պ. Գոնիի կողմից:

Ա. Գործի պայմաններն ու էությունը.

Հարցի առնչությամբ կողմերի ներկայացրած փաստերը կարող են բնութագրվել հետևյալ կերպ.

Հայցվորը երաշխավորել է ներկայացնել և Դատարանում պաշտ-պանություն ցուցաբերել Եհովայի վկաներին հետևող 1149 տեղական միություններին: Նրա նպատակն է «նպաստել Եհովայի վկաների պաշ-տամունքի կատարմանը, ֆինանսապես աջակցել և նեցուկ լինել նրանց: Այն աշխատում է համակարգել և զարգացնել անդամ միությունների գործունեությունը, որոնց նպատակն է երաշխավորել Եհովայի վկաների ճանաչումն ու պաշտամունքի կատարումը» (Կազմակերպության կանո-նադրության 2-րդ հոդված): Այն «կպաշտպանի և կկասեցնի Եհովայի վկաների հետևորդների կրոնական համոզմունքները ոտնահարումից՝ պայքարելով հատկապես ամեն տեսակ խտրականության և հասարա-կությունից վտարվելու դեմ: Ֆեդերացիան կկարողանա գործել իրավա-կան և հատկապես դատական բոլոր ճանապարհներով՝ հավասարապես պաշտպանելու համար իր անդամների՝ ինչպես յուրաքանչյուր անհա-տի, այնպես էլ կոլեկտիվի շահերը»:

20-րդ դարի սկզբից Ֆրանսիայում գործում են Եհովայի վկաները և, ըստ իրենց, երրորդ տեղում են երկրի քրիստոնեություն դավանողների մեջ: Ապրիլի 1-ին 1999թ.՝ Քրիստոսի զոհաբերության վերջին հիշատա-կության ժամանակ, 249.918 մշտական և պատահական հավատացյալ-ներ էին հավաքվել իրենց ժողովարանում:

Սկսած 1906թ. երբ քրեականորեն գրանցվեց առաջին տեղական միությունը, Եհովայի վկաները կարողացան ազատ ու անխոռով իրենց պաշտամունքը կատարել Ֆրանսիայի տարածքում:

1995թ. հունիսի 29-ին Ազգային Ժողովն ընդունեց պառլամենտա-կան քննիչ հանձնախումբ ստեղծելու առաջարկը, որը պետք է զբաղվեր «աղանդ երևույթի ուսումնասիրությամբ և, անհրաժեշտության դեպքում՝ առաջարկեր գործող օրենքների մշակումը»: Հանձնախումբն ստեղծվեց 1995թ. հուլիսի 11-ին և որոշեց լսումներն անցկացել դատական փակ նիստերով: Հանձնախումբը 8 լսումներ անցկացրեց «ընդհանուր տևո-ղությունը 21 ժամ»: 1995թ. դեկտեմբերի 22-ին, հանձնախմբի կողմից

հրատարակվեց «*Աղանդները Ֆրանսիայում*» խորագրով թիվ 2468 Զեկույցը, որը հայտնի է Ժեստ/Գյուլարդ անվամբ:

Պառլամենտականները հասկացան, որ այս զեկույցի մեջ առկա է մեծ դժվարություն՝ կապված «աղանդ» հասկացությունը սահմանելու հետ: Զեկույցի 14-րդ էջում նշված է, որ «Աղանդ հասկացության սահմանման հետ կապված բարդության պատճառով, որը սակայն դեռ կօգտագործվի Զեկույցի շարունակության մեջ, Հանձնախումբն ի նկատի առավ մի շարք երևույթներ ու ցուցանիշներ, որոնցից յուրաքանչյուրը կարող է ծավալուն բանավեճերի նյութ դառնալ: Այն նախընտրեց, վտանգելով վիրավորել ինքնասիությունը կամ կատարել իրականության մասնակի վերլուծություն, հաշվի առնել այն իմաստը, որը հասարակությունն է վերագրում հասկացությանը»:

Հանձնախումբը քննելով ցուցանիշները կամ երևույները, որոնք «նպաստում են կասկածի տակ առնել աղանդի՝ որպես կրոնական շարժում որակելու հնարավոր ենթադրությունները», նախընտրել է Ընդհանուր տեղեկատվության կենտրոնական ծառայության կողմից առաջարկվող չափանիշներին՝ ինչպիսիք օրինակ՝ մտավոր անկայունությունը, ֆինանսական պահանջների ոչ չափավոր բնույթը, շրջապատի հետ կապերի խզումը, ֆիզիկական ամբողջությանն սպառնացող վտանգները, երեխաների հավաքագրումը, հակահասարակական քարոզները, պետական կարգուկանոնի խախտումները, դատական միջամտության կարիքը և կարևորությունը, ավանդական տնտեսական շղթաների հնարավոր շահարկումները, պետական իշխանական մարմիններ ներթափանցելու փորձերը:

Համաձայն Ընդհանուր տեղեկատվության կենտրոնական ծառայության տվյալների՝ վտանգավորություն ներկայացնող գրանցված շարժումների թիվը հասնում է 172-ի: Սրանք դասակարգված են «աղանդներ» անունը կրող (որակավորված) շարժումների մի ցուցակում: Եհովայի վկաները նույնպես գրանցված են այս ցուցակում: Այս ցուցակը հրատարակվել է որպես Հանձնախմբի Զեկույցի բաղկացուցիչ մաս:

Ժեստ/Գյուլարդ Զեկույցը տրվել է ոչ միայն պետական իշխանական մարմիններին (կառավարություն, վարչություններ, տեղական պատգամավորներ), այլև հասարակությանը: Պառլամենտական զեկույցը հրատարակվել և բաժանվել է առևտրական ընկերության կողմից:

Այնուամենայնիվ, աղանդների ուսումնասիրությամբ զբաղվող պատգամավորների առաջին խումբը, զեկույցն ընթացքի մեջ դնելուց

հետո, ձեռնամուխ եղավ նոր ձեռնարկումների՝ աղանդների դեմ տարվող ուսումնասիրություններն ընդլայնելու նպատակով:

1996թ. մայիսի 9-ի դեկրետով/հրամանագրով ստեղծվեց աղանդների առնչությամբ միջգերատեսչական վերահսկողության կոմիտեն: Վարչապետին կից գործող այս կառույցը կոչված էր զբաղվելու աղանդ երևույթի վերլուծությամբ և Կառավարությանը ներկայացնել առաջարկներ՝ վերջիններիս դեմ պայքարելու ուղիները կատարելագործելու նպատակով: Այս կոմիտեն 1998թ. հոկտեմբերի 7-ին փոխարինվեց աղանդների դեմ պայքարի միջգերատեսչական քարոզչական կառույցով, որը կարող էր առաջին ատյանի դատարանին ներկայացնել աղանդավորական շարժումների կողմից իրականացվող գործունեությունը՝ վերջիններիս ենթարկելով քրեական պատասխանատվության:

1998թ. դեկտեմբերի 15-ին այս ուսումնասիրություններն էլ ավելի ծավալուն դարձնելու համար մի նոր որոշում ընդունվեց Ազգային ժողովի կողմից: Ժողովը նախագահում էր Ժակ Գյուլարդը՝ առաջին հանձնաժողովի զեկուցողը, որը Ժան-Պիեր Բարդի և նոր հանձնաժողովի հետ միասին նախատեսեցին 6 ամիս՝ քննություն իրականացնելու համար: 1998թ. դեկտեմբերի 10-ին Ազգային ժողովում կայացած քննարկումների ժամանակ պարոն Գյուլարդը հայտարարեց.

«Եթե 1995թ. Քննող հանձնաժողովի կողմից իրականացված աշխատանքն օգտաշատ եղավ, ապա դրան մեծապես նպաստեց աղանդավորական շարժումների վերաբերյալ այն ցուցակի հրատարակումը, որը հրապարակավ հայտարարում էր, այն, ինչը որևէ մեկը, հետապնդումներից զերծ մնալու համար, չէր համարձակվում բարձրաձայնել: Մենք միասնաբար ստանձնեցինք այդ պատասխանատվությունը, ուր միախառնվել էին բոլոր քաղաքական ուղղությունները, և սա նպաստեց ունենալ նշանակալի արձագանք: Իմիջիայլոց, ես ինձ շնորհավորում եմ, որ 1995թ. Զեկույցը դարձավ Ազգային ժողովի զեկույցներից լավագույնը/բեստսելերը: Ավելի քան տասնյակ օրինակներ հրատարակվեցին՝ որպես պատասխան հետաքրքրվող քաղաքացիների հարցերին»:

Այս նոր Հանձնաժողովը մանրամասնորեն բացատրեց, որ շարունակելու է 1995թ. Հանձնաժողովի կողմից ձեռնարկված աշխատանքը: Նրա նպատակն էր ուսումնասիրել աղանդների ֆինանսական, գույքային և հարկային վիճակը, ինչպես նաև տնտեսական գործունեությունն ու տնտեսական ու ֆինանսական ոլորտներում ունեցած հարաբերությունները: Նոր Հանձնաժողովի զեկույցը գրանցվեց 1999թ հուլիսի 10-ին:

Սկզբում հանձնախումբը հետամուտ եղավ Ընդհանուր տեղեկատվության ծառայությունների աջակցության ձեռքբերմանը: Քննիչ ոստիկանները՝ առանց մանրամասնելու, ոչ պաշտոնապես կամ նույնիսկ բանավոր կերպով միություններից պահանջեցին կարևոր փաստաթղթեր, ինչպես նաև ուշագրավ տեղեկություններ: Պառլամենտական քննող հանձնախմբի կողմից հարցաշար ներկայացվեց 60 միությունների, որոնց մեջ նաև հայցվորին, որից 1999թ. մարտի 19 թվակիր նամակով պահանջվեց մինչև 1999թ. ապրիլ 24-ը պատասխան ուղարկել: Հայցվորը պահանջվող ժամկետում Հանձնախմբին ներկայացրեց սպառիչ պատասխան և կից 9 այլ փաստաթղթեր:

1999թ. հունիսի 17-ին Հանձնախումբը հաստատեց «Աղանդները և դրամը» խորագրով իր զեկույցը՝ հայտնի Գյուլարդ/Բրարդ Զեկույց անվանումով: Զեկույցի եզրակացության մեջ Հանձնախումբը ընդգծում էր հատկապես.

«Տարբերության իրավունքը պետք է պահպանվի: Բայց չէին կարող ենթադրել, որ այս իրավունքի կիրառումը կվնասեր որոշ սկզբունքներ, և նախևառաջ, թույլերին պաշտպանելու իրավունքը: Խղճի ազատության պահպանումը, իրոք, չէր կարող հիմնվել հիմնական հեղինակային-անհատական իրավունքների չիմացության վրա. փոխադրության (երկրից հեռանալու և վերադառնալու), սեփականություն ունենալու և դրանից օգտվելու, մարմինն ու առողջությունը պահպանելու, իշխանազանցման խոչընդոտների և բարոյական ու նյութական շահերը ոտնահարելու դեմ պաշտպանված լինելու իրավունքները»: Որպես լրացում, զեկույցի մեջ կային նաև տեղեկություններ աղանդավորական շարժումների ներկայացուցիչներ հանդիսացող մոտ 30 միությունների կազմակերպման, ֆինանսական կշռի և տնտեսական ցանցի մասին:

Ըստ հայցվորի, Հանձնախմբի զեկույցը պարունակում էր Եհովայի վկաների վերաբերյալ բազմաթիվ սխալ և զրպարտիչ փաստեր: Օրինակ՝ այն հաստատում է, որ Եհովայի վկաները խուսափում են հարկային վճարումներից, որը դատապարտելի է քրեորեն (էջ 219-ից մինչև 224):

1999թ. հուլիսի 20-ին՝ Ազգային ժողովի նախագահին ուղղյալ նամակով, հայցվորը կտրականապես պահանջեց Գյուլարդ/Բրարդ Զեկույցից ուղղակիորեն դուրս բերել որոշակի անճշտություններ պարունակող տարբեր հատվածներ: Բացի այդ, հայցվորն Ազգային Ժողովի նախագահին ուղարկեց Եհովայի վկաների վերաբերյալ մի թղթածրար, ֆինանսավորումը և Գյուլարդ/Բրարդ Զեկույցը: Այդ թղթածրարը պարունակում էր

հանձնաժողովի Զեկույցի շրջանակներում կատարված, Ազգային Ժողովի պատասխանատվությամբ հայտարարված թյուր կարծեցյալ մեղադրանքների և բողոքների վերլուծության վերաբերյալ փաստաթղթեր: Ազգայի ժողովի նախագահը որևէ ընթացք չտվեց դրանցից որևէ մեկին:

Ըստ հայցվորի, հիմնվելով պառլամենտական հանձնախմբերի կատարած աշխատանքների վրա՝ Պետությունը կենթարկվեր վերոնշյալ խմբերի և, հատկապես, Եհովայի վկաների՝ ամենակարևոր խմբի ճնշումներին: Պետության կողմից հետևյալ միջոցները պետք է ձեռնարկվեին.

ա) 1996թ. փետրվարի 29-ին Արդարադատության նախարարը շրջաբերական գրություն է ուղարկում երկրի գլխավոր դատախազներին: Շրջաբերականը պարունակում էր Ժեստ/Գյուլարդ Զեկույցի մեջ լույս տեսած «վտանգավոր աղանդների» ցուցակը, որը ձեռք էր բերվել Ընդհանուր տեղեկատվության ծառայության քննիչների կողմից: Շրջաբերականում ծանուցվում էր այս շարժումների դեմ «պայքարելու» կարևորությունն ու անհրաժեշտությունը:

Արդարադատության նախարարը «անվարար աչալրջությամբ» և «առանձնակի խստությամբ» հորդորում էր գլխավոր դատախազներին «խստագույնս կիրառել գործող իրավունքը» և ամբողջովին գործածել «դատական առկա զինանոցը»: Նրանք նաև պետք է ուսումնասիրեին հակաաղանդավորական միությունները, քանի որ դրանց շարքերում կային վերոնշյալ խմբերի նախկին հետևորդներից (Արդարադատության նախարարի 1996թ. փետրվարի 29-ի թիվ 92 F24 C շրջաբերական),

բ) 1996թ. մայիսի 9-ին Պետությունն ընդունեց հրամանագիր՝ աղանդների դեմ միջգերատեսչական վերահսկողություն սահմանելու մասին: Վերահսկողություն իրականացնող մարմինը կազմվել էր կառավարության գլխավոր նախարարությունների ներկայացուցիչներից: Նպատակն էր աջակցել Վարչապետին՝ աղանդների դեմ պայքարում (1996թ. մայիսի 9-ի թիվ 96-387 հրամանագիր),

գ) 1998թ. հոկտեմբերի 7-ին Պետությունը հրամանագիր ընդունեց՝ միջգերատեսչական միսիա/ներկայացուցչություն հիմնելու մասին, որը պիտի մասնագիտանար աղանդների դեմ պայքարի գործում: Այս մարմինն իրավասու էր պատրաստել պետական ծառայողներ՝ «աղանդների» դեմ պայքարելու համար և հասարակությանն ինֆորամացնելու «աղանդների» կողմից սպառնացող վտանգների մասին (1998թ. հոկտեմբերի 7-ի թիվ 98-890 հրամանագիր),

դ) 1998թ. դեկտեմբերի 1-ին Արդարադատության նախարարն արձանագրելով, որ «աղանդների» դեմ բավարար քանակությամբ բողոքներ չկան և չկարողանալով դատական գործ սկսել՝ հրաման տվեց գլխավոր դատախազներին աշխատել հակա-աղանդավորական խմբերի հետ՝ փոքրամասնական խմբերի դեմ գանգատներ առաջ բերելու նպատակով: Այս համագործակցության նպատակն էր տեղեկություններ կուտակել որպես «վտանգավոր աղանդներ» որակված փոքրամասնական 172 խմբերից մեկին անդամակցող անհատներին դատարանի առջև կանգնեցնելու համար (Արդարադատության նախարարի 1998թ. դեկտեմբերի 1-ի թիվ 98-11/G3 շրջաբերական),

ե) 2000թ. հոկտեմբերի 3-ին Աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարությունն ընդունեց աղանդավորական խմբերի մասին թիվ 2000-501 շրջաբերականը: Այն ներկայացնում էր՝ ընդդեմ աղանդների և ի նպաստ այս նախարարության, վարչական գործողություն և ճշտելով վերջինիս (այս գործողության) իրավական հիմքերը՝ սահմանում ընդունված վարչական կազմակերպման ձևը: Այս շրջաբերականն ուղղակիորեն վերաբերում էր 1996թ. Պառլամենտական քննող հանձնախմբի կողմից ընդունված «աղանդ» հասկացության սահմանման չափանիշներին:

Ըստ հայցվորի՝ չնայած պառլամենատական հանձնախմբերի զեկույցներն սկզբունքորեն տեղեկություններ պարունակող պարզ փաստաթղթեր էին, որոնք չպետք է կրեին իրավաբանական երանգներ, այնուհանդերձ, Ժեստ/Գյույարդ և Գյույարդ/Բրարդ Զեկույցների դեպքում այդպես չեղավ: Երկու զեկույցներն էլ իրավունքներին և ազատություններին սպառնացող երևույթներ էին առաջ բերելու, ինչպիսիք են.

1. Պաշտամունքի համար նախատեսված ժողովարանների՝ հողահարկից ազատման արգելում (1999թ. մայիսի 26-ի Կլերմոն-Ֆերանի (Կենտրոնական Ֆրանսիայում) և 1999թ. մայիսի 12-ի Ռենի վարչական դատարանների դատավճիռներ):
2. 1995-1997թթ. հարկային խիստ վերահսկողություն (Եհովայի վկաների գործունեությունը կունենար ոչ եկամտաբեր, անշահախնդիր և ոչ առևտրային բնույթ): Հարկային այս վերահսկողության հետևանքները կլինեին մինչև 108% հարկադրումը, հավա-

տացյալների կողմից զոհաբերություններ, որոնք վերջին 4 տարիների ընթացքում ստանում է հայցվորը, դիցուք 297.403.534 ֆրանկ (համարժեք է 45.335.904 եվրոյի):

3. Կրոնական հարցերով զբաղվող կոմիտեի կողմից «Բեթելիտների քրիստոնեական խմբի» (հայցվորի անդամ միություններից մեկն է) հետևորդներին գրանցելու մերժում:
4. Աշխատանքի տեսչության կողմից հետաքննություն և սոցիալական հսկողություն:
5. 1998թ. հունիսի 6-ին վարչության կողմից հարկադրման արդյունքում և դրա պատճառով հայցվորի կողմից օգտագործվող շարժական և անշարժ գույքի բռնագրավում/կալանք:
6. Ընդհանուր տեղեկատվության կենտրոնական ոստիկանական ծառայությունների կողմից Եհովայի վկաների պաշտամունքին հետևող տեղական միություններին քննության ենթարկում:

Ժեստ/Գյուլարդ Զեկույցի և դրանից բխող ցուցումների արդյունքում՝ մի շարք վարչական որոշումներ վնաս հասցրեցին Եհովայի վկաներին և վերջիններիս հարող միություններին: Այսպիսով, ինչ վերաբերում է Զեկույցին, որը կողմնակից է Եհովայի վկաների՝ «վտանգավոր աղանդ» լինելու գաղափարին, ապա մի շարք երևույթներ կարող են հստակորեն հիմնավորվել.

- Տեղական իշխանություններն արգելեցին միություններին վարձել քաղաքային դահլիճներ, վերջիններիս՝ հայցվորի ներկայացրած եկեղեցուն պատկանելու պատճառով, ինչպես, օրինակ, Լիոնում (1997թ. սեպտեմբերի 15-ին և 1999թ. նոյեմբերի 18-ին), Աննեսիում (1998թ. հունվարի 27-ին) և Սեն-Ժենիս-Լավալում (1998թ. նոյեմբերի 27-ին):
- Պետական մարմինները հրաժարվեցին նորոգել հիմնական Եհովայի վկաների վարչական համաձայնագիրը՝ մղելով նրանց դեպի աշխատանքը կորցնելու վտանգի (վարչական այս որոշումներն ընդունվել են 1996թ. օգոստոսի 26-ին, 1997թ. օգոստոսի 27-ին և 1998թ. հունիսի 5-ին՝ Շերի, 1997թ. հուլիսի 16-ին՝ Պա դը Կալեի, 1997թ. օգոստոսի 7-ին՝ Իոնի և 1998թ. դեկտեմբերի 11-ին Վերին Մարնի գերագույն խորհուրդների կողմից):
- Կասկածի տակ դրվեց այն երեխայի ապագան և կեցությունը, ում մայրը հետևում է Եհովայի վկաներին (1998թ. հոկտեմբերի 5-ի՝ Հավատքի մասին բարձրագույն դատարանի վճիռը):

- Տեղական իշխանությունների կողմից արգելվեց պաշտամունքի ժողովարանների կառուցումը (Մոզելի, Բովիլեի համայնքի քաղաքապետի կողմից՝ 1997թ. սեպտեմբերի 29-ին և Մորբիհանի, Սուրբ Հեղինե համայնքի քաղաքապետի կողմից 1999թ. հունիսի 26-ին ընդունված որոշումներ):

Հոդվածը 20 նոր հատված է ավելացնում 223-15 հոդվածին, համաձայն որի՝ «Երեք տարվա ազատազրկման և 2.500 F տուգանքի է արժանանում խաբեբայական իրավազանցությունը՝ չիմացության կամ տկարության վիճակում գտնվող անչափահասի կամ այն անձի կողմից, ում մեծահասակ լինելը, հիվանդությունը, անկարողությունը, ֆիզիկական կամ հոգեկան արատները կամ հղիությունն ակնհայտ են կամ ըմբռնված տիրոջ կողմից, կամ էլ այն անձը, ով միտքն աղճատող հատուկ տեխնիկաների կամ ծանր ճնշումների պատճառով հոգեկան կամ ֆիզիկական կախվածության մեջ է, որոնք մղում են վերջինիս չափազանց վտանգավոր և դատապարտելի արարքներ գործելու:

Հայցվորի բողոքները.

1. Անդրադառնալով Կոնվենցիայի 9-րդ հոդվածին՝ հայցվորը բողոքում է, որ պառլամենտական քննիչ հանձնախմբերի երկու զեկույցներն ու օրինագիծը՝ ձգտելով ամրապնդել աղանդավորական խմբերի դեմ ճնշումներն ու դատական գործի հարուցումը, լրջորեն վտանգել են վերջինիս կրոնական իրավունքները:
2. Վկայակոչելով Կոնվենցիայի 13-րդ հոդվածը՝ հայցվորը գանգատվում է, որ, ի տարբերություն քննող հանձնախմբերի՝ պառլամենտում ունեցած արտոնությունների, ինքը չունի «վերին ատյաններին» դիմելու իրավունքի պաշտպանության միջոցներ, որպեսզի իր բողոքագրի վերաբերյալ որոշում կայացվի և հնարավորության դեպքում ունենա կրոնական ազատության իրավունք՝ առանց Պետության միջամտության:
3. Հայցվորը նշել է նաև Կոնվենցիայի 6.1-րդ հոդվածով երաշխավորվող՝ դատարանի կողմից արդարացի և հրապարակային դատաքննության իրավունքի ոտնահարման մասին, քանի որ դատական արտոնություններից օգտվում են պառլամենտական քննող հանձնախմբերը:
4. Վերջապես, հայցվորը պնդում է, որ կրոնական փոքրամասնությանը, տվյալ դեպքում Եհովայի վկաներին, զրպարտող հանձնախումբ հիմնելով, որը մեղադրում է վերջիններիս հարկային իրավախախտումների մեջ՝՝ համարելով նրանց վտանգավոր ա-

ղանդ, և ճնշում գործադրող գործողություն ձեռնարկելով՝ Պետությունը նրանց հանդեպ խտրական մոտեցում է ցուցաբերում, որը հակասում է Կոնվենցիայի 13,6,9 և 14-րդ հոդվածներին:

Օրենք

Հայցվորն նշել է Կոնվենցիայի մի շարք հոդվածներ, որոնք ոտնահարվել են, ինչպես, օրինակ, 6.1-րդ (արդար դատաքննության), 9-րդ (կրոնի ազատության իրավունք), 13-րդ (պետական մարմինների առջև իրավական պաշտպանությանարդյունավետ միջոցի իրավունք), 14-րդ (խտրականության արգելում) հոդվածները: Նա ընդգծում է, որ իր հայցադիմումի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ Կոնվենցիային հասցեագրված այս բողոքները վերագրվում են իրավական տարրերից ամբողջությամբ զուրկ ակտերին, այն աստիճան, որ վերջիններս՝ պառլամենտական քննող հանձնախմբերի դատապարտելի զեկույցները, չեն կարող գործել ոչ օրենքով, ոչ կատարողական թերթով, ոչ էլ դատավճռով: Այնուհանդերձ, այս զեկույցները կրում են դրոշմակիր Եհովայի վկաների համար բացասական հետևանքներ: Պառլամենտական այս փաստաթղթերը գծագրում են վարչական, օրենսդրական և դատական այն միջոցների շրջանակը, որոնք պետք է ձեռնարկվել Եհովայի վկաների դեմ: Այս փաստաթղթերն իշխանություններին և վերին ատյաններին մղում են ձեռնարկել այդ միջոցները հնարավորինս կարճ ժամկետներում: Այդ պատճառով, ստեղծվում է սոցիալական անորոշության և իրավական անպաշտպանության իրավիճակ, որն անհամատեղելի է այն սկզբունքների հետ, որոնց վրա հիմնվել է Կոնվենցիան:

Կառավարությունն առաջարկել է դատական նիստ հրավիրել մերժելու հայցադիմումը, քանի որ Կոնվենցիայի 34-րդ հոդվածի համաձայն հայցվորը հանդես չի գալիս որպես տուժող կողմ:

Կառավարությունն ընդգծում է, որ հայցվորը իրավաբանական անձ է, և համաձայն իրավաբանության կանոնների՝ յուրաքանչյուր իրավաբանական անձ, ով ներկայացնում է որևէ միություն, պետք է հանդիսանա իր բողոքարկած իրավազանցության ուղղակի և անմիջական զոհ: Ներկայացնելով միությունը, նա չի կարող միայն իր սեփական իրավունքների ոտնահարման մասին խոսել, անտեսելով միությանը անդամակցող տուժող հետևորդներին, քանի որ որպես պաշտպանության միջոց նա ներկայացրել է կոլեկտիվի շահերի ոտնահարման փաստը: Մինչդեռ հայցվորի կողմից ներկայացված ազատություններին և իրավունքներին սպառնացող վտանգների մեծ մասը վերաբերում է ոչ թե

բուն Ֆեդերացիային, այլ տեղական միություններին, մասնաճյուղային խմբերին, նույնիսկ անհատ անդամակցողներին:

Կառավարությունը պնդում է, որ հայցվորը չի կարող հիմնվել ոչ 1995 և 1999թթ. պառլամենտական զեկույցների, ոչ էլ աղանդավորական խմբավորումների դեմ արգելքներն ու ճնշումնեն ամրապնդող օրինագծի վրա (երբ Կառավարությունը ներկայացնում էր իր դիտողությունները, թիվ 2001-504 օրենքը դեռ չէր ընդունվել), որպեսզի կարողանա հավակնել Կոնվենցիայով իրավախախտման տուժող համարվելուն:

Ինչ վերաբերում է 1995թ. զեկույցի վերաբերյալ բողոքագրին, ապա այն անընդունելի է համարվում 6-ամսյա ժամկետում չներկայացվելու պատճառով, իսկ 1999թ. Զեկույցն իրենից ներկայացնում է մի փաստաթուղթ, որը պարունակում է տեսական բնույթի դատողություններ կամ հեռանկարային ուսումնասիրություններ և որևէ քրեական գործի կամ վարչական որոշման համար իրավական հիմք չի կարող հանդիսանալ: Այն կարող է միայն ծառայել վերահսկողություն սահմանելու համար, որն առաջ չի բերի կատարողական ակտեր կամ կիրառելի միջոցներ: Զեկույցն ընդգրկվում է քաղաքական բնույթի քննարկումների շրջանակում և դրա բովանդակությունը հետաքրքրում է միայն այն ստեղծողներին, որոնց նպատակն է եղել աղանդավորական շարժումների դեմ պայքարում խնդիրների լուծումը:

Ի վերջո, Կառավարությունը նշում է, որ 2001թ. հունիսի 12-ի թիվ 2001-504 օրենքը նպատակ ունի մարդկանց պաշտպանել այն աղանդներից, որոնք ոտնահարում են հիմնական իրավունքներն ու ազատությունները և ճնշել նման գործունեության նախաձեռնողներին: Այն որևէ սահմանում չի տալիս «աղանդ» հասկացությանը և պայքարում է միայն «աղանդ» որակումը ստացած այն միությունների դեմ, որոնք ոտնահարում են մարդու իրավուքները: Այդ օրենքն իր քրեական բնույթով հանդերձ, չէր կարող վնասել հայցվորին, այն պարզ պատճառով, որ վերջինս համարվում է իրավաբանական անձ: Ոչնչացման հնարավորությունն ու տարածվելու սահմանափակումները պայմանավորված են ոչ թե իրավաբանական անձի գոյությամբ, այլ վերջինիս դեմ բազմաթիվ մեղադրանքների առկայությամբ: Նախ և առաջ և հատկապես ոչնչացման որոշումը կարող է կայացնել միայն դատարանը՝ ամբողջովին դատական մրցակցության գործընթացի արդյունքում:

Հայցվորի պնդմամբ՝ ինքը Կոնվենցիայով սահմանված իրավունքների ուղղակի, անմիջական և պոտենցիալ զոհ է:

Նա պնդում է, որ Ֆրանսիայում Եհովայի վկաներին հետևող յուրաքանչյուր միություն և անհատ ուղղակիորեն տուժում է «աղանդների» դեմ պառլամենտական զեկույցների պատճառով: Ընդունելով Կառավարության փաստարկը, համաձայն որի հայցվորը չէր կարող համարվել ուղղակի և անմիջական տուժող կողմ, նշանակում է ընդառաջել 249.918 մշտական և պատահական Եհովայի վկաներին և 1150 միություններին ներկայացնելու բողոքագիր: Հայցվորը, միություններին կենտրոնացնողի իր դիրքով, ստեղծվել է հարցը Դատարան ներկայացնելու համար, քանի որ պառլամենտական զեկույցները որևէ ճշգրտություն չեն մտցնում որոշակի նպատակներ հետապնդող իրավաբանական անձանց առնչությամբ, դրանք սահմանափակվում են միայն Եհովայի վկաներով:

Բացի դրանից, հայցվորը պնդում է, որ համախմբելով իրավաբանական և ֆիզիկական անձանց՝ նա հանդիպում է պետության կողմից ճնշման գործադրման: Միայն Եհովայի վկաների շարժմանը հարելու՝ միության պահանջը բավարար և կարևոր հիմք է հանդիսանում Պետության համար՝ Ընդհանուր տեղեկատվության քաղաքական ծառայությունների օգնությամբ աղանդների դեմ վերահսկողություն սահմանելուն և Վարչապետի ղեկավարությամբ վերջիններիս դեմ պայքարելու նպատակով միջգերատեսչական խումբ ստեղծելուն: Այն համախմբող մի ամբողջություն է, որն «աղանդի» իր կարգավիճակի պատճառով կրում է նույն վնասները, ինչ Ֆրանսիայում Եհովայի վկաներն ու վերջիններիս հետևող միությունները:

«Աղանդի» պաշտոնական կարգավիճակն իրեն տալիս է այնպիսի պիտակ և դրոշմ, որն արդարացնում է ոստիկանական, սոցիալական, հարկային և մաքսային ոլորտներում վարչական մարմինների կողմից վերահսկողությունը: Հայցվորը ներկայացնում է օբյեկտիվ իրավախախտումների և լուրջ բողոքների մի երկար ցուցակ: Անաչառության մեջ պառլամենտականներ կասկածներն ու քաղաքական նկատառումները պարարտ հող նախապատրաստեցին դատական և վարչական ճնշումների համար, ինչպես երևում է Ներքին գործերի և Արդարադատության նախարարությունների՝ 1996թ. փետրվարի 29-ի, 1997թ. նոյեմբերի 17-ի և 1998թ. դեկտեմբերի 1-ի շրջաբերականներից, ինչպես նաև 2000թ. հոկտեմբերի 3-ի Աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության շրջաբերականից: Այս վարչական և քաղաքական ակտերի հանրագումարից առաջացավ վնասաբեր և խտրականական պետական միջոցների մի ամբողջություն:

Ըստ հայցվորի՝ Կառավարությունը չէր կարող կտրականապես պնդել, որ պառլամենտական ուսումնասիրությունների արդյունքում կազմված զեկույցները զուրկ են իրավաբանական որևէ նշանակությունից: Քննող հանձնախմբերի՝ դատարան ներկայանալու մերժման արդյունքում առաջացած իրավաբանական հարկադրումը, քրեական պատժամիջոցները և նույնիսկ պառլամենտական աշխատանքի ձևերն ու կանոններն ստեղծում են զուտ իրավական բնույթի պիտակ այնպիսի փաստաթղթերի համար, որոնք ընդունվում են Պառլամենտի և Կառավարության կողմից իրավական առանձնահատուկ պայմաններում:

Դատարանը նշում է, որ ներկայացված հայցադիմումը վերաբերում է կարծեցյալ ճակատագրական և չարաբաստիկ այն ազդեցություններին, որոնք ներգործել և ներգործում են հայցվորի և նրան հետևողների վրա՝ 1995թ. դեկտեմբերի 22-ի և 1999թ. հունիսի 17-ի՝ աղանդների մասին պառլամենտական քննող հանձնախմբերի երկու զեկույցների հաստատման ու հրապարակման, ինչպես նաև 2001թ. հունիսի 13-ի թիվ 2001-504 օրենքի վավերացման հետևանքով, որը «կոչված էր ամրապնդելու մարդու իրավունքներին և հիմնական ազատություններին սպառնացող աղանդավորական շարժումների դեմ ճնշումներն ու արգելքները»: Հայցվորն իրեն համարում է այս փաստաթղթերի ուղղակի և պոտենցիալ զոհ:

Առաջին հերթին, Դատարանը որոշում է հայցվորի՝ որպես տուժող կողմի վերաբերյալ իր քննությունը սահմանափակել միայն 1999թ. հունիսի 17-ին հրապարակված Պառլամենտական զեկույցի և 2001թ. հունիսի 13-ի օրենքի շրջանակներում. փաստորեն հայցադիմումը ներկայացվել է 1999թ. դեկտեմբերի 9-ին և 1995թ. դեկտեմբերի 22-ին հրապարակված զեկույցի առնչությամբ հայցվորի բողոքները միանգամայն անընդունելի են, քանի որ խախտվել է 6-ամսյա ժամկետում ներկայացվելու՝ Կոնվենցիայի 35.1-րդ հոդվածի պահանջը:

Դատարանը հիշեցնում է, որ համաձայն Կոնվենցիայի 34-րդ հոդվածի՝ անհատ հայցվորը պետք է իր բողոքարկած իրավազանցության անմիջական տուժողը լինի: Այս հոդվածն ի նպաստ մասնավոր անձանց actio popularis չի սահմանում Կոնվենցիայի մեկնաբանության համար. այն վերջիններիս չի արտոնում in abstrracto բողոքել օրենքից սոսկ այն պատճառով, որ այն ըստ հայցվորի իբրև թե խախտում է Կոնվենցիան: Սկզբունքորեն բավարար չէ հայցվորի այն բողոքարկումը, որ օրենքն իր իսկ առկայությամբ խախտում է այն իրավունքները, որոնցից վերջինս

օգտվում է համաձայն Կոնվենցիայի. օրենքով՝ իրավախախտումը պետք է արտացոլվի հայցվորի կրած վնասների մեջ:

Բացի դրանից՝ Մարդու իրավունքների եվրոպական հանձնախումբն այն կարծիքի է, որ «տուժող» և «ոտնահարում» տերմիններից, ինչպես նաև ներքոնշյալ կոնցեպցիայից և նախկին 26-րդ հոդվածի համար նախատեսված բողոքարկման ներքին ուղիների նախնական սպառման անհրաժեշտությունից բխում է այն հավաստումը, որ Կոնվենցիայի հեղինակների կողմից հորինված մարդու իրավունքների պաշտպանության համակարգում Դատարանին դիմելու իրավունքի կիրառումը չէր կարող նպատակ ունենալ կանխելու Կոնվենցիայի ոտնահարումը: Սկզբունքորեն, համաձայն 19-րդ հոդվածի, մարմինները, որոնք ստանձնել են պարտավորությունների պահպանման ապահովումը, կարող էին ուսումնասիրել և անհրաժեշտության պարագային, հաստատել իրավունքների ոտնահարումը միայն a posteriori, քանի որ իրավունքներն արդեն ոտնահարված կլինեին: Միայն բացառիկ դեպքերում է, որ իրավունքների մոտալուտ ոտնահարման վտանգը կարող է շնորհել հայցվորին իրավունքները խախտված տուժողի կարգավիճակ» (Նոել Նարվիի Թոիրայի և 18 այլ անձանց թիվ 28204/95 հայցադիմումը, Ֆրանսիա, դեկտեմբերի 4.12.1995թ. D.R. 83, էջ 112):

Այսպիսով, Դատարանն ընդունեց «պոտենցիալ տուժող» հասկացությունը հետևյալ դեպքերի համար.

- երբ հայցվորն ի վիճակի չէ ապացուցելու, որ իր իր կողմից վիճարկվող օրենսդրությունը մեծապես կիրառվել է իր դեմ՝ իր կողմից արտոնված միջոցների գաղտնիության պատճառով (Կլասը և այլոք ընդդեմ Գերմանիայի կայացված վերոհիշյալ որոշումը),
- երբ համասեռամոլությունը զսպող օրենքը կարող է կիրառվել մարդկանց մի որոշակի խմբի շրջանակներում, որոնցից է նաև հայցվորը,
- ի վերջո, յուրայիններին՝ արդեն որոշված, բայց դեռ ի կատար չածված, ստիպողաբար արտերկիր հեռացնելու դեպքում, քանի որ վերջինիս իրականացումը շահագրգիռ անձանց օտար վայրում կենթարկի հոդված 3-ին հակասող մոտեցումների:

Որպեսզի նման իրադրության մեջ հայցվորը կարողանա համարվել տուժող, հարկ է, որ վերջինս անձամբ իր իրավունքների ոտնահարման մասին համոզիչ և պատճառաբանված փաստարկներ ներկայացնի, սոսկ կասկածներն ու բողոքներն այս դեպքում անբավարար են:

1999թ. հունիսի 17-ի Պառլամենտական քնող հանձնախմբի զեկույցի առնչությամբ, Դատարանը հիշատակում է, որ հայցվորը գանգատվում է Եհովայի վկաների դեմ մի շարք թշնամական մոտեցումներից (մամուլով ընդդիմադիր քարոզարշավներ/պրոպագանդաներ, պաշտպանողական միությունների ստեղծում, աղանդների դեմ քաղաքական քննարկումներ իրականացնող կազմակերպություններ) կամ դատական և վարչական որոշումներ, որոնք վնասում են Եհովայի վկաներին հետևող անհատներին կամ միություններին: Եթե նույնիսկ ենթադրենք, որ հայցվորը կարող է համարվել այս երևույթներից անմիջական տուժող՝ որպես բոլոր Եհովայի վկաների միության ներկայացուցիչ, որի նպատակն է վերջիններիս շահերի պաշտպանությունը, ապա Դատարանը մի կողմից նշում է, որ վերոնշյալ այս բողոքների մի մասը վճարկելի հիմքի վրա են հիմնված, մյուս կողմից, եթե նույնիսկ որևէ հարաբերություն լինի, ապա այն կլինի սոսկ obiter dictum, որը ոչ մի դեպքում չի կարող համարվել ratio legis: Դատարանը, իմիջիայլոց, ընդգծում է, որ Պառլամենտական զեկույցը որևէ իրավաբանական ազդեցություն չունի և չի կարող վարչական կամ քրեական գործի համար հիմք հանդիսանալ:

Առավել մանրամասնորեն Դատարանը հավաստում է, որ հայցվորի կողմից նշված դատական մի քանի որոշումներ ընդգծում են քաղաքացիական իրավունքը և առնչվում դատավորների ազատ գնահատականը հիմնավորող փաստերին, ինչպես նաև որոշ վարչական որոշումներ՝ մերժելով համաձայնության արտոնությունն ու նորացումը, ձգտում են անհատական կարգավիճակի և կարող են հիմք հանդիսանալ վարչական դատարաններին դիմելու համար: Ինչ վերաբերում է հայցվորի կողմից նշված հարկային և սոցիալական վերահսկումներին, ապա Դատարանը չի մոռանում հիշատակել, որ վերջիններս կարող են կիրառվել բոլոր մեղադրվող անձանց հանդեպ և հայցվորը չի ապացուցում, թե խախտելով Կոնվենցիայով երաշխավորված իր իրավունքները՝ վերահսկման այս միջոցներն ինչ նպատակ կամ ազդեցություն կարող էին ունենալ:

2001թ. հունիսի 13-ի օրենքի առնչությամբ Դատարանն ընդգծում է, որ համաձայն դրա խորագրի՝ այն նպատակ ունի ամրապնդելու ճնշումներն ու արգելքները՝ մարդու իրավունքներն և ազատությունները ոտնահարող աղանդավորական շարժումների դեմ: Դատարանն իր առջև խնդիր չի դրել in abstracto արտահայտվել օրենսդրության մասին, հետևաբար՝ որևէ տեսակետ չի կարող ունենալ Կոնվենցիայի և նոր օրենքի դրույթների համապատասխանության վերաբերյալ (Ֆենդլեյն

ընդդեմ Միացյալ Թագավորության վճիռը, 1997թ. փետրվարի 25, Որոշումների ու վճիռների հավաքածու,1997-I, 67): Քանի որ Դատարանն զբաղվում է աղանդների խնդրով, որոնց որևէ սահմանում չի տալիս, այդ օրենքով նախատեսվում է վերջիններիս անկումը, բայց այդ վճիռը կարող է կայացվել միայն դատական ճանապարհով, և քանզի որոշ նախադրյալներ գտնվեցին, հատկապես երբ, աղանդների առաջնորդները հանդիսացան վերը թվարկած իրավախախտումների վերջնական քրեական դատավճռի մեղադրյալները, ապա, իրականում, հայցվորը չպետք է դժգոհեր և բողոքեր: Օրենսդիրն, ով մտահոգվում էր հասարակությանը հուզող խնդրի կարգավորմամբ, նպատակ չունի ներկայացնել հայցվորի կողմից՝ իրավախախտումների ենթարկվելու հավանականությունը: Բացի այդ, հայցվորը չէր կարող առանց վարանումների պարծենալ այն հանգամանքով, որ ինքը մարդու իրավունքներին սպառնացող շարժում չի ներկայացնում և միաժամանակ իրեն համարել այդ օրենքի կիրառության թեկուզ պոտենցիալ տուժող:

Այստեղից հետևում է, որ հայցվորը չի կարող համարվել տուժող՝ համաձայն Կոնվենցիայի 34-րդ հոդվածի, և իր ներկայացրած հայցադիմումն ամբողջապես պետք է անընդունելի հայտարարել՝ ըստ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1, 3 և 4 կետերի:

Ահա այս պատճառները հիմք ընդունելով՝ Դատարանը միաձայն *հայտարարում* է հայցադիմումն անընդունելի:

Ա. Բ. Բակա **Նախագահ**
Տ. Լ. Ըլի **դատարանի քարտուղար**

§ 2. ՀՀ սահմանադրական դատարանի որոշումը

2000 թվականի նոյեմբերի 4-ին Հռոմում ստորագրված՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիային կից թիվ 12 արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով

Քաղ. Երևան 17 սեպտեմբերի, 2004 թվականի

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ հետեւյալ կազմով.

սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանի,

սահմանադրական դատարանի անդամներ Ֆ. Թոխյանի, Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի, Մ. Սկյանի (զեկուցող),

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Դ. Հարությունյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետի, 101 հոդվածի 1 կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5 հոդվածի 2 կետի, 25 հոդվածի 1 կետի և 56 հոդվածի,

դռնբաց նիստում քննեց «2000 թվականի նոյեմբերի 4-ին Հռոմում ստորագրված՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիային կից թիվ 12 արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

Լսելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի բացատրությունները, հետազոտելով Արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՊԱՐԶԵՑ.**

1. Քննության առարկա Արձանագրությունը Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների կողմից ստորագրման համար բացվել է 2000թ. նոյեմբերի 4-ին՝ Հռոմում: Արձանագրության նպատակն է բոլոր անձանց իրավահավասարության և խտրականության արգելման՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով նախատեսված երաշխիքների ամրապնդումը:

Հայաստանի Հանրապետության կողմից արձանագրությունն ստորագրվել է 2004թ. հունիսի 18-ին՝ Ստրասբուրգում:

2. Արձանագրությունը հիմնվում է մարդու իրավունքների այն հիմնարար սկզբունքի վրա, ըստ որի՝ բոլորը հավասար են օրենքի առջև և օրենքով հավասար պաշտպանության իրավունք ունեն:

Արձանագրությամբ շեշտադրվում է, որ խտրականության արգելման սկզբունքը չի խոչընդոտում Պայմանավորվող պետություններին՝ ձեռնարկելու լիակատար և արդյունավետ հավասարության ապահովմանն ուղղված միջոցառումներ՝ պայմանով, որ այդ միջոցառումներն ունենան օբյեկտիվ և ողջամիտ արդարացում:

3. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է օրենքով սահմանված ցանկացած իրավունքից օգտվելն ապահովել առանց սեռի, ռասայի, գույնի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ կարծիքի, ազգային կամ սոցիալական ծագման, ազգային փոքրամասնության պատկանելու, սեփականության, ծննդի կամ այլ կարգավիճակի վրա հիմնված խտրականության:

Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է նաև ապահովել, որպեսզի որևէ պետական մարմնի կողմից անձի նկատմամբ չդրսևորվի խտրական վերաբերմունք՝ նշված որևէ հիմքով:

4. Խտրականության համընդհանուր արգելումն ամրագրող՝ Արձանագրության 1-ին հոդվածը և արձանագրության տարածքային կիրառումը կարգավորող 2-րդ հոդվածը Կոնվենցիայի մասնակից պետությունների հարաբերություններում դիտվում են որպես Կոնվենցիայի լրացուցիչ հոդվածներ, և Կոնվենցիայի բոլոր դրույթները կիրառվում են համապատասխանաբար:

5. Արձանագրության նախաբանում հղում է կատարվում օրենքի առջև բոլորի հավասարության և օրենքով հավասար պաշտպանության սկզբունքին: Թեև իրավահավասարության սկզբունքը բացահայտ կերպով ամրագրված չէ ոչ Կոնվենցիայի՝ խտրականությունն արգելող 14 հոդվածում և ոչ էլ Արձանագրության մեջ, այնուամենայնիվ, այդ

սկզբունքը սերտորեն առնչվում է խտրականության արգելման սկզբունքին, և իրավահավասարության սկզբունքի խախտումը հանդիսանում է խտրականություն, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է օբյեկտիվ և ողջամիտ հիմնավորում:

Նախաբանում հղում է կատարվում նաև այն միջոցառումներին, որոնք Պայմանավորվող կողմերը կարող են ձեռնարկել լիակատար և արդյունավետ հավասարություն ապահովելու նպատակով, և միաժամանակ շեշտադրվում է, որ խտրականության արգելման սկզբունքը չի խոչընդոտում նման միջոցառումների իրականացմանը՝ պայմանով, որ այդ միջոցառումներն ունենան օբյեկտիվ և ողջամիտ արդարացում: Այն փաստը, որ կան անձանց որոշակի խոցելի խմբեր, և գոյություն ունեն de facto անհավասարություններ, կարող է դիտվել որպես որոշակի արտոնություններ սահմանող միջոցառումների օբյեկտիվ և ողջամիտ արդարացում:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նշել այն, որ խտրականության հասկացության բովանդակությունը ճշգրտվել և հստակեցվել է **Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած նախադեպային իրավունքում:**

Ըստ Եվրոպական դատարանի՝ ցանկացած տարբերակում կամ տարբերություն չէ, որ կարելի է խտրականություն համարել: Մասնավորապես, **Աբդուլազիզը, Քաբալեսը և Բալկանդալին ընդդեմ Միացյալ Թագավորության** գործով 1985թ. մայիսի 28-ի վճռում Եվրոպական դատարանը նշել է. **«տարբերակումը կամ տարբերությունը հանդիսանում է խտրական, եթե այն չունի օբյեկտիվ և ողջամիտ արդարացում, այսինքն՝ եթե այդ տարբերակումը կամ տարբերությունը չի հետապնդում իրավաչափ նպատակ կամ համաչափ չէ հետապնդվող իրավաչափ նպատակին»:**

Համանման դիրքորոշում է ամրագրվել նաև **Դարբին ընդդեմ Շվեդիայի**, 1990թ. հոկտեմբերի 30 /կետ 31/, **Կարլեյնզն ընդդեմ Գերմանիայի**, 1994թ. հուլիսի 18 /կետ 24/, **Շուլեր - Զգրագենն ընդդեմ Շվեյցարիայի,** 1993թ. հունիսի 24 /կետ 67/ Եվրոպական դատարանի վճիռներում:

6. Խտրականությունն արգելող ընդհանուր բնույթի դրույթ ամրագրված է նաև Կոնվենցիայի 14 հոդվածում: Ընդ որում, Արձանագրության 1-ին հոդվածով սահմանված՝ խտրականության արգելման հիմքերը նույնն են, ինչ Կոնվենցիայի 14 հոդվածով սահմանված հիմքերը: Սա-

կայն, չնայած դրան՝ Արձանագրության 1-ին հոդվածը երաշխավորում է լրացուցիչ պաշտպանություն ընդդեմ խտրականության:

Արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորվող լրացուցիչ պաշտպանությունը դրսևորվում է հետևյալում.

- եթե Կոնվենցիայի 14 հոդվածով պետությունները պարտավորվում են ապահովել Կոնվենցիայով նախատեսված իրավունքներից օգտվելը՝ առանց այդ հոդվածով նախատեսված որևէ հանգամանքով պայմանավորված խտրականության, ապա Արձանագրության 1-ին հոդվածով պետությունները պարտավորվում են առանց խտրականության ապահովել իրենց ներպետական օրենսդրությամբ նախատեսված բոլոր իրավունքներից օգտվելը,
- անձը պաշտպանվում է՝ ցանկացած պետական մարմնի կողմից ցանկացած ձևով դրսևորվող խտրական վերաբերմունքից:

7. Քննության առարկա Արձանագրությունն ստեղծում է միջազգային իրավական երաշխիք ՀՀ Սահմանադրության 15 եւ 16 հոդվածներում ամրագրված՝ բոլոր անձանց իրավահավասարության և խտրականության արգելման սկզբունքների իրացման և Սահմանադրության 4 հոդվածի պահանջների կատարումը երաշխավորելու համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետով, 102 հոդվածի առաջին և երրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5 հոդվածի 2 կետով, 67 և 68 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ.**

1. 2000 թվականի նոյեմբերի 4-ին Հռոմում ստորագրված՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիային կից թիվ 12 արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է, վերանայման ենթակա չէ, ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

17 սեպտեմբերի, 2004 թվականի **ՍԴՈ-508**

§ 3. Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշում

12 օգոստոսի, 2002 թվականի N 478-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԿՐՈՆԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետությունում կրոնի ոլորտում իրականացվող պետական քաղաքականության արդյունավետության բարձրացման նպատակով՝

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր կրոնի հարցերով խորհուրդ և հաստատել դրա կազմը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր կրոնի հարցերով խորհրդի կանոնադրությունը՝ համաձայն N 2 հավելվածի:

ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ
2002 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 12-ԻՆ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
վարչապետի 2002 թվականի
օգոստոսի 12-ի N 478-Ն որոշման

ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԿՐՈՆԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՐԴԻ

ՀՀ վարչապետ (խորհրդի նախագահ)
ՀՀ վարչապետի խորհրդական (խորհրդի նախագահի տեղակալ)
ՀՀ Նախագահի աշխատակազմի ներկայացուցիչ (համաձայնությամբ)
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր (համաձայնությամբ)
ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչ
ՀՀ սոցիալական ապահովության նախարարության ներկայացուցիչ
ՀՀ կրթության և գիտության նախարարության ներկայացուցիչ
ՀՀ առողջապահության նախարարության ներկայացուցիչ
ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարության ներկայացուցիչ
ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ներկայացուցիչ
ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչ
ՀՀ արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչ
Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, Արարատյան Հայրապետական թեմի և Արցախի թեմի մեկական ներկայացուցիչ (համաձայնությամբ)
Հայաստանի Հայ Կաթողիկե եկեղեցու ներկայացուցիչ (համաձայնությամբ)
Հայաստանյայց Ավետարանական եկեղեցու ներկայացուցիչ (համաձայնությամբ)
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ներկայացուցիչ
ՀՀ գլխավոր դատախազության ներկայացուցիչ (համաձայնությամբ)
ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական հարցերի վարչության պետ (խորհրդի քարտուղար)

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
վարչապետի 2002 թվականի
օգոստոսի 12-ի N 478-Ն որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԿՐՈՆԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՐԴԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր կրոնի հարցերով խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ) խորհրդակցական մարմին է, որն ստեղծվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2002 թվականի օգոստոսի 12-ի «Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր կրոնի հարցերով խորհուրդ ստեղծելու մասին» N 478-Ն որոշմամբ:

2. Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան:

II. ԽՈՐՀՐԴԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

3. Խորհրդի հիմնական խնդիրներն ու գործառույթներն են՝

ա) Հայաստանի Հանրապետությունում կրոնի ոլորտում իրականացվող պետական քաղաքականության արդյունավետության բարձրացմանն ուղղված Հայաստանի Հանրապետության վարչապետին համապատասխան առաջարկություններ ներկայացնելը.

բ) հակաօրինական գործունեություն ծավալող աղանդավորական կազմակերպությունների (միավորումների) գործունեության կանխարգելման միջոցառումների մշակումը.

գ) հասարակության մեջ կրոնական կազմակերպությունների և ազգային փոքրամասնությունների հանդուրժողական ու կառուցողական համակեցությանը նպաստումը.

դ) Հայաստանի Հանրապետությունում կրոնական կազմակերպությունների գործունեության մասին Հայաստանի Հանրապետության վարչապետին տեղեկություններ ներկայացնելը.

ե) կրոնական կազմակերպությունների և ազգային փոքրամասնությունների միջև ծագած վիճահարույց հարցերի իրավական լուծման վերաբերյալ առաջարկությունների մշակումը.

զ) Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու միջև փոխհարաբերությունների կարգավորմանը նպաստելը.

է) կրոնի ոլորտին վերաբերող՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի պաշտոնական հանդիպումների համար անհրաժեշտ տեղեկատվության նախապատրաստումը.

ը) կրոնի ոլորտին առնչվող՝ իր իրավասության սահմաններում միջազգային պայմանագրերի, նախագծերի մշակմանն ու քննարկմանը մասնակցությունը.

թ) Հայաստանի Հանրապետությունում կրոնական և ազգային փոքրամասնությունների փոխհարաբերությունների կարգավորման, ինչպես նաև այդ ոլորտների օրենսդրության կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների մշակումը:

III. ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Խորհուրդը գլխավորում և նիստերը վարում է Հայաստանի Հանրապետության վարչապետը: Հայաստանի Հանրապետության վարչապետի հանձնարարությամբ խորհրդի նիստերը կարող է վարել խորհրդի նախագահի տեղակալը:

5. Խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են ըստ անհրաժեշտության, առնվազն երեք ամիսը մեկ անգամ: Խորհրդի նիստերին առանձին դեպքերում հրավիրյալի կարգավիճակով կարող են մասնակցել տարբեր հասարակական և կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

6. Խորհրդի նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է խորհրդի անդամների պարզ մեծամասնությունը:

Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

Ձայների հավասարության դեպքում խորհրդի նախագահի ձայնը վճռորոշ է:

7. Խորհրդի նախագահը, իսկ նախագահի հանձնարարությամբ նաև՝ նախագահի տեղակալը՝

ա) հրավիրում է հանձնաժողովի նիստեր և նախագահում դրանք.

բ) կազմակերպում է խորհրդի աշխատանքները և ղեկավարում դրանց ընթացիկ գործունեությունը.

գ) նշանակում է խորհրդի նիստի անցկացման օրը, վայրը, ժամը և հաստատում օրակարգը.

դ) ստորագրում է խորհրդի որոշումները և դրա գործունեության հետ առնչվող մյուս փաստաթղթերն ու գրագրությունները.

ե) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

8. Խորհրդի քարտուղարը՝

ա) նախապատրաստում է հանձնաժողովի նիստը և դրա օրակարգը, կազմում նիստի արձանագրությունը.

բ) խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում օգնում է խորհրդին ընթացիկ գործերում, ապահովում գործավարությունը.

գ) վերլուծում է հանձնաժողովի գործունեության ոլորտին վերաբերող հարցերը և արդյունքների մասին զեկուցում խորհրդի նախագահին.

դ) նախապատրաստում է առաջարկություններ խորհրդի աշխատանքային ծրագրերի վերաբերյալ:

IV. ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

9. Խորհրդի գործունեությունը դադարում է Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՎԱՀԵ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ
ԱՐԹՈՒՐ ՉԱԽՈՅԱՆ

ՀՈԳԵՎՈՐ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Խմբագիր՝ **Արթուր սարկավագ ՍԱՐԳՍՅԱՆ**
Ընդհ. խմբագիր՝ **Արմինե ՆԱԶԱՐՅԱՆ**
Տեխն. խմբագիր՝ **Արարատ ԹՈՎՄԱՍՅԱՆ**
Կազմի ձևավորող՝ **Գագիկ ՍԱՐՈՅԱՆ**

«Անտարես» հրատարակչատուն
Երևան 0009, Մաշտոցի 50ա/1
Հեռ.՝(+374 10) 58 10 59, 56 15 26
Հեռ./ֆաքս՝ (+374 10) 58 76 69
antares@antares.am
www.antares.am